



Article 13. Participation of society

1. Each State Party shall take appropriate measures, within its means and in accordance with fundamental principles of its domestic law, to promote the active participation of individuals and groups outside the public sector, such as civil society, non-governmental organizations and community-based organizations, in the prevention of and the fight against corruption and to raise public awareness regarding the existence, causes and gravity of and the threat posed by corruption. This participation should be strengthened by such measures as:

- (a) Enhancing the transparency of and promoting the contribution of the public to decision-making processes;
- (b) Ensuring that the public has effective access to information;
- (c) Undertaking public information activities that contribute to non-tolerance of corruption, as well as public education programmes, including school and university curricula;

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Գլուխ II-ի (Կանխարգելում) և Գլուխ V-ի (Ակտիվների վերականգնում) իրականացման վերաբերյալ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա
Իրավաբանների հայկական ասոցիացիա

Նպատակ ունենալով նպաստել Հայաստանում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի երկրորդ փուլի իրականացման մշտադիտարկման աշխատանքներին, Իրավաբանների հայկական ասոցիացիան մշակել է սույն այլընտրանքային զեկույցը՝ օգտագործելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիայի և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության նախագծած ուղեցույցը և զեկույցի ձևանմուշը: Զեկույցի պատրաստմանն աջակցել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիան՝ Նորվեգիայի զարգացման համագործակցության գործակալության (Նորադ) և Դանիայի արտաքին գործերի նախարարության (Դանիդա) կողմից տրամադրված ֆինանսավորմամբ: Սույն զեկույցում ներկայացված են Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ուսումնասիրության արդյունքները, որոնք կարող են չարտացոլել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիայի և սույն զեկույցի պատրաստումը ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետները:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Այս նախագծի իրականացումը պահանջում էր զգալի աշխատանք, մեծածավալ հետազոտության անցկացում և նվիրվածություն: Իրականացումը հնարավոր է դարձել բազմաթիվ անհատների և կազմակերպությունների աջակցության շնորհիվ: Ուստի ցանկանում ենք մեր անկեղծ երախտագիտությունը հայտնել բոլորին:

Նախևառաջ, երախտապարտ ենք ՄԱԿ-ի Կոոուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիային՝ նրանց ֆինանսական և տեխնիկական օժանդակության, ինչպես՝ նախագծի իրականացման հետ կապված անհրաժեշտ ուղեցույցներ տրամադրելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ կենտրոնական բանկին, ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ դատական դեպարտամենտին և ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակին, ինչպես նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամներին՝ նախագծի իրականացման ընթացքում ցուցաբերած տեխնիկական օժանդակության, անհրաժեշտ տեղեկությունների և փորձի տրամադրման համար:

Ցանկանում ենք նշել, որ ձեր աջակցությունը կարևոր դեր ունեցավ զեկույցի հաջող մշակման գործում:

Մեր կողմից ներդրվել են բավանակաչափ ջանքեր՝ սույն զեկույցում ներառված տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու համար: Բոլորը տեղեկությունները ձեռք բերված են 2020 թվականի դեկտեմբերի 2-ի դրությամբ, և դրանք դիտարկվում են ճշմարիտ՝ ամբողջ ծավալով:

Այլընտրանքային զեկույցը պատրաստել են փորձագետ Սյուզաննա Սողոմոնյանը, խորհրդատուներ Կարեն Զադոյանը և Մարիամ Զադոյանը:

Գրախոսողներ՝ Դանելլա Նյուման և Մաթիաս Հյուբեր, ՄԱԿ-ի Կոոուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիա

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1995 թ.-ին, նպատակ ունենալով ստեղծել հզոր քաղաքացիական հասարակություն և օժանդակել Հայաստանի՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության զարգացմանը: Կազմակերպությունը իր ներդրումն է ունեցել հակակոռուպցիոն և գողացված ակտիվների վերադարձման, մարդու իրավունքների և գենդերային հավասարության, լավ կառավարման և օրենքի գերակայության ոլորտներում Հայաստանի հանրային քաղաքականությունների մշակման գործընթացում:

© Իրավաբանների հայկական ասոցիացիա 2021

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,

Նալբանդյան 7, գրասենյակային տարածք 2,

Հեռախոս: +374 10 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Ինտերնետային կայք՝ <https://armla.am/>

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	1
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
2. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ	4
3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	15
4. ԳԼՈՒԽ II. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ	19
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 5. Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականությունը և պրակտիկան	19
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 6. Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին կամ մարմիններ	26
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 7. Հանրային հատվածը	31
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 8. Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնադրերը	38
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 9. Հանրային գնումները և պետական ֆինանսների կառավարում	47
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 10. Հրապարակային հաշվետվությունը	57
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 11. Դատական և դատախազական մարմիններին վերաբերող միջոցներ	61
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 12. Մասնավոր հատված	65
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 13. Հասարակության մասնակցությունը	70
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 14. Փողերի լվացման կանխարգելման միջոցներ	75
5. ԳԼՈՒԽ V. ԱԿՏԻՎՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ	79
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 51. Ընդհանուր դրույթներ	79
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 52. Հանցագործություններից ստացված եկամուտների փոխանցումների կանխարգելումը և բացահայտումը	82
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 53. Գույքի անմիջական վերադարձմանն ուղղված միջոցները	85
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 54. Բռնագանձման գործում միջազգային համագործակցության միջոցով գույքի առգրավման մեխանիզմները	87
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 55. Բռնագանձման նպատակով միջազգային համագործակցությունը	95
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 56. Հատուկ համագործակցություն	100
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 57. Ակտիվները վերադարձնելը և դրանք տնօրինելը	100
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 58. Օպերատիվ ֆինանսական տեղեկատվություն հավաքող ստորաբաժանումները	102
ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 59. Երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր և պայմանավորվածություններ	103
6. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	106
7. ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿ	110
8. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	111

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԳՐԵԿՈ	ԵՄ Կոռուպցիայի դեմ պետությունների խումբ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԻՀԱ	«Իրավաբանների հայկական ասոցիացիա»
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ ԿԴԿ	Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա
ՄԱԹՀՊԳ	ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն
StAR նախաձեռնություն	Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնություն (ՄԱԹՀՊԳ / Համաշխարհային Բանկ)

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրել է 2005 թվականի մայիսի 19-ին և վավերացրել՝ 2007 թվականի մարտի 8-ին:

Սույն զեկույցում իրականացվում է այլընտրանքային գնահատում Հայաստանում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (ԿԴՊ) 2-րդ (Կանխարգելման միջոցները) և 5-րդ գլուխների (Ակտիվները վերադարձնելու միջոցները) հոդվածների կատարման վերաբերյալ: Ձեկույցը նախատեսված է որպես ՄԱԿ-ի ԿԴԿ-ի այս գլուխների իրականացման գնահատման ընթացիկ գործընթացին օժանդակող ներդրում: Հայաստանը վիճակահանության արդյունքում ընտրվել է ՄԱԿ-ի ԿԴԿ-ի գնահատման խմբի կողմից երկրորդ փուլի երրորդ տարում (2018 թ.) գնահատվելու համար:

Շրջանակը. Ձեկույցը հիմնականում կենտրոնացած է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի այն հոդվածներին, որոնք վերաբերում են կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականությանը և պրակտիկային (հոդված 5), կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմիններին (հոդված 6), հանրային հատվածին (հոդված 7.1), վարքագծի կանոնադրերին, շահերի բախմանը և հայտարարագրերին (հոդվածներ 7, 8 և 12), հաղորդում տրամադրելու մեխանիզմներին և ազդարարների պաշտպանությանը (հոդվածներ 8.4 և 13.2), քաղաքական թեկնածուների և կուսակցությունների ֆինանսավորմանը (հոդված 7.3), պետական գնումներին (հոդված 9.1), պետական ֆինանսների կառավարմանը (հոդված 9), դատական և դատախազական մարմիններին (հոդված 11), մասնավոր հատվածի թափանցիկությանը (հոդված 12), տեղեկատվության մատչելիությանը և հասարակության մասնակցությանը (հոդվածներ 10 և 13.1), փողերի լվացման կանխարգելման միջոցներին (հոդված 14), փողերի լվացման դեմ պայքարի միջոցներին (հոդվածներ 52 և 58), գույքի անմիջական վերադարձմանն ուղղված միջոցառումներին (հոդվածներ 53 և 56), բռնագրավման մեխանիզմներին (հոդված 54), բռնագրավման նպատակով միջազգային համագործակցությանը (հոդվածներ 51, 54, 55, 56 և 59) և ակտիվների վերադարձնելուն ու դրանց տնօրինմանը (հոդված 57):

Կառուցվածքը. Ձեկույցը սկսվում է գործադիր ամփոփումով, որը ներառում է գնահատման գործընթացի արդյունքների հակիրճ նկարագիրը, եզրակացություններն ու առաջարկությունները, տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև տեղեկություններ ՄԱԿ-ի ԿԴԿ-ի ընտրված հոդվածների իրականացման և կիրառելիության վերաբերյալ: Հաջորդ մասը առավել մանրամասն ներկայացնում է Հայաստանում վերը նշված կոնվենցիոն դրույթների կատարման վերաբերյալ գնահատման գործընթացի արդյունքները, ինչպես նաև տեղեկատվության հասանելիության խնդիրները: Այնուհետև, գնահատվում է Կոնվենցիայի իրականացումը, և բերվում են հաջողված փորձի և թերությունների օրինակներ: Վերջում տրված են առաջնահերթ գործողությունների վերաբերյալ առաջարկություններ, որոնք ուղղված են Հայաստանում ՄԱԿ-ի ԿԴԿ-ի իրականացման բարելավմանը:

Մեթոդոլոգիա. Ձեկույցը պատրաստել են Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ ՄԱԿ-ի ԿԴԿ-ի կոալիցիայի տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ: Խումբը աշխատել է տեղեկատվություն ստանալ պետական մարմիններից և երկրորդ փուլի հաստատել պետական պաշտոնյաների հետ: Այս երկրորդ փուլի շրջանակներում զեկույցի նախագիծը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը, և վերջինիս դիտարկումները հաշվի են առնվել զեկույցի վերջնականացման փուլում: Ձեկույցը պատրաստվել է հետևյալ

մեթոդների համատեղման արդյունքում. տվյալների հավաքագրում, ներառյալ գրասենյակային հետազոտություններ (desk review), թիրախային հարցազրույցներ, տեղեկատվություն ստանալու հարցումներ, առանցքային տեղեկատվությունների հետ հարցազրույցներ և տվյալների վերլուծություն:

Զեկույցը պատրաստվել է օգտագործելով ՄԱԿ-ի ԿԴԿ-ի կոալիցիայի և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության կողմից ՔՀԿ-ների կիրառման համար նախագծած ուղեցույցները և զեկույցի կառուցվածքային ձևանմուշը: Այս գործիքները արտացոլում են ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի (ՄԱԹՀՊԳ) ստուգաթերթի պարզեցված տարբերակը և ենթադրում են համեմատաբար կարճ գնահատականներ՝ ի տարբերություն ինքնագնահատման վերաբերյալ մանրամասն տեղեկություններ պարունակող պաշտոնական զեկույցի: Զեկույցի ձևանմուշը ներառում էր գնահատման գործընթացի վերաբերյալ մի շարք հարցեր, իսկ իրականացման բաժնում՝ նախատեսում էր ներկայացնել ՄԱԿ-ի ԿԴԿ-ի 2-րդ (Կանխարգելման միջոցները) և 5-րդ գլուխների (Ակտիվները վերադարձնելու միջոցները) հոդվածներին վերաբերող հաջողված փորձի օրինակներ և վեր հանել բարելավման կարիք ունեցող ոլորտները:

Զեկույցը պատրաստելիս հեղինակները հաշվի են առել Հայաստանի՝ վերջերս պատրաստած ինքնագնահատման զեկույցը, որը 2018 թվականին հրապարակել է ՀՀ արդարադատության նախարարությունը:¹

¹ Հայաստանում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի իրականացման գնահատման երկրորդ փուլի գործընթացի մոնիթորինգի մեխանիզմի ինքնագնահատման ստուգաթերթ: 2-րդ փուլ, հասանելի է այստեղ. <https://www.moj.am/storage/uploads/00.UNCAC_IRM_2nd_circle.pdf> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

2. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

ՄԱԿ-ի ԿԴԿ-ի իրականացման վերաբերյալ գնահատման երկրորդ փուլը մեկնարկել է 2015 թվականին, իսկ երկրորդ փուլի շրջանակներում Հայաստանի կատարողականի գնահատումը սկսվել է 2018 թվականին: Հայաստանը հիմնականում կատարել է ՄԱԿ-ի ԿԴԿ-ի շրջանակներում ստանձնած իր պարտավարությունները, ինչի մասին վկայում է 2018 թվականին հրապարակված ինքնագնահատման ստուգաթերթը, որին հաջորդեց միջազգային գնահատողների պաշտոնական այցը Հայաստան 2019 թվականին, ինչպես նաև միջազգային գնահատողների կողմից տրված զեկույցը հրապարակելու պետության հանձնառությունը: Գնահատման գործընթացը ՔՀԿ-ների մասնակցության առումով ավելի քիչ մասնակցային էր ինքնագնահատման փուլում, սակայն ավելի ներառական միջազգային գնահատողների պաշտոնական այցի ժամանակ, որտեղ ՔՀԿ-ները հանդիպումից զատ, վերջիններիս տրամադրել են նաև լրացուցիչ նյութեր:

Սույն զեկույցի հիմնական արդյունքները հակիրճ ներկայացված են գործադիր ամփոփման մեջ:

ՀՀ չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հանդիսանում է Հայաստանի հիմնական հակակոռուպցիոն քաղաքականությունը: Այս ռազմավարությունն առանձնանում է նրանով, որ կառավարությունը հաշվի է առել մասնագիտացված ՔՀԿ-ների առաջարկությունները և առաջին անգամ ռազմավարությունը մշակել է՝ հիմնվելով կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնասյուների վրա՝ կոռուպցիայի կանխարգելում, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում, հակակոռուպցիոն կրթություն և իրազեկության բարձրացում: Հայաստանում չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը կարելի է բնութագրել որպես ներառական, քանի որ, ի տարբերություն նախորդ հակակոռուպցիոն քաղաքականությունների, ՔՀԿ-ները ուղղակիորեն ներգրավված էին մշակման գործընթացում: Անդրադառնալով ռազմավարության կատարողականին, պետք է նշել, որ 2019 թվականին և 2020 թվականի առաջին կիսամյակին կատարված գործողությունների և առաջընթացի վերաբերյալ զեկույցները ավելի շատ քանակական տվյալներ են պարունակում, քան՝ որակական տվյալներ:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը ընդունվել է 2017 թվականին, իսկ հանձնաժողովի անդամներն ընտրվել են 2019 թվականին: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) ինքնավար, կոլեգիալ մարմին է, ունի հինգ անդամ և պատասխանատու է կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության գործառնությունների իրականացման համար: 2019 թվականին ԿԿՀ-ի մասին օրենքում կատարվեցին լրացումներ և փոփոխություններ, որի արդյունքում անկախ մրցութային խորհրդի կողմից ԿԿՀ անդամների նշանակման կարգը հանվեց: Այս փոփոխությունների ուժով՝ ԿԿՀ-ը ներկայիս կազմը կազմավորվել է ՀՀ կառավարության, Խորհրդարանի երեք խմբակցությունների և Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) կողմից անդամների ուղղակի առաջադրմամբ՝ առանց մրցույթի: Արդյունքում, ԿԿՀ-ն ձևավորվել է բացառապես քաղաքական պայմանավորվածության արդյունքում՝ առանց մարմնի ինստիտուցիոնալ անկախության ապահովման, մինչդեռ ԿԿՀ-ն մասնագիտացված կառույց է, և նրա նշանակումները պետք է լինեն բացառապես մասնագիտական ոլորտում, այլ ոչ թե՝ քաղաքական: Մասնագիտացված ՔՀԿ-ները բազմիցս նշել են, որ ԿԿՀ-ի առաջին կազմի ձևավորումը՝ ոչ մրցակցային,

քաղաքական համաձայնությունների միջոցով, խիստ խոցելի է: Նույն մտահոգությունները արտացոլվել են նաև ԳԲԵԿՈ-ի Հայաստանի վերաբերյալ 4-րդ գնահատման զեկույցում:

Կոռուպցիայի կանխարգելման այլ կարևոր հիմնախնդիրներ են քաղաքացիական ծառայության և քաղաքական կուսակցությունների համակարգերի ապահովումն ու ամրապնդումը: Այնուամենայնիվ, քաղաքացիական ծառայողների աշխատանքի ընդունման գործընթացը, ինչպես նաև նրանց նշանակումների վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացները թափանցիկ չեն: Քաղաքացիական հասարակության ոչ մի ներկայացուցիչ մրցութային հանձնաժողովի անդամ կամ դիտորդ չէ: Թույլ է վերահսկողությունը քաղաքական կուսակցությունների գործունեության և դրանց ֆինանսավորման նկատմամբ, ինչպես նաև խախտումների համար քաղաքական կուսակցությունների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու պրակտիկան: Առկա չէ որևէ անկախ մարմին, որը վերահսկում է քաղաքական կուսակցությունների գործունեությունը և ապահովում դրանց թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Պաշտոնատար անձանց բարեվարքությունը կարգավորվում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, որն ընդգրկում է վարքագծի կանոններ, որոնք վերաբերում են անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին, շահերի բախմանը և նվերներին: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները պարտադիր են, և խախտումը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության, որոնք նախաձեռնում են էթիկայի հանձնաժողովները և ԿԿՀ-ն: Այդուհանդերձ, սահմանված վարքագծի կանոնները հաճախ չեն պահպանվում, քանի որ էթիկայի հանձնաժողովները չունեն անհրաժեշտ կարողություններ դրանք գործնականում ապահովելու համար: Հանրային ծառայողների տիպային վարքագծի կանոնների մոդելի, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների, խորհրդարանի անդամների և քննիչների վարքագծի կանոնների մշակումը ներառված է ներկայիս կառավարության ծրագրում: Բացի այդ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը նախատեսում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի առկայություն համապատասխան մարմիններում: 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվել են բարեվարքության հարցերով 43 կազմակերպիչներ: Սակայն, որպես այդպիսին առկա չէ բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքը և կատարողականը համակարգող և վերահսկող կենտրոնացված կամ ապակենտրոնացված վերահսկիչ մարմին, և վերը նշված օրենքի իմաստով, բարեվարքության հարցերով կազմակերպիչները ավելի շուտ «կազմակերպիչներ» են, քան որոշումներ կայացնողներ:

ԿԿՀ-ն վարում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման ռեեստրը, իրականացնում է ներկայացված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, հայտարարագրերի վերլուծություն և գույքի չհայտարարագրման կամ թերի հայտարարագրման համար կիրառում է օրենսդրությամբ սահմանված վարչական պատասխանատվություն: Վերջերս իրականացված փոփոխությունների արդյունքում ընդլայնվել են ԿԿՀ-ի լիազորություններն՝ ուղղված հայտարարագրերի պատշաճ ստուգմանն ու վերլուծությանը, որը ներառում է նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հասանելիություն: Կոռուպցիոն տեսանկյունից ռիսկային ոլորտներում, ինչպիսիք են ոստիկանությունը, առողջապահությունը և այլն, հանրային ծառայություններ մատուցող մի շարք ոչ բարձրաստիճան պաշտոնատար անձինք չունեն հայտարարագրման

պարտականություն: Բացի այդ, ընտանիքի ոչ բոլոր անդամներն են պարտավոր ներկայացնել հայտարարագրեր, ինչը հանգեցնում է չարաշահումների, և արդյունքում՝ պաշտոնատար անձանց փաստացի պատկանող գույքը և եկամուտները գրանցվում են հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն չունեցող ընտանիքի անդամների անուններով:

2020 թվականի Խորհրդարանը մի շարք օրենքներ ընդունեց, որոնք ուղղված են դատավորների բարեվարքության գնահատման իրավական հիմքի ապահովմանը, նրանց ունեցվածքի գնահատմանը, դատավորների արհեստավարժությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և անկողմնակալությունը գնահատելուն, ինչպես նաև ԲԴԽ անդամի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելուն: Փոփոխությունները նախատեսում էին դատավորների Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի և այլ հանձնաժողովների ձևավորման նոր կարգ: Յուրաքանչյուր հանձնաժողովում ներգրավված են ՔՀԿ ոլորտի երկու ոչ դատավոր անդամներ: Սակայն, էթիկայի և կարգապահական հանձնաժողովում առկա է դատավոր անդամների բացարձակ մեծամասնություն և ոչ դատավոր անդամների փոքր թիվ, ինչը կարող է նպաստել հանձնաժողովում ոչ դատավոր անդամների անարդյունավետ աշխատանքին և նրանց մասնակցությունը դարձնել ձևական: Մեկ այլ թերություն այն է, որ ԿԿՀ խորհրդատվական եզրակացությունները բարձրաստիճան պաշտոնյաների (օրինակ՝ դատավորներ, դատախազներ) բարեվարքության ստուգման վերաբերյալ, ենթակա չեն հրապարակման:

Ազդարարման (ներքին և արտաքին) ընթացակարգերը, ազդարարների իրավունքները, ազդարարման հետ կապված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կառույցների, հանրային նշանակության կազմակերպությունների պարտավորությունները, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանությունը կարգավորվում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում ազդարարողներին խրախուսելու նպատակով «*Qui tam*» պարգևատրման հայեցակարգը, ինչպես նաև չի անդրադառնում մասնավոր հատվածում թույլ տրված խախտումների վերաբերյալ ազդարարարումներին: Գործում են ազդարարման մի քանի էլեկտրոնային հարթակներ (պետության կողմից գործարկվող միասնական «*Ազդարարիր*» հարթակը, ՔՀԿ-ների կողմից գործարկվող «*ԲիզՊաշտպան*» մասնավոր հատվածի համար նախատեսված հարթակը, որը վարում են ԻՀԱ-ն և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան, և «*EmployeeProtect*» աշխատանքային իրավունքների խախտումների մասին հաղորդումների նորաստեղծ հարթակը): Թեև ազդարարման միջոցով արդեն իսկ բացահայտվել են որոշակի կոռուպցիոն դեպքեր և իրականացվել կարևոր բարեփոխումներ, ցուցանիշները ցույց են տալիս, որ հասարակության լայն շերտերի կողմից խախտումների վերաբերյալ ազդարարարելու պատրաստակամությունը ցածր է:

Չնայած «Պետական գնումների մասին» նոր օրենքը պետական գնումների համակարգն ավելի թափանցիկ է դարձնում՝ ընդլայնելով Կառավարության www.procurement.am կայքում գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելիք տվյալների քանակը, սակայն վերջինս չի օգտագործում պայմանագրային տվյալների բաց ստանդարտը: Մեկ այլ լուրջ թերություն է, որ շահերի բախման և իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերում ներառված տվյալների արժանահավատությունը գնահատելու համար մշտադիտարկման հատուկ ընթացակարգը բացակայում է: Սա կարևորում է բաց տվյալների վրա հիմնված հանրությանը մատչելի վերլուծական գործիքների մշակման և հետադարձ կապ ապահովելու մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը՝ գնումների համակարգի

բարեկարքությունը ու արդյունավետությունը բարելավելու նպատակով: Ոչ բոլոր պետական պատվիրատուներն են օգտագործում Էլեկտրոնային գնումների համակարգը (Armeps): Իրավակիրառ պրակտիկայում տվյալների հրապարակման կանոնները հիմնականում պահպանվել են, բացառությամբ Քովիդ-19 համավարակի բռնկման ժամանակ, երբ բժշկական պարագաների հրատապ գնումների դեպքերում դրանց հրապարակման պահանջից շեղումներ են գրանցվել: Չնայած այն հանգամանքին, որ գնումներին մասնակցելու իրավունքի պայմանները և որակավորման չափանիշները, դրանց գնահատման կարգը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, մրցույթի ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերը գործնականում հաճախ հարմարեցված են որոշակի ընկերությունների՝ նրանց հաղթանակն ապահովելու համար: Գրանցվել է նաև ոչ մրցակցային ընթացակարգերի կիրառման աճ: Պետական գնումների բողոքարկման համակարգի անկախությունն ու արդյունավետությունը պարբերաբար կասկածի տակ են դրվում միջազգային դոնոր կազմակերպությունների և ՔՀԿ-ների կողմից: Բացի այդ, Հայաստանում չկա իրական սեփականատերերի միասնական գրանցամատյան, որտեղ բոլոր տեսակի ընկերություններից կպահանջվի հայտնել և հրապարակել իրենց իրական սեփականատերերի մասին տեղեկություններ: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Էլեկտրոնային ռեգիստրը, որը ներառում է ընկերությունների վերաբերյալ որոշ ընդհանուր տեղեկություններ, հասարակության համար ամբողջովին հասանելի չէ:

Պետական բյուջեի ընդունման, մասնավորապես՝ միջնաժամկետ ծախսերի ծրագրի (պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հիմքը) և բուն պետական բյուջեի նախագծի մշակման, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից դրա քննարկման և ընդունման կարգը սահմանված է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով: Բյուջեն, ինչպես նաև դրա ընդունման գործընթացները թափանցիկ են: Ներդրվել է քաղաքացու պարզեցված բյուջեն՝ առցանց ինտերակտիվ բյուջե, որը հանրության համար մատչելի կերպով ներկայացնում է պետական բյուջեում արտացոլված հիմնական տեղեկատվությունը: ՀՀ վարչապետի վերջերս ընդունած որոշումը պարտադրում է պետական, տարածքային կառավարման և ՏԻՄ մարմիններին՝ բյուջեի նախագծի մշակման ընթացքում բյուջեի առաջարկները քննարկել շահագրգիռ ՔՀԿ-ների հետ: Որպես խորհրդարանական վերահսկող մարմին ստեղծվել է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը, որի հիմնական գործառույթը պետական ֆինանսների, մասնավորապես՝ պետական բյուջեի վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելն է: Նշված գրասենյակի արդյունավետությունը կասկածի տակ է դրվել, քանի որ այն չունի անհրաժեշտ աշխատակազմ, պետական բյուջեից անկախ ֆինանսավորում և իր գործառույթները կարգավորող առանձին կանոնադրություն:

Ակտիվները վերադարձնելու հարցը քաղաքական օրակարգում է հայտնվել դեռևս 2018 թվականին՝ Հայաստանում թավշյա հեղափոխությունից հետո: Սակայն, ակտիվների վերադարձի ինստիտուտի բարեփոխումների գործընթացը դանդաղ է ընթանում, քանի որ իրավասու մարմինը՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը միայն վերջերս է ստեղծվել: Ընդունվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը, որը վերաբերում է ակտիվների վերադարձման միայն մեկ եղանակին՝ քաղաքացիական կարգով բռնագանձմանը: Քննություն սկսելու հիմնական իրավական հիմքերից մեկը օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով չհիմնավորված հարստության վերաբերյալ հավաքված տեղեկատվությունն է: Այս առումով առաջին մարտահրավերը ակտիվների վերադարձման վերաբերյալ միասնական

պետական հայեցակարգի բացակայությունն է քաղաքականության մակարդակում, որը կանդրադառնա ակտիվների վերադարձման բոլոր փուլերին և տեսակներին, ներառյալ՝ քրեական կարգով բռնագանձմանը, քաղաքացիական կարգով բռնագրանձմանը և ակտիվների անմիջական վերադարձին: Արդյունքում, ակտիվների վերադարձման իրավական դաշտը, չնայած վերջերս կատարված օրենսդրական բարեփոխումներին, շարունակում է մնալ խրթին և թերի: Ակտիվների վերադարձի համար անհրաժեշտ են մի շարք ընթացակարգային գործողություններ, ինչպիսիք են՝ ակտիվների վերադարձը և բաշխումը, որոնք չեն կարգավորվում ՀՀ օրենսդրությամբ, միջազգային համագործակցության երկկողմ և բազմակողմ համաձայնագրերով: «Քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը մշակվել է դեռ 2019 թվականին և վերաբերում է պետությունների միջև քրեական գործերում իրավական փոխօգնության համապարփակ կարգավորմանը, ներառյալ՝ ակտիվների վերադարձը ծագման երկիր, Խորհրդարանի կողմից դեռևս չի ընդունվել: ՀՀ օրենսդրությունը ՔՀԿ-ներին ակտիվների վերադարձի առնչությամբ դատական հայց ներկայացնելու իրավունք չի վերապահում: Նշվում է, որ Հայաստանը պատրաստվում է կատարելագործել օրենսդրությունը և բարելավել իրավակիրառ պրակտիկան նշյալ և մի շարք այլ խնդիրների շուրջ, սակայն այդ ուղղությամբ իրականացված ջանքերը չեն նկատվում:

Մտահոգություններ կան նաև ակտիվների վերադարձման հարցում իրավասու մարմնի շուրջ, պայմանավորված՝ ոչ համոզիչ փաստարկներով՝ ՀՀ գլխավոր դատախազությանն՝ իր «բացառիկ» բնույթով պայմանավորված իրավասու մարմին նշանակելու վերաբերյալ: Մտահոգությունները ներառում են նաև վերջինիս ձևավորման թափանցիկության ցածր մակարդակը՝ ի հեճուկս այն հանգամանքի, որ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը անցկացրել է բաց մրցույթներ այս ոլորտի դատախազների թեկնածուների ցուցակների համալրման նպատակով: Ուստիս կարևորվում է ակտիվների վերադարձման գրասենյակ ստեղծելու անհրաժեշտությունը, որը կարող է իրականացվել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության բազային հենքի վրա: Կարևոր է նաև, որ գրասենյակը իր մանդատն արդյունավետ իրականացնելու համար հագեցած լինի համապատասխան աշխատակազմով և այլ ռեսուրսներով:

Ավելին, ակտիվների վերադարձման օրենսդրության դրույթների կիրառման թափանցիկության մակարդակը ցածր է: Չնայած ՀՀ գլխավոր դատախազի՝ ակտիվների վերադարձման վերաբերյալ վիճակագրություն հրապարակելու մասին վերջերս ընդունված հրամանին, պաշտոնական վիճակագրությունը խիստ սահմանափակ է և չի տրամադրում մանրամասն տեղեկություններ բռնագանձված, վերադարձված և բաշխված ակտիվների վերաբերյալ: Արդյունքում, ակտիվների վերադարձմանը վերաբերող հոդվածները գնահատվել են որպես մասամբ իրականացված՝ պայմանավորված իրավակիրառ պրակտիկայի ցածր մակարդակով:

Գործընթացի նկարագրություն

ՄԱԿ-ի ԿԴԿ-ի իրականացման գնահատման երկրորդ փուլը մեկնարկել է 2015 թվականին: Սերբիայի Հանրապետությունը և Դոմինիկյան Հանրապետությունը ընտրվել են որպես գնահատման փուլի երրորդ տարում Հայաստանը գնահատող երկրներ:

ՀՀ Արդարադատության նախարարության (ԱՆ) պաշտոնական կայքում 2018 թվականին հուլիսի 16-ին հրապարակվեց Կառավարության ինքնագնահատման զեկույցը, որին հաջորդեց գնահատողների պաշտոնական այցը Հայաստան 2019 թվականին: ՀՀ կառավարությունը ստանձնել է հանձնառություն հրապարակել ամբողջական զեկույցը՝ այն պատրաստ լինելու պահից: Թեև քաղաքացիական հասարակության հետ ինքնագնահատման փուլում բավարար չափով քննարկումներ չեն կատարվել, վերջիններս հրավիրվել են մասնակցելու միջազգային գնահատողների հետ հանդիպմանը և ներկայացնելու այլընտրանքային գնահատականներ:

Զեկույցը մշակվել է գրասենյակային հետազոտությունների, պետական մարմիններից տեղեկատվություն ստանալու հարցումների և առանցքային տեղեկատվությունների հետ հարցազրույցների միջոցով, որոնց շարքում են ՀՀ Արդարադատության նախարարությունը, Կենտրոնական բանկը, Գլխավոր դատախազությունը, Դատական դեպարտամենտը, Քաղաքացիական ծառայության գրասենյակը, ինչպես նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամները և անկախ փորձագետներ:

Տեղեկատվության հասանելիություն

Վերջին տարիների ընթացքում պետական մարմինների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը խթանելու նպատակով ձեռնարկվել են մի շարք օրենսդրական և քաղաքական նախաձեռնություններ: Առցանց հասանելի հիմնական փաստաթղթերը ներառում են ՀՀ օրենսդրությունը, օրենքների նախագծերը, պետական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունները, գործող հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ընթացիկ արդյունքները, պետական պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերաբերյալ տվյալները, հանրային գնումների ոլորտի տվյալները՝ ներառյալ իրական սեփականատերերի վերաբերյալ մանրամասները և այլն: Այդուհանդերձ, չնայած վերջին բարեփոխումներին, կան ոլորտներ, որտեղ առկա են թափանցիկության խնդիրներ: Օրինակ՝ չեն հրապարակվում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի վերջին արձանագրությունները, դատավորների և դատախազների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների քանակը, պաշտոնատար անձանց վարքագծի կանոններին համապատասխանության մասին տեղեկատվությունը և այլն: Բացի այդ, կորոնավիրուսի տարածումը բացասաբար է ազդել նաև հանրային տեղեկատվության մատչելիության վրա, որն առավել ցայտուն է արտակարգ իրավիճակների պայմաններում կատարված հանրային գնումների դեպքերում: Խնդիր է նաև որոշակի տեղեկությունների ստացումը պարտադիր վճարի դիմաց: Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու հարցում զեկույցի հեղինակին հանդիպած հիմնական խոչընդոտներից մեկը վերաբերում է ինչպես ակտիվների վերադարձման, այնպես էլ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ վիճակագրություն տրամադրելու համակարգված մոտեցման բացակայությանը: Մնացած մարտահրավերները ներառում են տվյալների բաց լինելուն, ինչը հաճախ չի համապատասխանում թափանցիկ տվյալների ստանդարտներին, այսինքն՝ մեքենայական ընթերցման հնարավորություն չկա, ինչն օգտվողների համար անհնար

Է դարձնում տվյալների վերլուծությունը: Արդյունքում, զեկույցը մշակելու համար անհրաժեշտություն առաջացավ տեղեկատվություն ստանալու համար մի քանի պաշտոնական հարցումներ ուղարկել՝ հղում անելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին:

Օրենսդրությամբ ամրագրումը և կիրառում
ԱՂՅՈՒՄԱԿ 1. Իրականացման և կիրառման ամփոփում

ՄԱԿ-ի ԿԴԿ հոդված(ներ)	Օրենսդրությամբ ամրագրման կարգավիճակը	Օրենքի կիրառումը գործնականում
Հոդված 5.1 (Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականություններ)	Ամբողջությամբ իրականացված	Լավ
Հոդված 5.2 (Կանխարգելիչ Հակակոռուպցիոն պրակտիկա)	Մասամբ իրականացված	Չափավոր
Հոդված 5.3 (Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականության և պրակտիկայի գնահատում)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 5.4 (Փոխգործակցություն ազգային, միջազգային և տարածաշրջանային մակարդակներում)	Ամբողջությամբ իրականացված	Լավ
Հոդված 6.1 (Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմնի/մարմինների ստեղծում)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 6.2 (Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմնի/մարմինների անկախություն և գործունեություն)	Մասամբ իրականացված	Չափավոր
Հոդված 7.1 և 7.2 (Հանրային ծառայության արժանիքների համակարգ)	Հիմնականում իրականացված	Լավ
Հոդված 7.3 (Քաղաքական ֆինանսավորում)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 7.4 (Շահերի բախում)	Մասամբ իրականացված	Չափավոր
Հոդված 8.2 (վարքագծի կանոնադրքեր)	Մասամբ իրականացված	Ցածր
Հոդված 8.4 և 13.2 (Հաղորդման մեխանիզմներ և Ազդարարների պաշտպանություն)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 8.5 (Ակտիվների հայտարարագրեր)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 9.1 (Հանրային գնումներ)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 9.2 (Պետական ֆինանսների կառավարում)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 10 և 13.1 (Տեղեկատվության մատչելիություն և հասարակության	Հիմնականում իրականացված	Չափավոր

մասնակցություն)		
Հոդված 11 (Դատական և դատախազական մարմիններ)	Մասամբ իրականացված	Չափավոր
Հոդված 12 (Մասնավոր հատված)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 14, 52 և 58 (Փողերի լվացման կանխարգելում)	Հիմնականում իրականացված	Չափավոր
Հոդված 53 և 56 (Գույքի անմիջական վերադարձմանն ուղղված միջոցներ)	Հիմնականում իրականացված	Ցածր
Հոդված 54 (Բռնագրավման մեխանիզմներ)	Մասամբ իրականացված	Ցածր
Հոդված 51, 54, 55, 56 և 59 (Բռնագրավման գործում միջազգային համագործակցություն)	Մասամբ իրականացված	Ցածր
Հոդված 57 (Ակտիվները վերադարձնելը և դրանք տնօրինելը)	Մասամբ իրականացված	Ցածր

ԱՂՅՈՒՄԱԿ 2: Ընտրված հիմնական կառույցների կատարողականը²

Կառույցի անվանումը	Զեկույցում ընդգրկված հանձնառությունների հետ կապված կատարողականը	Կատարողականը բացատրող հիմնական բառեր (օրինակ՝ ռեսուրսներ, կազմակերպություն, անկախություն, տեխնիկական հմտություններ)
Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն	Լավ	Ռեսուրսներ, կազմակերպում, անկախություն, տեխնիկական հմտություններ
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	Չափավոր	Կազմակերպում, անկախություն, տեխնիկական հմտություններ
Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ	Չափավոր	Կազմակերպում
Ֆինանսական դիտարկումների կենտրոն	Չափավոր	Կազմակերպում, անկախություն, տեխնիկական հմտություններ
Հաշվեքննիչ պալատ	Չափավոր	Կազմակերպում, անկախություն, տեխնիկական հմտություններ
Դատախազություն	Չափավոր	Կազմակերպում, անկախություն, տեխնիկական հմտություններ
Նախարարություններին կից	Ցածր	Կազմակերպում, անկախություն

² Կատարողականը գնահատվում է զեկույցում ընդգրկված պարտավորությունների կատարման հիման վրա:

հանրային խորհուրդներ		
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ) կից Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն	Ցածր	Անկախություն (քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման իմաստով)
Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	Ցածր	Կազմակերպում, ռեսուրսներ, անկախություն, տեխնիկական հմտություններ
Գնումների բողոքարկման համակարգ	Ցածր	Կազմակերպում, ռեսուրսներ, անկախություն, տեխնիկական հմտություններ

Առաջնահերթ միջոցառումների վերաբերյալ հիմնական առաջարկություններ

1. Ուժեղացնել բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարողությունները. ԿԿՀ-ին նախատեսել որպես կենտրոնական մարմին, որը կհամակարգի և կվերահսկի Բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությունը, ներառյալ նրանց համար դասընթացների կազմակերպումը: Վերանայել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ընտրության չափորոշիչները՝ դրանցում նախատեսելով հակակոռուպցիոն փորձի վերաբերյալ պահանջ:
2. Բարձրացնել պաշտոնատար անձանց բարեվարքության մակարդակը. հրապարակել ԿԿՀ-ի կողմից իրականացվող բարեվարքության ստուգումների արդյունքները՝ պահպանելով անձնական տվյալների պաշտպանության դրույթները: Ընդունել պաշտոնյաների վարքագծի օրինակելի կանոններ և քաղաքացիական ծառայողների, պատգամավորների և քննիչների վարքագծի կանոններ:
3. Բարեփոխել քաղաքական ֆինանսավորումների ոլորտը. ընդունել ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում քաղաքական քարոզարշավների ֆինանսավորմանն առնչվող փոփոխությունների նախագիծ և նախատեսել համաչափ պատասխանատվության միջոցներ օրենսգրքի 189.13-189.16 հոդվածներով նախատեսված հաշվետվությունների ներկայացման պահանջների, նվիրատվության իրավակարգավորումների և այլ իրավախախտումների համար:
4. Բարձրացնել բարեվարքության մակարդակը դատական համակարգում. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական, ինչպեսև ուսումնական հարցերի հանձնաժողովներում ապահովել դատավոր և ոչ դատավոր անդամների հավասարակշռված և ողջամիտ ներկայացվածություն: Ուսումնական հարցերի ու գնահատման հանձնաժողովներում ոչ դատավոր անդամ առաջադրելու իրավունքը վերապահել միայն քաղաքացիական հասարակությանը: Շահերի բախումը կարգավորելու համար սահմանել հանձնաժողովներին ՔՀԿ-ների անդամակցության չափանիշներ սահմանել:
5. Առավել լայն կարգավորել ազդարարման համակարգի մասին օրենսդրությունը՝ ներառելով մասնավոր հատվածում կատարված խախտումները: Ազդարարներին խրախուսելու նպատակով նախատեսել «Qui tam» պարգևատրման հայեցակարգ:

Իրավական կարգավիճակ շնորհել քաղաքացիական հասարակության կողմից շահագործվող այլընտրանքային ազդարարման «ԲիզՊաշտպան» կայքին:

6. Վերանայել նախարարություններին կից հանրային խորհուրդների աշխատանքային պլաններն ու իրավական կարգավորումները, օրակարգերի մշակման և որոշումներ կայացնելու տեսանկյունից դրանք դարձնել առավել թափանցիկ և ներառական:
7. Ակտիվների և եկամուտների հայտարարագրման համակարգի կատարելագործում. ներդնել ծախսերի հայտարարագրման ինստիտուտը, հայտարարատուին փաստացի պատկանող գույքի հայտարարագրումը, պաշտոնեական պարտականությունները դադարեցնելուց հետո երկու տարվա ընթացքում իրավիճակային (*ad-hoc*) եկամուտների հայտարարագրումը, ընդլայնել հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց շրջանակը, ԿԿՀ-ին տրամադրել հայտարարատու պաշտոնատար անձանց կենսակերպի ստուգումներ իրականացնելու լիազորություն հայտարարագրում ներառված տվյալների արժանահավատության վերլուծության նպատակով:
8. Ներդնել պետական գնումների էլեկտրոնային նոր համակարգ՝ հիմնված բաց կառավարման սկզբունքների և պայմանագրային տվյալների բաց ստանդարտի վրա, որը պարտադիր կլինի բոլոր պետական պատվիրատուների համար: Մշակել պետական գնումների էլեկտրոնային համակարգի տվյալների վերլուծության հանրորեն հասանելի և մատչելի գործիքներ: Ստեղծել քաղաքացիներից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, բիզնեսից և պետական պատվիրատուներից հետադարձ կապ ստանալու մեխանիզմներ գնումների ոլորտի բարելավությունը և արդյունավետությունը բարելավելու նպատակով:
9. Բարելավել պետական գնումների բողոքարկման համակարգը: Ընդունել մեկ անձից իրականացվող գնումների կիրառման նկատմամբ առավել խիստ կանոններ, հատկապես՝ հրատապության հիմքով գնումների դեպքում: Նախատեսել վերանայման հատուկ ընթացակարգ պետական գնումներում շահերի բախման և իրական սեփականատերերի մասին հայտարարագրերում ներառված տվյալների արժանահավատությունը ստուգելու համար: Սահմանել նվազագույն չափանիշներ (ուղեցույցներ) գնման առարկաների որոշակի խմբի տեխնիկական բնութագրերի և դրանց ուղենիշային արժեքների համար:
10. Զարգացնել Խորհրդարանի բյուջետային գրասենյակի տեխնիկական կարողությունները՝ տրամադրելով անհրաժեշտ աշխատակազմ և պետական բյուջեից անկախ ֆինանսավորում, սահմանելով գրասենյակի գործառույթները առանձին կանոնադրությամբ և ընդլայնելով վերջինիս լիազորությունները՝ գնահատելու հարկաբյուջետային կանխատեսումները, ինչպես նաև հարկաբյուջետային կանոնների *ex-ante* (նախնական) համապատասխանությունը:
11. Համապատասխանեցնել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը միջազգային լավագույն ստանդարտներին:
12. Բարձրացնել մասնավոր հատվածում թափանցիկությունը. ապահովել յուրաքանչյուր անձի անվճար հասանելիությունը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրամադրվող իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվությանը և ստեղծել իրավաբանական անձանց իրական սեփականատերերի գրանցամատյան, որը կլինի անվճար և հասանելի բոլորի համար:

13. Ուժեղացնել փողերի լվացման դեմ պայքարը. Ստեղծել բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր: Նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն: Ընդլայնել իրավապահ մարմինների նախաձեռնած զուգահեռ ֆինանսական հետաքննությունների պրակտիկան: Ընդլայնել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների շրջանակը, և ըստ այդմ՝ փոփոխել իրական սեփականատիրոջ սահմանումը:
14. Վերանայել ակտիվների վերադարձման վերաբերյալ ներպետական օրենսդրական դաշտը, վերացնել հակասությունները և լրացնել բացթողումները՝ ՄԱԿ-ի ԿԴԿ դրույթներին ամբողջությամբ համապատասխանեցնելու նպատակով: Իրավունք տրամադրել ՔՀԿ-ներին կամ առհասարակ քաղաքացիական հասարակությանը՝ ակտիվների վերականգնման գործերով հարուցելու դատական հայցեր: Նվազեցնել քաղաքացիական կարգով բռնազանձման ենթակա ակտիվների արժեքի շեմը: Ընդունել վերադարձված ակտիվները հասարակությանը (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) վերաբաշխելու իրավական կարգավորումներ: Ընդունել «Քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքը՝ այլ պետություններին ակտիվները վերադարձնելու ներպետական օրենսդրական հիմքեր ունենալու համար: Վերանայել փոխադարձ իրավական օգնության վերաբերյալ առկա պայմանագրերը և կնքել նոր պայմանագրեր, հատկապես ակտիվների վերադարձի և բաշխման փուլերը կարգավորելու համար:
15. ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարչության բազային հենքի վրա ստեղծել ակտիվների վերադարձման բոլոր փուլերի համար իրավասու մարմին՝ Ակտիվների վերադարձման գրասենյակ, որն իր մանդատն արդյունավետ իրականացնելու համար հազեցած կլինի համապատասխան աշխատակազմով և այլ ռեսուրսներով:
16. Բարձրացնել ակտիվների վերադարձման դրույթների կիրառման թափանցիկության մակարդակը: Ստեղծել Ակտիվների շտեմարան, որը կվարվի Ապօրինի ծագման գույքի բռնազանձման վարչության կողմից՝ միտված վերադարձված ակտիվների մասին տեղեկատվություն տրամադրելուն:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՄԱԿ-ի ԿԴԿ-ի իրականացման դիտարկման երկրորդ փուլը մեկնարկել է 2015 թվականին և վիճակահանության արդյունքում Սերբիայի Հանրապետությունը և Դոմինիկյան Հանրապետությունը ընտրվել են Հայաստանը գնահատող երկրներ:

ԱՂՅՈՒՄԱԿ 3: Կառավարության թափանցիկությունը և ՔՀԿ-ների մասնակցությունը ՄԱԿ-ի ԿԴԿ-ի գնահատման գործընթացին

Արդյո՞ք կառավարությունը հրապարակել է պետության համակարգողի տվյալները	Ոչ	Չնայած Հայաստանում ՄԱԿ-ի ԿԴԿ-ի իրականացման համար պատասխանատու համակարգողը ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Մարիամ Գալստյանն է, ³ սակայն այդ տեղեկատվությունը պաշտոնապես հրապարակված չէ: Մինչդեռ, նախկին համակարգողի՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի մասին տեղեկատվությունը հասանելի էր հանրությանը:
Արդյո՞ք գնահատման ժամանակացույցը որևէ տեղ հրապարակվել է (հանրոք են հայտնի)	Ոչ	Գնահատման գործընթացի վերաբերյալ ոչ մի հատուկ տեղեկատվություն չի տրամադրվել հանրությանը: Այսպիսով կարող ենք ենթադրել, որ մշտադիտարկման գործընթացը ժամանակին չի իրականացվել: ⁴
Արդյո՞ք ինքնագնահատման նախապատրաստման ընթացքում խորհրդակցել են քաղաքացիական հասարակության հետ:	Այո	ՀՀ ԱՆ-ի փոխնախագահ ՄԱ-ը պաշտոնապես դիմել է մի շարք ՀԿ-ների՝ գործընթացում ներդրում կատարելու և իրենց խորհրդատվական գնահատականները ներկայացնելու առաջարկով: ⁵ Հիմնականում խորհրդակցել են հետևյալ խմբերի հետ. հակակոռուպցիոն և տեղեկատվության հարցերով զբաղվող ՔՀԿ-ներ, այլ հարցերով զբաղվող ՔՀԿ-ներ, ակադեմիա: Սակայն, գործընթացը չի կարող համարվել ինքնագնահատման փուլում մասնակցության բարձր չափանիշ ապահովող, քանի որ

³ Հարցազրույց ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ տիկին Մարիամ Գալստյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 16-ին:

⁴ Ենթադրվում է, որ գնահատումը պետք է կատարվի վեց ամսվա ընթացքում, սակայն այդ ժամկետները հաճախ գերազանցվում են (չեն պահպանվում):

⁵ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխան, տրամադրված՝ 02.12.2020թ.-ին:

		խորհրդակցության արձանագրությունը չի հրապարակվել, և ոչ բոլոր ՀԿ-ներն են տեղյակ եղել այդ գործընթացի մասին:
Արդյո՞ք ինքնագնահատման ստուգաթերթը հրապարակվել է առցանց կամ՝ տրամադրվել քաղաքացիական հասարակությանը:	Այո	ՀՀ ԱՆ-ը իր կայքում 2018 թվականի հուլիսի 16-ին ⁶ հրապարակել է ինքնագնահատման զեկույցը: Այդուհանդերձ, զեկույցը չի հրապարակվել ՄԱԹՀԴԳ կայքում՝ Հայաստանի վերաբերյալ էջի միջոցով:
Արդյո՞ք կառավարությունը համաձայնվել է միջազգային գնահատող փորձագետների այցելությանը Հայաստան:	Այո	ՀՀ կառավարությունը հանձնառու է հրապարակել պետության ամբողջական զեկույցը՝ այն պատրաստ լինելու պահից:
Արդյո՞ք միջազգային գնահատող փորձագետներն այցելել են Հայաստան:	Այո	Գնահատող երկրների՝ Սերբիայի և Դոմինիկյան Հանրապետության Հայաստան կատարած այցը տեղի է ունեցել 2019 թվականի հուլիսի 16-ից 18-ը:
Արդյո՞ք քաղաքացիական հասարակությունը հրավիրվել է օժանդակելու և ներդրում ունենալու գնահատող փորձագետների պաշտոնական այցի ժամանակ:	Այո	Քաղաքացիական հասարակությունը, այդ թվում նաև Հայաստանի ՔՀԿ-ների Հակակոռուպցիոն կոալիցիան, հրավիրվել են ՄԱԹՀԴԳ-ի քարտուղարության ներկայացուցիչների, Սերբիայի և Դոմինիկյան Հանրապետությունների գնահատող փորձագետների հետ հանդիպմանը: ⁷ Հանդիպումների ընթացքում ՔՀԿ-ները բարձրաձայնել են իրենց մտահոգությունները և տրամադրել գրավոր դիտարկումներ: ⁸
Արդյո՞ք մասնավոր հատվածը հրավիրվել է օժանդակելու և ներդրում ունենալու գնահատող փորձագետների պաշտոնական այցի ժամանակ:	Այո	Մասնավոր հատվածը հրավիրվել է ՄԱԹՀԴԳ-ի քարտուղարության ներկայացուցիչների, Սերբիայի և Դոմինիկյան Հանրապետությունների գնահատող փորձագետների հետ հանդիպմանը: Հանդիպմանը մասնավոր հատվածը հիմնականում ներկայացված էր գործարարների անդամակցությամբ ասոցիացիաների միջոցով:
Արդյո՞ք կառավարությունը	Այո	ՀՀ կառավարությունը հանձնառու է հրապարակել

⁶ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի իրականացման գնահատման երկրորդ փուլի գործընթացի մոնիթորինգի մեխանիզմի ինքնագնահատման ստուգաթերթ: 2-րդ փուլ:

⁷ «ՄԱԿ-ի գնահատող խմբի ներկայացուցիչները հանդիպել են պետական մարմինների և ՀԿ-ների ներկայացուցիչներին», <<https://www.moj.am/article/2448>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁸ «Հայաստանին գնահատող փորձագիտական խմբին ներկայացվել են Հայաստանում ընթացող հակակոռուպցիոն գործընթացների վերաբերյալ դիրքորոշումներ և մտահոգություններ», <<https://armla.am/44204.html>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

պարտավորվել է հրապարակել պետության ամբողջական զեկույցը:	պետության ամբողջական զեկույցը, այն պատրաստ լինելու պահից: Սույն զեկույցը վերջնականացնելու պահի դրությամբ պետության զեկույցը դեռ չէր հրապարակվել, քանի որ զեկույցի նախագիծը դեռևս չէր տրամադրվել կառավարությանը: Հարկ է նշել, որ միակ փաստաթուղթը, որը մշակվել և ներկայացվել էր ՀՀ ԱՆ, գործադիր ամփոփման նախագիծն էր: ⁹
---	---

Տեղեկատվության մատչելիություն

Զեկույցը մշակվել է գրասենյակային հետազոտությունների, պետական մարմիններից տեղեկատվություն ստանալու հարցումների և առանցքային տեղեկատվությունների հետ հարցազրույցների միջոցով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացվող ՀՀ պետական մարմիններն են ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը և ԿԿՀ-ը, վերջիններս դիտարկվել են որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր: Բացի այդ, հիմնական տվյալները ստացվել են ՀՀ Կենտրոնական բանկից, Գլխավոր դատախազությունից, Դատական դեպարտամենտից, Քաղաքացիական ծառայության գրասենյակից, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամներից և անկախ փորձագետներից, ինչպես նաև լրատվամիջոցների հրապարակումներից և քաղաքացիական հասարակության այլ զեկույցներից: Վերջին տարիների ընթացքում պետական մարմինների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը խթանելու նպատակով ձեռնարկվել են մի շարք օրենսդրական և քաղաքական նախաձեռնություններ: Այսպիսով, անհրաժեշտ տեղեկատվությունը հիմնականում հրապարակված էր: Առցանց հասանելի հիմնական փաստաթղթերը ներառում են ՀՀ օրենսդրությունը, օրենքների նախագծերը, պետական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունները, գործող հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ընթացիկ արդյունքները, պետական պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրերի վերաբերյալ տվյալները, հանրային գնումների ոլորտի տվյալները, ներառյալ իրական սեփականատերերի վերաբերյալ մանրամասները և այլն: Այդուհանդերձ, չնայած վերջին բարեփոխումներին, կան ոլորտներ, որտեղ առկա են թափանցիկության խնդիրներ: Օրինակ՝ չեն հրապարակվում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի վերջին արձանագրությունները, դատավորների և դատախազների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների քանակը, պաշտոնատար անձանց վարքագծի կանոններին համապատասխանության մասին տեղեկատվությունը և այլն: Բացի այդ, կորոնավիրուսի տարածումը բացասաբար է ազդել նաև հանրային տեղեկատվության մատչելիության վրա, որն առավել ցայտուն է արտակարգ իրավիճակների պայմաններում կատարված հանրային գնումների դեպքերում: Խնդիր է նաև որոշակի տեղեկությունների ստացումը պարտադիր վճարի դիմաց: Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու հարցում զեկույցի հեղինակին հանդիպած

⁹ Հարցազրույց ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ տիկին Մարիամ Գալստյանի հետ, տեղի է ունեցել 2020 թ.-ի նոյեմբերի 16-ին:

հիմնական խոչընդոտներից մեկը վերաբերում է ինչպես ակտիվների վերադարձման, այնպես էլ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ վիճակագրություն տրամադրելու համակարգված մոտեցման բացակայությանը: Մնացած մարտահրավերները ներառում են տվյալների բաց լինելուն, ինչը հաճախ չի համապատասխանում թափանցիկ տվյալների ստանդարտներին, այսինքն՝ մեքենայական ընթերցման հնարավորություն չկա, ինչն օգտվողների համար անհնար է դարձնում տվյալների վերլուծությունը: Արդյունքում, զեկույցը մշակելու համար անհրաժեշտություն առաջացավ տեղեկատվություն ստանալու համար մի քանի պաշտոնական հարցումներ ուղարկել՝ հղում անելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին:

4. ԳԼՈՒԽ II. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 5. Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականությունը և պրակտիկան

Հոդված 5, մաս 1

Մշակել և իրականացնել կամ վարել հանրության մասնակցությանը և օրենքի գերակայության սկզբունքների արտացոլմանը, պետական գործերի և պետական գույքի պատշաճ կառավարմանը, ազնվությանը և անկաշառությանը, թափանցիկությանը և պատասխանատվությանը նպաստող՝ կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականություն:

Այս մասը դիտարկվում է ամբողջությամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ լավ:

Ա. Հակակոռուպցիոն քաղաքականություն

ՀՀ Հակակոռուպցիոն առաջին ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը ընդունվել է կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ:¹⁰ Այն ուժի մեջ է մտել 2003 թվականի դեկտեմբերի 20-ին: Ռազմավարության կատարման ժամկետը 2003-2006 թվականներն էին, սակայն որոշ միջոցառումներ իրականացվել են նաև 2007 թվականին:

ՀՀ Հակակոռուպցիոն երկրորդ ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը ընդունվել է կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ: Այն ուժի մեջ է մտել 2009 թվականի դեկտեմբերի 3-ին:¹¹ Ռազմավարության կատարման ժամկետը 2009-2012 թվականներն էին:

ՀՀ կառավարությունը 2014 թվականի ապրիլի 10-ի N 14 արձանագրային որոշմամբ ընդունեց «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը»,¹² որին հաջորդեց երրորդ ռազմավարության ընդունումը: Ըստ այդմ, կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշմամբ ընդունվեց հակակոռուպցիոն երրորդ ռազմավարությունը, որն ուժի մեջ է մտել 2015 թվականի հոկտեմբերի 24-ին:¹³ Ռազմավարության կատարման ժամկետը 2015-2018 թվականներն էին:

¹⁰ Կառավարության որոշում հասանելի է հետևյալ հղումով.

<<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31881>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹¹ Կառավարության որոշում հասանելի է հետևյալ հղումով.

<<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68627>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹² Հարկ է նշել, որ այս հայեցակարգն ընդունվել է ոչ թափանցիկ ընթացակարգով և առանց հասարակության մասնակցության: Հանրությունը տեղեկացել է հայեցակարգի մասին կառավարության նիստում ընդունվելուց հետո: Այս կապակցությամբ ՔՀԿ-ները տարածել են դատապարտող հայտարարություն, որը հասանելի է հետևյալ հղումով. <<https://iravaban.net/en/55205.html>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.): (Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ԻՀԱ նախկին անվանումն է): Հայեցակարգը հասանելի է հետևյալ հղումով.

<https://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3.pdf> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.).

¹³ Կառավարության որոշումը հասանելի է հետևյալ հղումով.

<<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100900>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Չորրորդ և վերջին հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ հակակոռուպցիոն ռազմավարություն) ընդունվել է կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ:¹⁴ Ռազմավարության կատարման ժամկետը 2019-2022 թվականներն են:

Ռազմավարության նախագիծը և դրա վերաբերյալ ներկայացված առաջարկները, ինչպես նաև ընդունված ռազմավարությունը հրապարակվել և հանրությանը հասանելի են եղել մշակման ամբողջ ընթացքում:¹⁵ Այս գործընթացի թափանցիկության և հասարակության մասնակցության վերաբերյալ արդյունքները ներկայացված են ստորև՝ «Հանրության մասնակցությունը» բաժնում:

Բ. Հակակոռուպցիոն քաղաքականության համակարգման մեխանիզմ

Ռազմավարության և միջոցառումների ծրագրի ընթացքի մոնիթորինգի և գնահատման գործառույթներն իրականացնում է ՀՀ ԱՆ-ը:

Յուրաքանչյուր տարվա սկզբին, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա փետրվարի առաջին տասնօրյակը, ԱՆ-ը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի քննարկմանն է ներկայացնում է մոնիթորինգի և գնահատման արդյունքները: Խորհուրդը ստեղծվել է ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ: Յուրաքանչյուր տարվա վերջում, Խորհուրդը մոնիթորինգի արդյունքների և առաջարկությունների հիման վրա կարող է համապատասխան փոփոխություններ կատարել: Փոփոխությունների վերաբերյալ միջոցառումները համակարգվում են ԱՆ-ի կողմից:

Ծանոթանալով 2019թ.-ի հաշվետվությանը և ԱՆ-ի կողմից իր կայքում հրապարակված 2020-ի առաջին կիսամյակի հաշվետվությանը՝¹⁶ կարելի է եզրակացնել, որ դրանք առաջին հերթին արտացոլում են Հակակոռուպցիոն ռազմավարության և 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի իրականացման քանակական տվյալներ: Այս զեկույցները չեն պարունակում որակական տվյալներ, որոնք կբխեին խորը վերլուծությունից և կոռուպցիոն ռիսկերի բացահայտման դեպքերից: Ավելին, ըստ ՀՀ ԱՆ հրապարակած 2020թ.-ի առաջին կիսամյակի ռիսկերի գնահատման արդյունքներից, պետական մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի մշակում և իրականացում նախատեսվող ծրագրերը, ներառյալ՝ ներքին բարեվարքության գործիքների մշակումը և իրականացումը, կատարվել են մասամբ: Իսկ հաշվետվությունները տեղադրված չեն Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքում:

Հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ընթացքի հաշվետվություն

¹⁴ Կառավարության որոշումը հասանելի է հետևյալ հղումով.

<<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵ Ռազմավարության առաջին և երկրորդ նախագծերը, ինչպես նաև նախագծերի վերաբերյալ առաջարկները հասանելի են այստեղ. <<https://www.e-draft.am/projects/1439>> <<https://www.e-draft.am/projects/1733>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.): Ընդունված ռազմավարությունը տե՛ս հղում 16:

¹⁶ Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացիկ արդյունքների մասին հաշվետվությունները և դրա միջոցառումների ծրագրերը հասանելի են հետևյալ հղումներով.

<http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_8055541506041_2020hashvetvutyun.pdf>,

<http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9436321736461_hashvetvutyun.pdf> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Ինչպես նշվեց վերևում, 2019թ.-ի հաշվետվությունը և 2020թ.-ի¹⁷ առաջին կիսամյակի հաշվետվությունն ավելի շատ արտացոլում են քանակական տվյալներ, քան որակական: Ավելի համապարփակ և մանրակրկիտ գնահատում ունենալու նպատակով ՔՀԿ-ները կարող են կիսամյակային կտրվածքով մոնիթորինգ և գնահատում իրականացնել, և դրանց արդյունքները ներկայացնել ՀՀ ԱՆ: Այս կապակցությամբ, 2020թ.-ի հունվար-փետրվար ամիսներին, ԻՀԱ-ն և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան իրականացրել են 2019թ.-ի չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ քանակական մոնիթորինգ և իրենց գնահատումը ներկայացրել համապատասխան պետական մարմիններին:¹⁸

Գ. Հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը

Հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ն ունեցել է հակակոռուպցիոն երեք ռազմավարություն՝ համապատասխան միջոցառումների ծրագրերով, կոռուպցիայի անբարենպաստ հետևանքներն իրենց բոլոր դրսևորումներում շարունակում են հաստատուն տեղ զբաղեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Դա են վկայում կոռուպցիայի ներկա մակարդակի վերաբերյալ հասարակության ընկալումն ու տրամադրությունը, ինչպես նաև հեղինակավոր միջազգային կազմակերպությունների տարբեր գնահատականները, զեկույցներն ու ցուցանիշները: Տարիների ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարի անկումը պայմանավորված էր երկու գործոնով. բավարար քաղաքական կամքի բացակայությամբ և ինստիտուցիոնալ համակարգերի թերություններով: Գործող չորրորդ ռազմավարությունն առանձնանում է նրանով, որ դրա շրջանակներում կառավարությունը հաշվի է առել մասնագիտացված ՔՀԿ-ների խորհուրդները և մշակել իրական կարիքների վրա հիմնված ռազմավարություն՝ ապահովելով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգեր և դրանք նախատեսող կառուցակարգեր:¹⁹

Այսպիսով, չորրորդ ռազմավարությունն առաջին անգամ մշակվեց՝ հիմնվելով կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնասյուների վրա.

- Կոռուպցիայի կանխարգելում,
- Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում,
- Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկության բարձրացում:

Այս տեսանկյունից կարևոր է, որ ռազմավարությունը կապահովի համակարգված և թիրախային մոտեցումներ, և, *inter alia*, ուղղված կլինի պետական կառավարման համակարգում բարեվարքության, թափանցիկության և մասնակցայինության արդյունավետ ու գործուն մեխանիզմների ներդրմանը և կատարելագործմանը, միաժամանակ նախատեսելով պետական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր կանոններ, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի ներդրում:

Հաջողված փորձ

¹⁷ Տե՛ս Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացիկ արդյունքների մասին հաշվետվությունները և դրա միջոցառումների ծրագրերը:

¹⁸ Մոնիթորինգի արդյունքները ներկայացվել և քննարկվել են հանրային միջոցառման ընթացքում, որին մասնակցել են ռազմավարության կատարողներն ու համակատարողները, ՔՀԿ-ներ և շահագրգիռ այլ կողմեր: Մանրամասները հասանելի են՝ <https://armla.am/46734.html> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁹ Ռազմավարության մշակման ամբողջ ընթացքում Հայաստանի ՔՀԿ Հակակոռուպցիոն կոալիցիայի և ԻՀԱ-ի կողմից ներկայացվել է 133 առաջարկություն, որից 101-ը ընդունվել են ամբողջությամբ, մասնակի, կամ ի գիտություն, և միայն 32-ը մերժվել են: Մա ՔՀԿ-Կառավարություն կառուցողական երկկողմանի հաջող օրինակ է:

Չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը խարսխված է երեք հիմնասյուների վրա. կանխարգելում, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում, հակակոռուպցիոն կրթություն և իրազեկության բարձրացում, և ներառում է ինստիտուցիոնալ բարելավումներ և հակակոռուպցիոն օրենսդրության բարեփոխումներ:

Դ. Հանրության մասնակցությունը

Հայաստանում հակակոռուպցիոն չորրորդ ռազմավարության մշակման գործընթացը կարելի է բնութագրել որպես ներառական, քանի որ, ի տարբերություն նախորդ երեք ռազմավարությունների և «Պետական կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի» ընդունման գործընթացների, քաղաքացիական հասարակությունն ուղղակիորեն ներգրավված է եղել հակակոռուպցիոն չորրորդ ռազմավարության ընդունման գործընթացին: Այն պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի: Առաջին փուլում՝ դեռ 2018 թ.-ին, ՀՀ կառավարությունը, ԱՆ-ի անունից, գրավոր առաջարկեց մասնագիտացված ՔՀԿ-ներին նախնական գաղափարներ և առաջարկներ ներկայացնել ապագա հակակոռուպցիոն ռազմավարության բովանդակության վերաբերյալ: Իսկ արդեն երկրորդ փուլում, այդ առաջարկների հիման վրա, ապահովվեց ԱՆ-ի կողմից մշակված հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի ներառական մասնագիտական և հանրային քննարկումները, դրանց լուսաբանումը լրատվամիջոցներով, ինչպես նաև ընձեռվեց հնարավորություն իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ www.e-draft.am միջոցով ռազմավարության նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել:

Հակակոռուպցիոն ռազմավարության ներառական մշակման գործընթացի առանցքային հիմնասյուներն էին.²⁰

- Մասնագիտացված ՔՀԿ-ներից ապագա հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ նախնական գաղափարների և առաջարկությունների հավաքագրում:
- Հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում և առաջարկների հավաքագրում www.e-draft.am կայքի միջոցով:
- Հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ մասնագիտական քննարկումներ:
- Հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ հանրային քննարկումներ:²¹
- ԶԼՄ-ների կողմից հանրային քննարկումների լուսաբանում:

Հաջողված փորձ

Հակակոռուպցիոն չորրորդ ռազմավարությունը ներառական է և մշակվել է հակակոռուպցիոն առանցքային դերակատարների մասնակցությամբ, իսկ նրանց առաջարկությունների մեծ մասը ընդգրկվել է ռազմավարության մեջ:

²⁰ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ, ՀԿ կենտրոնի նախագահ տիկին Արփինե Հակոբյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի սեպտեմբերի 10-ին:

²¹ Հայաստանի ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիան և ԻՀԱ-ն ՀՀ ԱՆ-ի հետ համատեղ Երևանում և Հայաստանի մարզերում կազմակերպել են մի շարք հանրային քննարկումներ Ռազմավարության նախագծի վերաբերյալ: Մանրամասները հասանելի են՝ <https://armia.am/45592.html> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Ե. Կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին, նախաձեռնություններին և ցանցերին անդամակցում

2003 թվականից Հայաստանը ներգրավված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան Հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում: ՏՀԶԿ չորրորդ փուլի մոնիթորինգը մեկնարկել է 2014-ի հոկտեմբերին և ավարտվել է չորրորդ փուլի արդյունքների մասին զեկույցի հրապարակմամբ՝ 2018 թ.-ի Հոկտեմբերի 26-ին:²²

2004-ի հունվարին Հայաստանը դարձավ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) ԳՐԵԿՈ-ի անդամ: Հայաստան-ԵԽ 2019-2022 թվականների Գործողությունների ծրագրի շրջանակներում համագործակցության հիմնական ուղղություններն են՝ արդյունավետ կառավարումը և կոռուպցիայի դեմ պայքարը:²³

2005-ին ՀՀ-ը ստորագրեց ՄԱԿ-ի ԿԴԿ-ը, որը Ազգային ժողովի կողմից վավերացվեց 2006թ.-ին, իսկ Կոնվենցիայի դրույթները ՀՀ-ի համար ուժի մեջ մտան 2007-ի ապրիլի 7-ին:²⁴

2006 թ.-ին ԵՄ-ն և ՀՀ-ն Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում վավերացրին Գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ:

Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն չորրորդ ռազմավարությունը հիմնականում արտացոլում է առկա միջազգային պարտավորությունները և կազմվել է դրանք հաշվի առնելով:

Հոդված 5, մաս 2

Մահմանել և խրախուսել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված պրակտիկայի արդյունավետ տեսակներ:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

ՄԱԿ-ի ԿԴԿ-ի իրականացման գնահատման երկրորդ փուլի գործընթացի մոնիթորինգի մեխանիզմի 2018թ.-ի հուլիսի 16-ին թվագրված ինքնագնահատման ստուգաթերթում (այսուհետ՝ տեքստում կառավարության ստուգաթերթ)²⁵ ՀՀ կառավարության ներառված պատասխանը ամբողջական չէ:²⁶ Մասնավորապես, որպես քաղաքականության իրականացման երաշխիք նշվում է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը: Նախ, հարկ է նշել, որ խորհուրդը խորհրդատվական մարմին է, և նրա որոշումները պարտադիր չեն: Խորհրդի

²² Հայաստանի ստանձնած պարտավորությունների գնահատման և առաջարկությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում, բաժին 1.2:

²³ <https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=090000168090762f> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁴ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 31.10.2003թ.-ին և ուժի մեջ է մտել 07.04.2007 թ., հասանելի է՝

<https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁵ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի իրականացման գնահատման երկրորդ փուլի գործընթացի մոնիթորինգի մեխանիզմի ինքնագնահատման ստուգաթերթ: 2-րդ փուլ:

²⁶ Տե՛ս նույն տեղում:

հիմնական նպատակն է՝ քննարկել կոռուպցիայի դեմ պայքարի առաջնահերթությունները և առաջարկվող լուծումները, զսպել ու հաղթահարել ՀՀ-ում կոռուպցիան, ինչպես նաև արտահայտել դիրքորոշում հակակոռուպցիոն քաղաքականության, ծրագրերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

Երկրորդ, հատկանշական է, որ 2020 թվականի ընթացքում Խորհուրդը միայն մեկ նիստ է գումարել (հուլիսի 3-ին), որի արձանագրությունները 2020 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ հրապարակված չէին:²⁷ Իսկ 2019 թվականին վերջին նիստը տեղի է ունեցել օգոստոսի 30-ին: Մինչդեռ, համաձայն ՀՀ վարչապետի՝ Խորհրդի գործունեությունը կարգավորող 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 808 N որոշման 9-րդ և 10-րդ կետերի՝ Խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ: Ստացվում է, որ 2019-2020 թվականների ընթացքում, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, որպես այդպիսին, ակտիվորեն և արդյունավետորեն չի մասնակցել հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը:

Հոդված 5, մաս 3

Պարբերաբար գնահատել համապատասխան իրավական փաստաթղթերը և վարչական միջոցները՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տեսանկյունից դրանց համարժեքությունը որոշելու նպատակով:

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխանը ամբողջական չէ: Նախ և առաջ պետք է նշել, որ ՀՀ առաջին փոխվարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի և գնահատման վարչությունն այլևս չի գործում, և դրա գործառույթները իրականացնում է ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը: Ավելին, հարկ է նշել, որ հակակոռուպցիոն մոնիթորինգի հարթակը, որի մասին նշված էր կառավարության ստուգաթերթում, թարմացված չէ: Օրինակ, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի վերջին արձանագրությունը 2019 թվականի օգոստոսի 30-ին գումարած նիստինն է:

Նախորդ երեք հակակոռուպցիոն ռազմավարությունների դեպքում չի տրամադրվել փաստարկված մոնիթորինգի և գնահատման զեկույց, որը կներառեր որակյալ և խորքային տվյալներ կատարված աշխատանքի, չկատարված միջոցառումների պատճառների և հիմնավորումների վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն կրնձեռեր չափել այդ քաղաքականության ազդեցությունը կոռուպցիայի դեմ պայքարում: Հրապարակված զեկույցները պարունակում են ընդհանուր տեղեկություններ ձեռնարկված միջոցառումների մասին:²⁸

²⁷ <<https://anti-corruption.gov.am/am/boardinfo>> (դիտվել է 15 նոյեմբերի, 2020թ.):

²⁸ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018թթ. գործողությունների ծրագրով նախատեսված 2018 թվականի միջոցառումների կատարման ընթացքի տարեկան ամփոփ հաշվետվությունը հասանելի է՝ <https://anti-corruption.gov.am/vfs/reports/Ardir-Razmavarutyun-2018_ENG.pdf> (դիտվել է 15 նոյեմբերի, 2020թ.):

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ չորրորդ ռազմավարությունը նախատեսում է համակարգում, մոնիթորինգ, վերահսկողություն և հանրային հաղորդակցում՝ կապված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա 2019-2022 թվականների իրականացման միջոցառումների ծրագրի իրականացման հետ, որը, ի թիվս այլոց, նախատեսում է ՔՀԿ-ների ներգրավում մոնիթորինգի և գնահատման գործընթացում՝ որպես այլընտրանքային գործիք:²⁹

Հոդված 5, մաս 4

Փոխգործակցություն միմյանց և համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ սույն հոդվածում նշված միջոցների մշակմանը և իրականացմանն աջակցելու գործում:

Այս մասը դիտարկվում է ամբողջությամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ լավ:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխանը, ընդհանուր առմամբ, ամբողջական է: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հարկավոր է կարևորել միջազգային կազմակերպությունների գնահատականները և ջանքեր գործադրել այդ գնահատականներն առավել անխոցելի դարձնելու ուղղությամբ:

Ինչպես նշվեց վերևում, ընդհանուր առմամբ, կառավարությունը հաշվի է առնում միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների առաջարկությունները: Այնուամենայնիվ, առկա են ակնառու օրինակներ, երբ կառավարությունը այդ առաջարկությունները կյանքի կոչելու մեջ գրանցել է հետընթաց, և ոչ թե առաջընթաց: Օրինակ՝ Հայաստանում Հակակոռուպցիոն բարեփոխումներին վերաբերող Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի վերաբերյալ ՏՀԶԿ զեկույցում, ՏՀԶԿ-ն ողջունել է ԿԿՀ անդամների ընտրության կազմակերպումը անկախ մրցութային խորհրդի կողմից և կոչ արել ավելի թափանցիկ գործընթաց իրականացնել:³⁰ Ազգային ժողովը, ի հակառակ, նախաձեռնեց փոփոխություններ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում, որոնց ուժով անկախ մրցութային խորհուրդը ամբողջությամբ վերացավ:

Արդյունքում, ԳԲԵԿՈ-ն Հայաստանի համապատասխանության վերաբերյալ իր երկրորդ զեկույցի շրջանակներում (Չորրորդ գնահատման փուլ, կոռուպցիայի կանխարգելում պատգամավորների, դատավորների և դատախազների մասով) հորդորեց ՀՀ իշխանություններին ապահովել ԿԿՀ-ի անկախությունը, մասնավորապես՝ հավասարակշռված և կայուն կազմի ու թափանցիկ ընթացակարգերի միջոցով: Բացի այդ, ԳԲԵԿՈ-ն նշել է, որ նոր օրենքը ԿԿՀ-ի անդամների նշանակման գործընթացից հանել է մրցութային խորհուրդը և ներդրել ուղղակի առաջադրումների համակարգ: Նման մոդելի հիմնական մտահոգությունը

²⁹ Տե՛ս հղում 16:

³⁰ «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլ», ՏՀԶԿ, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց, հանձնարարական 3. Հակակոռուպցիոն քաղաքականության համակարգման և կանխարգելման ինստիտուտներ, հասանելի է՝

<<https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

քաղաքականացման զգալի ռիսկն է:³¹ ԳՐԵԿՈ-ի գնահատականից հետո Ազգային ժողովը փոփոխեց օրենքը և վերականգնեց անկախ մրցութային խորհրդի ինստիտուտը, միայն թե այն կիրառելի կլինի ԿԿՀ-ի երկրորդ կազմի դեպքում:

Թերություն

Միջազգային կազմակերպությունների առաջարկությունները կատարելիս Կառավարությունը հետընթաց գրանցեց: Որոշ դեպքերում հաջողված փորձը փոխարինվեց խոցելի փորձով:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 6. Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին կամ մարմիններ

Հոդված 6, մաս 1

Ապահովել մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում, մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են. ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված քաղաքականության իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը. բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով զիտելիքներն ընդլայնելը և տարածելը:

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխանը ամբողջական չէ: Հայաստանում առկա է ապակենտրոնացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ, ինչը նշանակում է, որ կոռուպցիայի դեմ պայքարը, կոռուպցիայի կանխարգելումը, հակակոռուպցիոն կրթությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականությունը իրականացնում են տարբեր մարմիններ: Ըստ այդմ, կոռուպցիայի կանխարգելումը և հակակոռուպցիոն կրթությունն իրականացվում է **ԿԿՀ-ի** կողմից, հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակում է **ՀՀ ԱՆ-ը**, հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդատվական մարմին է հանդիսանում **Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը**, որը ղեկավարում է **ՀՀ վարչապետը**:

Ա. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքն ընդունվել է 2017թ.-ին, իսկ ԿԿՀ-ի անդամներն ընտրվել են 2019թ.-ին: ԿԿՀ-ն ինքնավար, կոլեգիալ մարմին է, ունի

³¹ Տե՛ս Գնահատման չորրորդ փուլ, Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում: ԳՐԵԿՈ-ի Հայաստանի վերաբերյալ համապատասխանության երկրորդ զեկույց, հանձնարարական 86, հասանելի է՝ <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680993e83?fbclid=IwAR120tFe5fYP8f0BhACdJnzROVKKDDGaxrzyQSZ_UMGjlHk4O9Nd3DMxm0> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

հինգ անդամ³² և պատասխանատու է կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության գործառնությունների իրականացման համար:³³

2019թ.-ին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարվեցին, որի արդյունքում վերացվեց անկախ մրցութային խորհուրդը, հետևապես՝ խորհրդի կողմից ԿԿՀ-ի անդամների նշանակման կարգը:³⁴ Այս փոփոխությունների ուժով՝ ԿԿՀ-ն կազմավորվեց անդամների ուղղակի առաջադրմամբ՝ հետևյալ սուբյեկտների կողմից. մեկական անդամի թեկնածուներ առաջադրեցին ՀՀ կառավարությունը, Ազգային ժողովի երեք խմբակցությունները («Իմ քայլը», «Բարգավաճ Հայաստանը» և Լուսավոր Հայաստանը) և Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ):

Պետք է նշել, որ թեկնածուին առաջադրող մարմնի համար թեկնածուի ընտրության հատուկ ընթացակարգեր նախատեսված չեն (այսինքն՝ թեկնածուների ընտրության հրապարակային հայտարարություն չի եղել, և ոչ մի մրցույթ չի անցկացվել): Ազգային ժողովը վերը նշված հինգ անդամներին ընտրեց երեք, չորս և վեց տարի ժամկետներով³⁵ և կազմավորեց ԿԿՀ-ը: Արդյունքում, ԿԿՀ-ը ստեղծվել է բացառապես քաղաքական պայմանավորվածության արդյունքում՝ առանց ինստիտուցիոնալ անկախության ապահովման, մինչդեռ այն մասնագիտացված կառույց է, և նրա նշանակումները պետք է լինեն բացառապես մասնագիտական տիրույթում, այլ ոչ թե քաղաքական: Մասնագիտացված ՔՀԿ-ները այս կապակցությամբ բազմիցս նշել են, որ ԿԿՀ առաջին կազմի ձևավորումը՝ ոչ մրցակցային, քաղաքական պայմանավորվածությունների միջոցով, խիստ խոցելի է:³⁶

Նշենք, որ անկախ մրցութային խորհուրդ ունենալու իրավական կարգավորումը ՏՀԶԿ-ի կողմից բարձր գնահատվեց Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի վերաբերյալ 2018-ի հոկտեմբերին զեկույցում»:³⁷

Բացի այդ, 2019 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Հայաստանի վերաբերյալ 4-րդ գնահատման զեկույցում, *inter alia* (ներառյալ դատական և դատախազական համակարգը), ԳԲԵԿՈ-ն անդրադարձել է ԿԿՀ-ի անկախությանը՝ նշելով, որ «Ազգային ժողովի կողմից ընդունված նոր օրենքը ԿԿՀ անդամների նշանակման գործընթացից հեռացնում է մրցութային

³² Ներկայում ԿԿՀ-ն ունի 4 անդամ, քանի որ ընտրվելու հաջորդ օրը «Իմ քայլը» խմբակցության թեկնածուն հրաժարական տվեց: Տե՛ս <<https://iravaban.net/246830.html>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

³³ Կառավարության ստուգաթերթում նշվում է նաև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը: ԿԿՀ-ի ձևավորումից հետո էթիկայի հանձնաժողովի գործունեությունը դադարեցվել է:

³⁴ Նախկին կանոնակարգի համաձայն, մրցութային խորհուրդը անկախ էր և բաղկացած էր հետևյալ հինգ կառույցների մեկական ներկայացուցչից. Ազգային ժողով, Մահմանադրական դատարան, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ՀՀ փաստաբանների պալատ, և Հանրային խորհուրդ (Հանրային խորհուրդը սահմանադրական մարմին է, որը բաղկացած է ՀՀ-ում գործող ՔՀԿ-ներից): ՔՀԿ-ների մասնակցությունն այս գործընթացին ապահովեցին Փաստաբանների պալատը և Հանրային խորհուրդը:

³⁵ ԿԿՀ առաջին կազմի դեպքում պաշտոնավարման ժամկետները պայմանավորված են թեկնածուներին առաջադրող կառույցներից: Ինչ վերաբերում է երկրորդ կազմին, ապա բոլոր անդամների լիազորությունների ժամկետը նախատեսվում է վեց տարի:

³⁶ Հայաստանի ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի հայտարարությունը «ԿԿՀ-ի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, հասանելի է՝ <<https://armla.am/43693.html>>:

³⁷ Տե՛ս «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլ», ՏՀԶԿ, Նոր առաջարկություն 3. Հակակոռուպցիոն քաղաքականության համակարգման և կանխարգելման ինստիտուտներ:

հանձնաժողովին և ներդնում ուղղակի առաջադրումների համակարգ: Նման մոդելի հիմնական մտահոգությունը քաղաքականացման զգալի ռիսկն է:³⁸ Սա հակակոռուպցիոն մարմինների համար կարևոր գործոն է, քանի որ քաղաքական միջամտությունից և ազդեցությունից դրանց մեկուսացումը հանդիսանում է մարմինների արդյունավետության ապահովման հիմնական սկզբունք: ՔՀԿ-ները ներկայում առաջադրման կամ ընտրության գործընթացում ներկայացված չեն: Կառավարությունն ու իշխող խորհրդարանական խմբակցությունը կարող են վերահսկել ԿԿՀ-ի մեծամասնությունը: ԳՐԵԿՈ-ն հորդորում է իշխանություններին ապահովել ԿԿՀ-ի անկախությունը, մասնավորապես՝ հավասարակշռված և կայուն կազմի և թափանցիկ ընթացակարգերի միջոցով:³⁹

ԳՐԵԿՈ-ի գնահատականից հետո Ազգային ժողովը փոփոխեց օրենքը և վերականգնեց անկախ մրցութային խորհրդի ինստիտուտը, միայն թե այն կիրառելի կլինի ԿԿՀ-ի երկրորդ կազմի դեպքում: Մասնավորապես, Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ⁴⁰ ԿԿՀ անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար:

Անդրադառնալով ԿԿՀ-ի լիազորություններին՝ հարկ է նշել, որ դրանք զգալիորեն ավելացել են: Մասնավորապես, ԿԿՀ-ն նոր լրագորություններից են՝ քննել և լուծել հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, էթիկայի կանոնների խախտումների, իրավիճակային շահերի բախման և գույքի ու եկամտի իրավիճակային հայտարարագրերի հետ կապված դիմումներ, քննել և լուծել հայտարարագիր ներկայացնելու կանոնների խախտումների հետ կապված դեպքերը (օրինակ, եթե հայտարարագրերը չեն համապատասխանում լրացման պահանջներին, կամ դրանք ժամանակին չեն ներկայացվել), խորհրդատվական պարզաբանումներ տալ վարքագծի կանոնների վերաբերյալ, մշակել կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր և դրանք ներկայացնել կառավարությանը և այլն:

Ազգային ժողովի կողմից 2020թ. մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով փոփոխություն կատարվեց ԿԿՀ-ի կողմից գույքի, եկամտի և շահերի վերաբերյալ հայտարարագրերը ստուգելու լիազորություններում:⁴¹ Հայտարարագրերի վերլուծությունը կարող է իրականացվել լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա: ԿԿՀ-ն իրավասու է դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ կենտրոնական բանկին և այլ կառույցներին՝ հայտարարագրերի պատշաճ ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար: Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հետ կապված

³⁸ Տե՛ս Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությունը: ՄԱԹՀՊԳ, 2012թ:

³⁹ Տե՛ս Գնահատման չորրորդ փուլ, Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում: ԳՐԵԿՈ-ի Հայաստանի վերաբերյալ համապատասխանության երկրորդ զեկույց, հանձնարարական 86:

⁴⁰ Մրցութային խորհուրդը բաղկացած կլինի Կառավարության, Ազգային ժողովի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի և Փաստաբանների պալատի կողմից նշանակված մեկական անդամներից: Ազգային ժողովի կողմից նշանակված խորհրդի անդամն ընտրվում է Ազգային ժողովի խմբակցությունների համաձայնությամբ:

⁴¹ «ԿԿՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26.1 հոդվածի համապատասխան փոփոխությունները ընդունվել են 25.03.2020-ին և ուժի մեջ են մտել 02.05.2020-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141497> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

տեղեկատվությունը ներառում է նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարված արժեթղթերի գործարքների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև վարկային բյուրոներից ստացված վարկային տեղեկատվությունը կամ վարկային պատմությունը: Բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն ստանալուց հետո ԿԿՀ-ն իրավունք ունի հայտարարատուից հայցելու ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ համապատասխան հիմքերի առկայության դեպքում նյութերն ուղարկել գլխավոր դատախազություն:

Թերություն

Կառավարության ընդունած օրենսդրական փոփոխություններով վտանգվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անկախությունը:

Բ. ՀՀ ԱՆ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը մշակում է հակակոռուպցիոն քաղաքականությունը և իրականացնում դրա մոնիթորինգն ու գնահատումը:⁴²

Գ. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը Հայաստանում գործում է 2004 թվականից: 2019 թվականին նշված խորհուրդը դադարեցրեց իր գործունեությունը: Փոխարենը, 2019 թվականի հունիսի 24-ին ՀՀ վարչապետի N 808-Ն որոշմամբ ստեղծվեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը: Հատկանշական է, որ նոր խորհուրդը էապես չէր տարբերվում նախորդից: Անվանումը փոխվեց, որոշ լիազորություններ ավելացվեցին, բայց հիմնական փոփոխությունն այն էր, որ Հայաստանի ՔՀԿ Հակակոռուպցիոն կոալիցիան հանվեց Խորհրդի կազմից:⁴³ Արդյունքում, յոթ մրցութային տեղերը տրամադրվեցին միայն ՀԿ-ներին, և ոչ թե ՀԿ-ների կոալիցիաներին/ցանցերին:⁴⁴

⁴² Կառավարության ստուգաթերթում նշվում է նախկին կառույցը՝ «Առաջին փոխվարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի և գնահատման բաժին»: Վերջինիս վերակազմակերպման արդյունքում հետագայում ստեղծվեց ՀՀ վարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը: Սակայն, ներկայում այս վարչությունը չի գործում, և հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի գործառնություններն իրականացնում է ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը:

⁴³ 71 ՔՀԿ-ներ հանդիսանում են Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամներ, որոնք նախաձեռնել և մասնակցել են Հայաստանում մի շարք հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը, այդ թվում՝ ապօրինի հարստացման քրեականացումը, ազդարարների համակարգի օրենսդրական դաշտի ստեղծումը և հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի՝ ներառյալ ԿԿՀ օրենսդրական դաշտի ձևավորումը, պետական գնումների գործընթացում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը, բիզնեսի և այլ ոլորտներում հակակոռուպցիոն մի շարք փոփոխությունների կատարումը և այլն: Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են՝ < <http://aac.am/>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁴⁴ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում ՀԿ-ներ ներգրավելու նպատակով, վարչապետի որոշման համաձայն ԱՆ-ը հայտարարեց մրցույթ, դիմելու համար վերջնաժամկետը սահմանելով 2020 թ. հուլիսի 11-ին: ՀԿ-ների ներգրավումը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում կազմակերպվել է ընթացակարգային խախտումներով, որի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները հասանելի են՝ <<https://iravaban.net/233713.html>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան բազմիցս արտահայտել է իր մտահոգությունները նշված կանոնակարգի վերաբերյալ՝ շեշտելով, որ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդից ՀԿ-ներին հեռացնելը անօրինական է և հասարակությանը զրկում է ՔՀԿ-ների միջոցով կոռուպցիայի դեմ պայքարին մասնակցությունից: Արդյունքում, երկար քննարկումներից և հորդորներից հետո, ԱՆ-ն մշակեց վարչապետի 2019թ. հունիսի 24-ի թիվ 808-N որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծը, համաձայն որի ՔՀԿ-ների կոալիցիաները/ցանցերը կարող են մրցութային հիմունքներով միանալ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին:⁴⁵ Սակայն, ՀՀ կառավարության աշխատակազմն այս անգամ ևս մերժեց ընդունել որոշման նախագիծը: ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ընդգծեց իր մտահոգությունն առ այն, որ այդ մերժումները կատարվում են դիտավորությամբ: Կոալիցիան չի բացառում այն, որ առկա է դիմադրություն ներկայիս կառավարությունում որոշակի անհատների և խմբակցությունների կողմից, ովքեր նախընտրում են Խորհուրդը գործարկել առանց Կոալիցիայի:⁴⁶

Թերություն

Անցած երկու տարիների ընթացքում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունն անարդյունավետ է և քաղաքականացված: Մի շարք անկախ մասնագիտացված հակակոռուպցիոն ՔՀԿ-ներ ներկայացված չեն Խորհրդում:

Հոդված 6, մաս 2

Սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմինն կամ մարմիններին ապահովել անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառնություններն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված տեղեկատվությունը թերի է: ԿԿՀ-ն ինքնավար մարմին է, որը ստեղծվել է համանուն օրենքի հիման վրա: ԿԿՀ-ն անկախ սահմանադրական մարմին չէ և օժտված չէ սահմանադրական երաշխիքներով (ինչպես օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանը):⁴⁷ Ավելին, ԿԿՀ-ի մասին օրենքը ԿԿՀ-ն որպես անկախ մարմին չի նախատեսում: Նույն օրենքի համաձայն՝ անկախ են համարվում միայն ԿԿՀ անդամները, իսկ ԿԿՀ առաջին կազմի ընտրությունը, ինչպես արդեն նշվել է 6-րդ հոդվածի 1-ին մասում, եղել է

⁴⁵ Որոշման նախագիծը հասանելի է՝ <<https://www.e-draft.am/projects/2720/about>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁴⁶ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ պարոն Կարեն Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

⁴⁷ Հատկանշական է, որ ԻՀԱ-ի նախագահ պարոն Կարեն Զադոյանը, ով ՀՀ վարչապետի որոշմամբ մրցակցային հիմունքներով ընդգրկվել է Սահմանադրական բարեփոխումների մասնագիտացված հանձնաժողովում, բարձրաձայնեց Հայաստանում հակակոռուպցիոն մարմիններին սահմանադրական անկախ կարգավիճակ տրամադրելու հարցը և այս հարցի քննարկումը ներառեց հանձնաժողովի օրակարգում: ԻՀԱ-ն ուսումնասիրություն է իրականացրել խնդրո առարկայի վերաբերյալ և մշակել հայեցակարգ, որոնք հասանելի են՝ <<https://armla.am/en/6313.html>>, <<https://armla.am/en/6324.html>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

քաղաքական համաձայնությունների մակարդակում: Միննույն ժամանակ, օրենքը նախատեսում է ԿԿՀ ֆինանսական անկախություն, բայց չի նախատեսում նյութական ռեսուրսների և աշխատանքային ոլորտների վերաբերյալ կանոնակարգեր:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 7. Հանրային հատվածը

Հոդված 7, մաս 1

Ստեղծել, պահպանել և ամրապնդել քաղաքացիական ծառայողների և, համապատասխան դեպքերում, ոչ ընտրովի այլ պաշտոնատար անձանց աշխատանքի ընդունման, հավաքագրման, ծառայություն անցկացնելու, ծառայողական առաջխաղացման և պաշտոնաթողության անցնելու համակարգեր:

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ լավ:

Կառավարության ստուգաթերթում ներառված պատասխանն ամբողջական չէ: Նախ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն (ընդունվել է 23.03.2018թ. - ին, ուժի մեջ է մտել 01.07.2018թ.-ին)⁴⁸ քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցվում են անժամկետ՝ մրցույթի արդյունքով կամ վարկանիշային ցուցակներից կամ փոխադրման կամ վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքով կամ կադրերի ռեզերվից՝ մինչև վերը նշված օրենքով սահմանված տարիքի լրանալը, և որոշակի ժամկետով՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով կամ տեղափոխության հետևանքով կամ գործուղման դեպքում: Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) հիմնված է հավասար հնարավորությունների և արժանիքների վրա: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո երեք ամսվա ընթացքում: Այնուամենայնիվ, այս իրավական կարգավորումը միշտ չէ, որ գործնականում պահպանվում է, քանի որ կարգավորող իրավական ակտերը մրցույթի հայտարարության համար, և հետևաբար, պաշտոններում նշանակվելու համար, ավելի կարճ ժամկետներ են նախատեսում: Այս դեպքերում մրցույթը հայտարարվում է նշանակումից անմիջապես առաջ: Օրինակ, երբ համապատասխան մարմինը հայտարարում է ժամանակավոր քաղաքացիական ծառայողի թափուր պաշտոն, նշանակումը կատարվում է (պայմանագիրը կնքվում է)՝ հայտարարությունը հրապարակելուց հետո դիմելու համար յոթօրյա ժամկետից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում:⁴⁹ Այն դեպքում, երբ համապատասխան մարմինը հայտարարում է փորձագետի թափուր պաշտոնի մասին, նշանակումը կատարվում է

⁴⁸ «Քաղաքացիական ծառայողների մասին» ՀՀ օրենք, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁴⁹ Ժամանակավոր աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին կառավարության որոշումը հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145908> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.).

(պայմանագիրը կնքվում է) հայտարարությունից հետո յոթերորդ օրը:⁵⁰ Այնուամենայնիվ, շատ դեպքերում հայտարարությունները հրապարակվում են պետական մարմինների կայքերում՝ որոշակի թեկնածուների համար բնորոշ չափանիշներով:

Մրցույթ կազմակերպելու նպատակով ձևավորված հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից: Միայն մեկ մասնակից է հաղթահարում հարցազրույցի փուլը: արցազրույցի արդյունքում հանձնաժողովը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ՝ նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին: Այնուամենայնիվ, մրցույթի, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացը թափանցիկ չէ. քաղաքացիական հասարակության ոչ մի ներկայացուցիչ հանձնաժողովի անդամ կամ դիտորդ չէ: Նման մրցույթներին հետևելու նպատակով ապահովված չեն հանրության համար հասանելիության միջոցներ: Ըստ ԻՀԱ-ին տրամադրված պաշտոնական տեղեկատվության, այս ոլորտի փոփոխությունների ազդեցությունը դեռ չի գնահատվել, քանի որ համակարգը գտնվում է նախնական փուլում:⁵¹

Երկրորդ, 2019 թ.-ի հունվարի 9-ին ՀՀ առաջին փոխվարչապետն ընդունեց թիվ 2-Ն որոշումը՝ «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը. Վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացված հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագրեր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները»:⁵² Ի լրումն, ՀՀ ԱՆ-ը այլ պետական մարմինների հետ համատեղ ուսումնասիրել է հանրային ծառայողների վարձատրության համակարգի բարելավման հիմնական ուղղությունները; Ուսումնասիրության արդյունքում մշակված առաջարկությունները ներառվել են պետական կառավարման բարեփոխումների ռազմավարության նախագծում, որը դեռևս քննարկման փուլում է:⁵³

Երրորդ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի⁵⁴ համաձայն՝ ԿԿՀ-ի որոշ լիազորություններ հետևյալներ են.

1. ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը).

⁵⁰ Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին կառավարության որոշումը հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143797> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁵¹ Տեղեկատվությունը տրամադրված է ՀՀ վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից՝ 2020 թ. սեպտեմբերի 29-ին:

⁵² Որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/poxvarchpet/2019/2v_voroshum.pdf (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.).

⁵³ Հաշվետվություն հակակոռուպցիոն ռազմավարության 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի մասին, կետ 12, հասանելի է՝ http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9436321736461_hashvetvutyun.pdf (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁵⁴ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 09.06.2017 թ.-ին և ուժի մեջ է մտել 20.11.2019թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146462> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

2. ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը.
3. մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը.

Այդ լիազորությունների իրականացման համար ԿԿՀ-ն սկսել է ուսումնասիրել միջազգային և ներպետական օրենսդրությունը:⁵⁵ Բացի այդ, ԿԿՀ-ն մշակել է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարքագծի կանոններ և պետական ծառայողի տիպային կանոնագիրք, որը ներկայումս քննարկվում է միջազգային գործընկերների հետ:⁵⁶

Թերություններ

Քաղաքացիական ծառայողների ընտրության մրցույթների, ինչպես նաև նրանց նշանակումների վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացը թափանցիկ չէ, քաղաքացիական հասարակության ոչ մի ներկայացուցիչ մրցութային հանձնաժողովի անդամ կամ դիտորդ չէ: Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների և պետական ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի մշակումը դեռևս քննարկման փուլում է և ամբողջությամբ չի իրականացվել ժամանակին:

Հոդված 7, մաս 2

Քննարկել համապատասխան օրենսդրական և վարչական միջոցները, սույն Կոնվենցիայի նպատակների և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքների համաձայն, պետական պաշտոններում թեկնածուների և ընտրությունների չափանիշները սահմանելու համար:

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ լավ:

Կառավարության ստուգաթերթում ներառված պատասխանն ամբողջական չէ: Բացի այդ, հարկ է նշել, որ կան նաև այլ իրավական ակտեր, որոնք հանրային ծառայության թեկնածուների համար պահանջներ և չափանիշներ են պարունակում: Մասնավորապես, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի⁵⁷ 15-րդ հոդվածը սահմանում է հանրային ծառայության պաշտոնների անվանացանկը, պաշտոնի անձնագիրը (աշխատանքի նկարագիրը), հաստիքացուցակը և այլն:

Հոդված 7, մաս 3

⁵⁵ Հաշվետվություն հակակոռուպցիոն ռազմավարության 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի մասին, մաս 13:

⁵⁶ Հարցազրույց ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ տիկին Մարիամ Գալստյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի հոկտեմբերի 30-ին:

⁵⁷ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 23.03.2018 թ.-ին և ուժի մեջ է մտել 09.04.2018 թ., հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141524>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Քննարկել համապատասխան օրենսդրական և վարչական միջոցները ընտրովի պետական պաշտոններում թեկնածուների ֆինանսավորման և, որտեղ կիրառելի է, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը մեծացնելու համար:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

Կառավարության ստուգաթերթում ներառված պատասխանը ամբողջական չէ: Մասնավորապես, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի⁵⁸ համաձայն՝ կուսակցությունները պետական մարմիններին ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում: Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների, գույքի և ծախսերի մասին հաշվետվությունը և օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաև սահմանված կարգով այն տեղադրել ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Բացի այդ, կուսակցության կողմից ստացված նվիրատվությունների աղբյուրը, անկախ արժեքից, նշվում է կուսակցության հաշվետվության մեջ: Կուսակցության կողմից նախընտրական քարոզչության նախապատրաստման և իրականացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.13-189.16 հոդվածներով պատասխանատվության տեսակներ են նախատեսված:⁵⁹ Հատկանշական է, որ պատժամիջոցները համաչափ չեն: Օրինակ՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում 40,000-50,000 դրամի չափով (մոտավորապես կազմում է 80-100 ԱՄՆ դոլար): Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ 450,000-500,000 դրամի չափով (մոտավորապես կազմում է 900-1000 ԱՄՆ դոլար): Նույն պատասխանատվությունը կիրառվում է կրկին, եթե տուգանքի նշանակումից հետո նույն հաշվետվությունը դեռ չի հրապարակվել:

Մեկ այլ օրինակ. կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում 100,000-150,000 դրամի չափով (մոտավորապես կազմում է 200-300 ԱՄՆ դոլար): Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի կիրառումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում 200,000-250,000 դրամի չափով (մոտավորապես կազմում է 400-500 ԱՄՆ դոլար): Այս պատժամիջոցներից շատերը, ըստ էության, կարող են ակնկալվող կանխարգելիչ արդյունքը չունենալ, իսկ կոնկրետ իրավիճակներում կուսակցությունները նախընտրում են

⁵⁸ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143938> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁵⁹ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքը, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146718> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

կրել վարչական պատասխանատվություն՝ պարզապես միջոցների աղբյուրների և ծախսերի վերաբերյալ հայտարարություններ ներկայացնելուց խուսափելու համար:⁶⁰

Հասանելի աղբյուրներում հրապարակված տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ վերջին տարիներին այդ պատժամիջոցները որևէ կուսակցության նկատմամբ չեն կիրառվել: Հարկ է նշել, որ կուսակցության դրամական միջոցները գոյանում են (1) միանվագ վճարներից (մուտքի վճարներից), անդամավճարներից, եթե դրանք նախատեսված են կուսակցության կանոնադրությամբ, (2) նվիրատվություններից, (3) բյուջեից ֆինանսավորումից, որը ներառում է պետական ֆինանսավորում, (4) քաղաքացիական գործարքներից և օրենքով չարգելված այլ եկամուտներից:

Քաղաքական կուսակցություններն իրավունք ունեն ֆիզիկական և իրավաբանական անձանցից նվիրատվություն ստանալ՝ գույքի և դրամական միջոցների տեսքով: Միևնույն ժամանակ, նվիրատվություններ չեն թույլատրվում (1) բարեգործական և կրոնական կազմակերպություններից, ինչպես նաև նրանց կողմից հիմնադրված կազմակերպություններից, (2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, բացառությամբ՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով սահմանված մարմինների կողմից տրամադրվող ֆինանսավորման, (3) պետական և ոչ առևտրային համայնքային կազմակերպություններից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ շահույթ հետապնդող կազմակերպություններից, (4) օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, ինչպես նաև օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե այդ իրավաբանական անձի բաժնեմասի կապիտալում օտարերկրյա մասնակցի բաժնեմասը 30%-ից ավելի է, (5) միջազգային կազմակերպություններից, (6) քաղաքացիություն չունեցող անձանցից, (7) անանուն անձանցից:⁶¹

ՀՀ-ում կուսակցությունների ֆինանսավորումը վերահսկելու լիազորված պետական մարմինը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն է: Այն անկախ մարմին չէ և գործում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ) կից:⁶² Համաձայն ՀՀ Սահմանադրության (հոդված 194)՝ ԿԸՀ-ն անկախ պետական մարմին է: «ՀՀ Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնը քաղաքացիական պաշտոն է, և վերջինս օգտվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան երաշխիքներից: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարը նշանակվում է ԿԸՀ-ի որոշմամբ: Ակնհայտ է, որ իրավական երաշխիքները տրամադրված են միայն ծառայության պետին, և Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը որպես այդպիսին անկախ մարմին չէ, ուստի չունի անկախության իրավական երաշխիքներ: Բացի այդ, ծառայության գործունեությունը չի կարգավորվում հատուկ ծառայության գործունեության համար ընդունված օրենքով, այլ կարգավորվում է ԿԸՀ-ի կողմից ընդունված և ԱՆ կողմից 2016 թվականին գրանցված պարզ կարգով:⁶³

⁶⁰ Հարցազրույց հակակոռուպցիոն անկախ փորձագետ Մարատ Ատովմյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի հոկտեմբերի 15-ին:

⁶¹ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք:

⁶² Տե՛ս <<https://www.elections.am/audit/>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁶³ Վերահսկիչ վերստուգիչ ծառայության գործունեության կարգը տե՛ս <http://res.elections.am/images/dec/16.39_N.pdf> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Թերություններ

Կուսակցությունների գործունեության և դրանց ֆինանսավորման նկատմամբ, ինչպես նաև կուսակցությունների նկատմամբ պատասխանատվություն սահմանելու հարցերում վերահսկողությունը բավարար չէ: Կուսակցությունների գործունեության վերահսկումը և դրանց թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող անկախ մարմինը բացակայում է:

Հոդված 7, մաս 4

Ստեղծել, պահպանել և ամրապնդել այնպիսի համակարգեր, որոնք նպաստում են թափանցիկությանը և կանխարգելում են շահերի բախման առաջացումը:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթում ներառված պատասխանն ամբողջական է: Սակայն հատկանշական է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխը՝ «Բարեվարքության համակարգը»,⁶⁴ սահմանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը: Բացի այդ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի և բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտներ, որոնք գործում են համապատասխան մարմինների աշխատակազմի կառավարման ստորաբաժանումում: Ըստ ԻՀԱ-ի ստացած պաշտոնական տեղեկատվության, 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվել է 43 բարեվարքության հարցերով կազմակերպիչ:

ՀՀ ստանձնած այս պարտավորության ներքո առանցքային է նշել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի հետ կապված առկա մարտահրավերները:

Նախ, ոչ մի կենտրոնացված կամ ապակենտրոնացված մարմին չի համակարգում և վերահսկում բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքը: Յուրաքանչյուր մարմին իր գործառնություն իրականացնում է իր գիտելիքների և արհեստավարժության շրջանակներում՝ այդ պաշտոնում նշանակելով նույն մարմնում այլ պաշտոն զբաղեցնող անձի (որի նախկին պաշտոնը կապված չէր ո՛չ բարեվարքության, և ո՛չ հակակոռուպցիոն գործունեության հետ):

ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը ապահովում է ՀՀ-ում քաղաքացիական ծառայության ղեկավարումը, միասնականությունը:⁶⁵ Հարկ է նշել, որ բարեվարքության հարցերով կազմակերպիչ ինստիտուտը, որպես այդպիսին, բավականին նոր է Հայաստանի պետական և տեղական

⁶⁴ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք:

⁶⁵ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշումը հասանելի է <<http://www.irtek.am/views/act.aspx?aid=95904>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

ինքնակառավարման համակարգի համար, և կազմակերպիչներից շատերը ծանոթ չեն այս ինստիտուտի բոլոր նրբություններին:

Երկրորդ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով, բարեվարքության հարցերով կազմակերպիչը ավելի շատ «կազմակերպիչ» է, քան որոշում կայացնող: Հետևաբար, բարեվարքության հարցերով կազմակերպիչը, չունենալով մասնագիտական վերահսկիչ մարմին, դժվար թե կարողանա ինքնուրույն կատարել իր կարևոր գործառնությունները:

Երրորդ, բարեվարքության հարցերով կազմակերպիչի արհեստավարժության վերաբերյալ առկա են մտահոգություններ: Նախևառաջ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, բարեվարքության հարցերով կազմակերպիչները պետք է վերապատրաստում անցնեն, որպեսզի կարողանան իրականացնել իրենց լիազորությունները: Ըստ ԱՆ-ի՝ 2019թ.-ին վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել էր դասընթացներ պետական մարմինների բոլոր բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար: Սակայն, խնդիրն այն է, որ այս դասընթացները կազմակերպվում են գուտ ձևական, և ոչ թե բովանդակային արդյունավետություն ապահովող: Իսկ բարեվարքության հարցերով կազմակերպիչները դեռ պատրաստ չեն անցնել այս դասընթացները: Մասնավորապես, համապատասխան միջավայրը չի ապահովվում, ինչը իր հերթին հերթական խնդիրների շղթա է առաջացնում: Օրինակ, բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառնություններից մեկը՝ բարեվարքության հարցերի վերաբերյալ ուսումնական պլանների մշակումն է: Հետևաբար, եթե բարեվարքության հարցերով կազմակերպիչները չունեն բավարար արհեստավարժություն, անհասկանալի է, թե նրանք ինչպես կկարողանան վերապատրաստել իրենց գործընկերներին:

Չորրորդ, եթե բարեվարքության հարցերով կազմակերպիչները ի վիճակի չեն լիարժեք իրականացնել իրենց խորհրդատվական գործառնությունը, ապա հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ինստիտուտը նույնպես ի վիճակի չէ արդյունավետ գործել: Օրինակ, եթե էթիկայի հանձնաժողովները բարեվարքության հարցերով կազմակերպիչներից որակյալ մասնագիտական խորհրդատվություն չեն ստանում այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ պետական պաշտոնյաների ոչ պատշաճ վարքագիծը, շահերի բախումը, վարքագծի կանոնների խախտումը, այլ սահմանափակումները, ուստիս դրանց արդյունավետությունը հարցականի տակ է դրվում:⁶⁶

Թերություններ

Բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքը համակարգող և վերահսկող որևէ կենտրոնացված կամ ապակենտրոնացված մարմին չկա: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով, բարեվարքության հարցերով կազմակերպիչը ավելի շատ «կազմակերպիչ» է, քան որոշում կայացնող: Հետևաբար, բարեվարքության հարցերով կազմակերպիչը, չունենալով մասնագիտացված վերահսկիչ մարմին, դժվար թե կարողանա ինքնուրույն կատարել իր կարևոր գործառնությունները: Իսկ եթե բարեվարքության հարցերով կազմակերպիչները ի վիճակի չեն լիարժեք իրականացնել իրենց խորհրդատվական գործառնությունը, ապա հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ինստիտուտը նույնպես ի վիճակի չէ արդյունավետ գործել:

⁶⁶ Հարցազրույց հակակոռուպցիոն անկախ փորձագետ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին անդամ Էդգար Շաթիրյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի սեպտեմբերի 17-ին:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 8. Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնադրերը

Հոդված 8, մաս 1

Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, ի թիվս այլոց, պետք է խրախուսի իր պաշտոնատար անձանց շրջանում անկաշառությունը, ազնվությունը և պատասխանատվությունը:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի V գլուխը վերաբերում է պետական պաշտոնատար անձանց բարեվարքության համակարգին: Այն ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը: Վարքագծի կանոնները պարտադիր են,⁶⁷ վարքագծի կանոնների խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն:⁶⁸ Կարգապահական վարույթները կարող են հարուցել էթիկայի (կարգապահական) հանձնաժողովները և ԿԿՀ-ն:⁶⁹ Վերջինս մանրամասն նկարագրված է սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների վերաբերյալ Կառավարության ստուգաթերթում:⁷⁰ Ինչ վերաբերում է գործող վարքագծի կանոնների պահպանմանը գործնականում, ապա վերջիններս հաճախ չեն պահպանվում, քանի որ էթիկայի հանձնաժողովները չունեն դրանք կիրառելու համար անհրաժեշտ կարողություններ:⁷¹ Օրինակ՝ էթիկայի խախտումներ են հայտնաբերվել Երևանի ավագանու 2019թ.-ի նիստերի ընթացքում:⁷² 2014-2017 թվականների ընթացքում ուսումնասիրված 709 գնումների պայմանագրերից 99-ում (14%) առկա է շահերի առերևույթ բախման իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունները հաղթող են ճանաչվել այն մարմինների գնումների մրցույթներում, որտեղ անձը պաշտոն է զբաղեցրել:⁷³

⁶⁷ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 28(3).

⁶⁸ Նույն տեղում, հոդված 28(9).

⁶⁹ Նույն տեղում, հոդված 45.

⁷⁰ Դատական համակարգում բարեվարքության ստուգումներ անցկացնելու և խորհրդատվական կարծիքներ տրամադրելու ԿԿՀ-ի լիազորությունների վերջին զարգացումները կքննարկվեն 11-րդ հոդվածի 1-ին մասի ներքո:

⁷¹ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

⁷² Հայտարարություն, ԿԿՀ, 31.01.2020, տե՛ս <<http://cpcarmenia.am/hy/news/item/2020/01/31/220000/>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁷³ «Շահերի բախումը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ կապված ընկերությունների մասնակցությամբ գնումների գործընթացում», տե՛ս <<http://cpcarmenia.am/en/news/item/2018/06/05/news109/>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Կայքի «Պաշտոնական նորություններ» և «Որոշումներ» բաժիններում առկա են տեղեկություններ բարձրաստիճան պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների *prima facie* (առերևույթ) խախտումների բազմաթիվ դեպքերի վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի⁷⁴ խախտումների հայտնաբերման կամ դրանց բացակայության⁷⁵ մասին: Այնուամենայնիվ, էթիկայի խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը, որը նշված է ՀՀ ԿԿՀ-ի և դրա նախորդի՝ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի տարեկան զեկույցներում, սակավ է: Միակ հրապարակայնորեն մատչելի վերջին տարեկան զեկույցները վերաբերում են ԿԿՀ 2016 և 2018 թվականների գործունեությանը: Մասնավորապես, 2016-ի զեկույցում նշված է. «Հանձնաժողովը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացել է 11 դիմում (2՝ քաղաքացիներից, 3՝ լրագրողներից և 6՝ հասարակական կազմակերպություններից): Դիմումներից հինգում արժարժվել են էթիկայի կանոնների, չորսում՝ շահերի բախման կանոնակարգումների ենթադրյալ խախտումներին առնչվող հարցեր: Դիմումներից երկուսը վերահասցեագրվել են այլ մարմինների՝ հարցին սահմանված կարգով քննաքննությանը տալու նպատակով: Մնացած դիմումների հետ կապված, դիմումատուները պատշաճ կարգով տեղեկացվել են դրանց քննարկման արդյունքների մասին»:⁷⁶ 2018-ի զեկույցում նշված տեղեկատվությունն էլ ավելի քիչ է. «2018թ.-ին Հանձնաժողովը քննարկել է էթիկայի հանձնաժողովների և շահերի բախման ենթադրյալ իրավիճակների վերաբերյալ 7 դիմում»:⁷⁷

Հայտարարագրերի առնչությամբ կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը քննարկվում է համապատասխան մասում (հոդված 8, մաս5):

Հոդված 8, մաս 2

Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի իր ենթակառուցվածքային և իրավական համակարգերի շրջանակներում կիրառել վարքագծի կանոնադրքեր և ստանդարտներ պետական գործառույթների ճշգրիտ, բարեխիղճ և պատշաճ իրականացման համար:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կիրառման մակարդակը՝ ցածր:

Վերջինս մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթի՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների պատասխաններում:

⁷⁴ Տե՛ս, օրինակ, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնաժողովի N 28-Ս որոշումը, ընդունվել է 18.03.2019թ. -ին, հասանելի է՝ <<http://cpcarmenia.am/files/legislation/326.pdf>> (վերաբերում է ՀՀ պետական վերահսկողության նախկին ղեկավարին), ՀՀ ԿԿՀ 03/2020 որոշումը, ընդունվել է՝ 26.10.2020թ.-ին, հասանելի է՝ <http://cpcarmenia.am/files/legislation/350.pdf> (վերաբերում է ԱԺ պատգամավոր, «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավարին), (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁷⁵ Տե՛ս, օրինակ, ՀՀ ԿԿՀ N 06/2019 որոշումը, ընդունվել է՝ 06.03.2020թ.-ին, հասանելի է՝ <<http://cpcarmenia.am/files/legislation/342.pdf>>, (վերաբերում է Երևանի քաղաքապետին); N 04/2020 որոշումը, ընդունվել է՝ 30.11.2020թ.-ին, տես՝ <<http://cpcarmenia.am/files/legislation/355.pdf>>, (վերաբերում է Առողջապահության նախարարին); (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁷⁶ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2016թ.-ի գործունեության հաշվետվություն, ՀՀ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, 2017, էջ 16, հասանելի է՝ <<http://cpcarmenia.am/files/legislation/291.pdf>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁷⁷ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2018թ.-ի գործունեության հաշվետվություն, ՀՀ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, 2019, հասանելի է՝ <<http://cpcarmenia.am/files/legislation/325.pdf>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Կցանկանայինք ավելացնել, որ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում որպես միջոցառում է նախատեսվել հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանումը:⁷⁸ Ի կատարումն նշյալ միջոցառումների՝ ԿԿՀ-ն 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում դիմել և ստացել է 30 պետական գերատեսչությունների գործող վարքագծի կանոնների վերաբերյալ տեղեկություններ: Զուգահեռաբար, իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն՝ գործող վարքագծի կանոնները կատարելագործելու, դրանք միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու և դրանց պրակտիկ կիրառելիության ինստիտուցիոնալ մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ: Նախատեսվում էր մշակված նախագծի շուրջ իրականացնել հանրային քննարկումների շարք, այնուհետև հաստատել այն, սակայն նոր կորոնավիրուսի տարածման պատճառով այդ աշխատանքները կասեցվել են: Վարքագծի կանոնների բացահայտված մի քանի խնդիրների առնչությամբ, մասնավորապես՝ պատասխանատվության միջոցների, դրանց համաչափության սահմանման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում Եվրոպայի Խորհրդի փորձագետների աջակցությամբ: Մինևույն ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կատարվել են անհրաժեշտ միջոցառումներ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների՝ կոնկրետ սպայի պատվի կանոնների բարեփոխման ուղղությամբ: Հարկ է նշել, որ Արտաքին գործերի նախարարության շրջանակում սահմանվել են արտաքին գործերի նախարարության կարգուկանոնը սահմանող, աշխատանքային պայմանների առանձնահատկություններն արտահայտող և նախարարության աշխատակիցների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորող ներքին կարգապահական կանոններ, սահմանվել են դիվանագետի վարքագծի (Էթիկայի) կանոնները, որի խախտումը կառաջացնի կարգապահական պատասխանատվություն: Կատարվել են միջազգային փորձի ուսումնասիրություններ պատգամավորների, քննիչների վարքագծի կանոնների վերաբերյալ, ինչպես նաև մշակման փուլում է գտնվում համապատասխան առաջարկությունների փաթեթը:⁷⁹

Հոդված 8, մաս 4

Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է քննարկի նաև այնպիսի միջոցներ և համակարգեր սահմանելու հնարավորությունը, որոնք նպաստում են այն բանին, որ պաշտոնատար անձինք համապատասխան իրավասու մարմիններին հայտնեն իրենց գործառույթների իրականացման ժամանակ իրենց հայտնի դարձած կոռուպցիոն դեպքերի մասին:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կիրառման մակարդակը՝ չափավոր:

⁷⁸ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր, միջոցառում 13, 14:

⁷⁹ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 14.10.2020թ.:

Ազդարարման (ներքին և արտաքին) ընթացակարգերը, ազդարարների իրավունքները, ազդարարման հետ կապված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների պարտավորությունները, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանությունը կարգավորվում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով,⁸⁰ որը մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում: Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործումը՝ որպես միջոցառում, նախատեսված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով:⁸¹ Այս միջոցառմանը համապատասխան, ՀՀ գլխավոր դատախազությունը ուսումնասիրություններ է իրականացրել ներքին և արտաքին ազդարարման համակարգերի գործունեության վերաբերյալ, որոնց արդյունքները կամփոփվեն մինչև 2020 թ.-ի ավարտը:⁸²

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությունը ազդարարելու համար պարզևսովճար չի նախատեսում: Ազգային իրավական համակարգերում՝ ժողովրդավարական հասարակության կառուցմանը, կոռուպցիայի ամբողջական վերացմանը և կոռուպցիայի դեմ ընդհանուր պայքարում հասարակության տարբեր շերտերի ներգրավմանը խթանելու նպատակով նախատեսվում է «*Qui tam*» հայեցակարգը: Այս հայեցակարգի համաձայն՝ մեղադրանքի պաշտպանությանը սատարող անձը գործի դրական ելքի պարագայում իրավունք ունի որոշակի մասնաբաժին ստանալ բռնագանձված գումարից: Այսպիսի կանոնակարգեր են կիրառվում Միացյալ Նահանգներում, Հարավային Կորեայում և այլ երկրներում, որի արդյունքում ավելի շատ ազդարարներ են որոշում ներկայացնել հաղորդումներ՝ այդպիսով նպաստելով կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանը: Ավելին, ՀՀ օրենսդրական դաշտը չի անդրադառնում մասնավոր հատվածում կատարված իրավախախտումների վերաբերյալ ազդարարումներին, բացառությամբ՝ հասարակական նշանակության կազմակերպությունների դեպքում: Օրինակ, ազդարարն ունի տեղեկություններ մասնավոր հատվածի սուբյեկտի հետ կապված առևտրային կաշառքի մասին: Մասնավոր հատվածում ներքին և արտաքին հաղորդումները նախատեսվում են որպես հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի բաղկացուցիչ:

2019 թվականի մայիսի 21-ին գործարկված «Ազդարարի»⁸³ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը գործում է որպես պետության կողմից վարվող ազդարարման հարթակ: Ի հավելում, «ԲիզՊաշտպան»⁸⁴ ազդարարման հարթակը հատուկ մշակվել է մասնավոր

⁸⁰ ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», ընդունվել է 19.06.2017թ.-ին և ուժի մեջ է մտել 01.01.2018թ.-ին, հոդված 1, 4, հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123969>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁸¹ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր, միջոցառում 31:

⁸² Հաշվետվություն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի մասին, միջոցառում 31, հասանելի է՝ <http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9436321736461_hashvetvutyun.pdf>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁸³ «Ազդարարի» ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ, տես՝ <<https://azdararir.am/am/>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁸⁴ «ԲիզՊաշտպան» ազդարարման հարթակը, տես՝ <<https://bizprotect.am/en>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

հատվածի համար: Այն շահագործում է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող ԻՀԱ-ն: Սակայն, «*ԲիզՊաշտպանը*» չունի օրենքով սահմանված ազդարարող կայքի կարգավիճակ:⁸⁵

Ինչ վերաբերում է վիճակագրությանը, ապա «Ազդարարի» պետական կայքէջը մեկնարկային օրվանից՝ 2019 թվականի մայիսի 21-ից, ստացել է 280 ազդարարում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մասին, որոնց 38,02%-ը ստուգվել է օպերատիվ-հետախուզական գործողություններով: Դրանց 31,15%-ի դեպքում հարուցվել են քրեական գործեր:⁸⁶ Սակայն, ներկայումս տեղեկատվություն առկա չէ հարթակի միջոցով բացահայտված հանցագործությունների մասին:

ՔՀԿ-ների կողմից վարվող «*ԲիզՊաշտպան*» կայքը 2017թ.-ից մինչև 2020թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում ստացել է 119 հայտ: Տասնյոթ դեպք հանգեցրել է համակարգային բարեփոխումների, 13 գործեր լուծվել են անհատապես՝ հոգուտ ազդարարների, 18 գործեր դեռ գտնվում են վարույթում, 32 հայտի դեպքում տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և պարզաբանում:⁸⁷ Այսպիսով, «*ԲիզՊաշտպան*»-ը որոշակի ներդրում է ունեցել բիզնես ոլորտում կոռուպցիայի բացահայտման և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման գործում:⁸⁸ Այնուամենայնիվ, թվերը փաստում են, որ հասարակության լայն շերտերի կողմից ազդարարելու պատրաստակամությունը դեռևս ցածր է:

«*ԲիզՊաշտպան*»-ի աջակցությամբ բացահայտված դեպքերից մեկը, որը նպաստել է համակարգային բարեփոխումների իրականացմանը, կապված է պետական գնումների ոլորտի հետ: Մի շարք հայտեր են ստացվել առ այն, որ պետական գնումների ոլորտում մրցույթների ընթացակարգերի հրավերներում տեխնիկական բնութագրերը և այլ չափորոշիչները համապատասխանեցվում են կոնկրետ կազմակերպություններին՝ վերջիններիս հաղթանակն ապահովելու նպատակով: Արդյունքում, ՀՀ կառավարությունն ընդունեց կիրառվող նորմերի անարդյունավետությունը և նոր որոշում ընդունեց գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների փորձաքննության նոր՝ մասնակցային կարգի մասին:⁸⁹ Ազդարարման արդյունքներից մեկ այլ հաջողված օրինակ է 1,250,000 ՀՀ դրամ տուգանքի (մոտ 2,500 ԱՄՆ դոլար) նշանակումը Հայաստանի ամենամեծ առևտրային կենտրոններից մեկը շահագործող ընկերության նկատմամբ՝ հինգ չգրանցված աշխատողների համար:⁹⁰

Բացի այդ, աշխատողները կարող են նաև անանուն բողոքներ ներկայացնել իրենց խախտված աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով՝ նորաստեղծ

⁸⁵ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկլին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

⁸⁶ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը՝ տրամադրված 2.12.2020 թ.-ին:

⁸⁷ Վիճակագրության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, տես <https://bizprotect.am/en/statistic>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁸⁸ Հաջողության պատմությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար, տես <https://bizprotect.am/en/success-stories>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁸⁹ «Հերթական հակակոռուպցիոն համակարգային բարեփոխումը պետական գնումների ոլորտում Բիզպաշտպանի միջոցով», տես <https://bizprotect.am/en/success-stories/show/18>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁹⁰ «Բիզպաշտպանի ահազանգը՝ «Ալեքս Տեքսիլ» ՍՊԸ-ին չգրանցված աշխատողների համար տուգանելու հիմք», տես <https://bizprotect.am/en/success-stories/show/15>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

EmployeeProtect.am առցանց հարթակի միջոցով: Այս հարթակը ստեղծվել է՝ հիմնվելով *Bizprotect.am* էլեկտրոնային հարթակի եզակի փորձի վրա:⁹¹

Հոդված 8, մաս 5⁹²

Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի, սահմանված դեպքերում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, սահմանել այնպիսի միջոցներ և համակարգեր, որոնք պաշտոնատար անձանց կպարտավորեցնեն համապատասխան մարմիններին ներկայացնել հայտարարագրեր, ի թիվս այլոց արտաժառանգողական գործունեության, զբաղմունքի, ներդրումների, ակտիվների մասին և էական նվիրատվությունների կամ օգուտների մասին, որոնց հետ կապված կարող է շահերի բախում առաջանալ որպես պաշտոնատար անձ նրանց գործառույթների առնչությամբ:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կիրառման մակարդակը՝ չափավոր:

Հայաստանում գործում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգ, որը կարգավորվում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով:⁹³ Իրավասու պետական մարմինը ԿԿՀ-ն է, որը վարում է հայտարարագրերի ռեեստրը, իրականացնում է ներկայացված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, հայտարարագրերի վերլուծություն և գույքի չհայտարարագրման համար սահմանում է օրենսդրությամբ սահմանված վարչական պատասխանատվություն:

Հայտարարատու պաշտոնատար անձինք պարտավոր են ներկայացնել պաշտոնական պարտականություններն ստանձնելու և դադարեցնելու, ինչպես նաև՝ տարեկան հայտարարագրեր:⁹⁴ Հայտարարագրերը հասանելի են հասարակության համար,⁹⁵ մինչդեռ անձնական գաղտնիք պարունակող տվյալները չեն հրապարակվում:⁹⁶ Ներկայումս հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց թիվը շուրջ 5,500 է:⁹⁷ 2019 թվականի տարեկան հայտարարագրերը ներկայացնելու պարտականության կատարման համապատասխանության ստուգման վերաբերյալ տվյալները դեռևս առկա չեն: 2019 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսներին ՀՀ ԿԿՀ-ն վարչական իրավախախտումների փաստով 55 վարույթ է հարուցել, հիմնականում՝ պաշտոնական

⁹¹ «Աշխատողներն այսուհետ կարող են իրենց խախտված իրավունքների վերաբերյալ անանուն դիմումներ ներկայացնել», տես՝ <<https://iravaban.net/en/310598.html>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁹² Տրամադրված տեղեկատվությունը կիրառելի է նաև 52-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի նկատմամբ:

⁹³ ՀՀ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, գլուխ 6:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, հոդված 34(1):

⁹⁵ Հայտարարագրերի ռեեստրը տե՛ս՝ <<http://cpcarmenia.am/en/declarations-registry/>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁹⁶ Հայտարարագրման ենթակա գույքի, եկամուտների և շահերի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև այդ պարտավորության ներքո գտնվող պետական պաշտոնյաների ցուցակի մասին լրացուցիչ տեղեկություններ տրամադրված է կառավարության ստուգաթերթում:

⁹⁷ «Քաղաքացիական ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» հայաստանի հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր» պարզաբանում, տես՝ <<https://www.e-draft.am/projects/2953/about>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

պարտավորությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրեր ներկայացնելու օրենքով սահմանված կարգով պարտավորությունների խախտումների առնչությամբ: Նախագգուշացման տեսքով վարչական տույժեր կիրառելու մասին 53 որոշում է կայացվել:⁹⁸ 2018-2019 թվականներին հայտարարատու պետական պաշտոնյաների թիվը կազմում էր մոտավորապես 3200: ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը 2019թ.-ին օրենքով սահմանված կարգով տարեկան հայտարարագրերի տրամադրման պարտավորությունների խախտումների համար հարուցել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 294 վարույթ: Ընդունվել է վարչական տույժ նշանակելու մասին 139 որոշում, որից 124-ը՝ նախագգուշացում, 15-ը՝ տուգանք:⁹⁹ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը 2019թ.-ին օրենքով սահմանված կարգով տարեկան հայտարարագրերի տրամադրման պարտավորությունների խախտումների համար հարուցել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 419 վարույթ: Ընդունվել է վարչական տույժ նշանակելու մասին 287 որոշում, որից 219-ը՝ նախագգուշացում, 68-ը՝ տուգանք: 2 գործ ուղարկվել է ՀՀ դատախազություն:¹⁰⁰

Վերջին զարգացումները հետևյալն են. գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործումը և ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով:¹⁰¹ Գործող համակարգը փոփոխվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի մարտի 25-ին: Վերանայվել են ԿԿՀ լիազորությունները հայտարարագրերի ստուգման ոլորտում, որով վերջինս կարող է իրականացնել հայտարարագրերի վերլուծություն նաև լրատվամիջոցների հրապարակումների և անձանց գրավոր դիմումների հիման վրա: Հայտարարագրերի վերլուծության ընթացքում ԿԿՀ-ն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր, որը ներառում է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն: Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո ԿԿՀ-ն իրավասու է հայտարարատուից պահանջելու ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ նյութերն ուղարկելու գլխավոր դատախազություն: Ներդրվել է իրավիճակային (*ad-hoc*) հայտարարագրերի ինստիտուտը: «ԿԿՀ-ի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում հայտարարատուն մեկ ամսվա ընթացքում գույքի և եկամտի մասին

⁹⁸ «Վարչական վարույթներ են հարուցվել», տես՝

<<http://cpcarmenia.am/hy/news/item/2020/03/13/1231231313/>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

⁹⁹ Տեղեկատվություն 2019 թվականին հարուցված վարչական վարույթների մասին, տես՝

<<http://cpcarmenia.am/hy/news/item/2019/11/05/news135/>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁰⁰ «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2018թ. գործունեության հաշվետվություն»:

¹⁰¹ «Հայաստանի հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» Միջոցառում 17:

իրավիճակային հայտարարագիր է ներկայացնում ԿԿՀ-ին: Հստակեցվել է հայտարարագրման ենթակա տեղեկատվության բովանդակությունը:¹⁰²

Նշենք, որ ՀՀ խորհրդարանը 2020 թ. սեպտեմբերի 18-ին առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթի մեկ այլ նախագիծ, որը նախատեսում է հետևյալը.

- Հայտարարատուի ֆինանսական հոսքերի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար առաջարկվում է ներդնել ծախսերի հայտարարագրման ինստիտուտ: Օրենքի նախագծով ընդունվել է հետևյալ մոտեցումը. որոշակի ծախսերի դեպքում, որոնց սպառիչ ցանկը թվարկված է նախագծում, անձը պարտավոր է հայտարարագրել դրանք, եթե այդպիսի ցանկացած այլ ծախս, որի միանվագ արժեքը գերազանցում է 2,000,000 ՀՀ դրամը (մոտավորապես 4,000 ԱՄՆ դոլար) կամ սահմանված հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն ՀՀ դրամը (մոտավորապես 4,000 ԱՄՆ դոլար) կամ դրան համարժեք արտարժույթը: Այս ծախսերը ներառում են, օրինակ, ճանապարհածախսը, կեցության ծախսերը, շարժական կամ անշարժ գույքի վարձավճարը, ուսման կամ դասընթացների համար վարձավճարը կամ այլ ծախսերը, գյուղատնտեսական գործունեության հետ կապված ծախսերը և այլն: Միևնույն ժամանակ, նախագիծը սահմանում է, որ ցանկացած այլ ծախս նույնպես ենթակա է հայտարարագրման, եթե նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է 3,000,000 ՀՀ դրամը (մոտավորապես 6,000 ԱՄՆ դոլար) կամ դրան համարժեք արտարժույթը:
- Նախագիծն առաջարկում է ընդլայնել ակտիվների հայտարարագրման վերաբերյալ ներկայիս օրենսդրական պարտականությունը՝ ներառելով նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը: Փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց վերջինիս կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի վերահսկվող, տիրապետվող կամ օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի) և թանկարժեք գույքը: Գույքը համարվում է հայտարարատուի կողմից վերահսկվող, եթե ձեռք է բերվել հայտարարատուի օգտին կամ հաշվին կամ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ գույքը փաստացի տնօրինում է հայտարարատուն:
- Առաջարկվող երրորդ խոշոր փոփոխությունն ուղղված է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունների դադարեցումից հետո կոռուպցիոն ռիսկերի վերահսկմանը: Մասնավորապես, առաջարկվում է ներդնել մի մեխանիզմ, ըստ որի գույքի էական փոփոխության նկատմամբ կասկածի դեպքում (գույքի ավելացում, կամ պատասխանատվությունների և ծախսերի նվազում) հայտարարատու պաշտոնատար անձը օրենքով սահմանված դեպքում պաշտոնական

¹⁰² «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված է՝ 25.03.2020, ուժի մեջ է մտել՝ 02.05.2020, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141488>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

պարտականությունների դադարեցումից հետո 2 տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր»:

- Առաջարկվում է թանկարժեք գույքի օրենքով սահմանված դրամական շեմը իջեցնել 4 միլիոն ՀՀ դրամի (մոտ 8000 ԱՄՆ դոլար) կամ համարժեք արտարժույթի՝ նախկին 8 միլիոն դրամի (մոտ 16000 ԱՄՆ դոլար) փոխարեն:
- Առաջարկվում է ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակը՝ հայտարարագրման պարտավորություն սահմանելով ավելի քան 15,000 բնակչություն ունեցող համայնքների աշխատակազմի քարտուղարների և համայնքների ավագանու անդամների համար:¹⁰³

Թերություններ

- Կոռուպցիոն տեսանկյունից ռիսկային ոլորտներում, ինչպիսիք են ոստիկանությունը, առողջապահությունը և այլն, հանրային ծառայություններ մատուցող մի շարք ոչ բարձրաստիճան պաշտոնատար անձինք չունեն հայտարարագրման պարտականություն: Այդ ոլորտները ռիսկային են համարվում, քանի որ դրանք ենթադրում են քաղաքացի-հանրային ծառայող հարաբերություններ:
- Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա կինը, անչափահաս երեխաները (ներառյալ որդեգրված երեխաները), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության ներքո գտնվող անձինք և հայտարարատու պաշտոնյայի հետ համատեղ բնակվող ցանկացած չափահաս անձ: Քանի որ պաշտոնատար անձի հետ սերտ առնչություն ունեցող այլ անձինք, ինչպիսիք են ամուսնու ծնողը, երեխան, եղբայրը կամ քույրը, ինչպես նաև կնքահայր-սանիկական կապի մեջ գտնվող անձինք պարտավոր չեն գույք հայտարարել, առկա է պաշտոնատար անձանց պատկանող գույքը նրանց անունով գրանցելու համատարած անօրինական պրակտիկա:¹⁰⁴
- Առկա է անհրաժեշտություն ԿԿՀ-ին օժտել հայտարարատու հանրային ծառայողների կենսակերպի ստուգումներ իրականացնելու լիազորությամբ՝ որպես հայտարարագրերում ներառված տվյալների ստուգման միջոց:
- Հանրային ծառայողների նկատմամբ օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, որոնք կիրառվում են ԿԿՀ-ի կողմից Հանձնաժողովի կողմից հայտարարագրերը վերլուծելու առնչությամբ, արդյունավետ, համաչափ և համոզիչ չեն: Առկա է դրանց վերանայման և հետևողական և թափանցիկ կերպով կիրառման

¹⁰³ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթի նախագիծ, ընդունվել է առաջին ընթերցմամբ 18.09.2020թ.-ին, հասանելի է՝ http://parliament.am/draft_history.php?id=11922, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁰⁴ Տես՝ «Հրայր Թովմասյանի «թաքցրած» ունեցվածքը» 13.10.2020, <https://www.1in.am/2640629.html>, «Բնջ ունեցվածքի են տիրապետում Սեյրան Օհանյանն ու նրա կինը», 16.12.2020, <https://www.1in.am/2673657.html>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 9. Հանրային գնումները և պետական ֆինանսների կառավարում

Այս հոդվածը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կիրառման մակարդակը՝ չափավոր:

Հոդված 9, մաս 1

Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի գնումների պատշաճ համակարգեր ստեղծելու համար, որոնք հիմնվում են թափանցիկության, մրցակցության և որոշումների ընդունման օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք, ի թիվս այլոց, կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից արդյունավետ են համարվում: Այդպիսի համակարգերը, որոնք դրանց կիրառման ժամանակ կարող են նախատեսել պատշաճ շեմային ցուցանիշներ, ի թիվս այլոց, շոշափում են հետևյալը.

ա) գնումների ընթացակարգերին և գնումների պայմանագրերին վերաբերող տեղեկատվության հրապարակային տարածումը, ներառյալ գնումներին մասնակցելու հրավիրվածների մասին տեղեկատվությունը և պատշաճ կամ հարմար կերպով այն տեղեկատվությունը, որը թույլ է տալիս սակարկության հավանական մասնակիցներին բավարար ժամանակ ունենալ նախապատրաստվելու և իրենց տենդերային դիմումները ներկայացնելու համար:

Այս մասի պատասխանը կառավարության ստուգաթերթում, ընդհանուր առմամբ, ամբողջական է, չնայած այն հանգամանքին, որ ցրված (բաշխված) է ամբողջ տեքստում: Ավելացնենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը պայմանագրի տեքստի հրապարակման պարտավորություն չի նախատեսում, այլ սահմանում է պայմանագիր կնքելու մասին որոշման և կնքված պայմանագրի մասին հայտարարության հրապարակման պարտավորություն: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:¹⁰⁶ Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները. 1) գնման առարկայի համառոտ նկարագրությունը, 2) պատվիրատուի անվանումը և հասցեն, 3) պայմանագրի կնքման ամսաթիվը, 4) ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և գտնվելու կամ բնակվելու վայրը, 5) մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և պայմանագրի գինը, 6) մասնակիցների ներգրավման նպատակով օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները

¹⁰⁵ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

¹⁰⁶ «Գնումների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.12.2016 թ. և ուժի մեջ է մտել 25.04.2017 թ., Հոդված 10 (2), հասանելի է <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121796>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

(եթե կիրառելի են), 7) կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը:¹⁰⁷ Փաստաթղթի օրինակելի ձևը հաստատել է ՀՀ ֆինանսների նախարարությունը¹⁰⁸

Գործնականում, այս կանոնները հիմնականում պահպանվել են, անգամ՝ մի շարք պայմանագրեր ևս տեղադրվել են էլեկտրոնային գնումների ARMEPS հարթակում: Սակայն, պատկերը փոխվել է COVID 19 համավարակի բռնկումից հետո, քանի որ ՀՀ կառավարությունը, ինչպես աշխարհի մի շարք այլ կառավարություններ, փորձելով փրկել կյանքեր և ապրուստի միջոցներ, նույնպես քայլեր ձեռնարկեց անհրաժեշտ բժշկական պարագաները հնարավորինս արագ ձեռք բերելու համար: Սա բացասաբար է ազդել պետական գնումների տվյալների թափանցիկության վրա, քանի որ մի շարք դեպքերում տեղեկատվությունը չի հրապարակվել:¹⁰⁹

Թերություններ

Թեև նոր օրենքը պետական գնումների համակարգը ավելի թափանցիկ է դարձնում՝ ընդլայնելով գնումների պաշտոնական կայքում հրապարակվող տվյալների ցանկը, իսկ պետական գնումների համակարգի կատարելագործումը նախատեսված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրում,¹¹⁰ տվյալների թափանցիկության ապահովման հետ կապված մի շարք խնդիրներ շարունակում են առկա մնալ: Մասնավորապես, էլեկտրոնային ընթացակարգերը ոչ բոլոր դեպքերում են պարտադիր: Արդյունքում, թղթային տարբերակի վրա հիմնված գնումների քանակը զգալիորեն գերազանցում է էլեկտրոնային գնումների քանակին: Պետական գնումների հետ կապված տվյալները, որոնք հասանելի են պետության կողմից վարվող www.gnumner.am և www.armeps.am կայքերում, բավականին ցրված են, որի արդյունքում դժվար է դրանք գտնել որոնման համակարգի միջոցով:

Բացի այդ, www.gnumner.am-ում հրապարակված տվյալները օգտագործողի համար հարմար չեն և չեն համապատասխանում թափանցիկ տվյալների ստանդարտներին, այսինքն՝ մեքենայական ընթերցման հնարավորություն չունեն: Սա նշանակում է, որ հետաքննող լրագրողների կամ այլ շահագրգիռ կողմերի համար գրեթե անհնար է դառնում տվյալների վերլուծությունը, քանի որ դրանց մեծ մասը հասանելի է միայն pdf ձևաչափով: Պետական գնումների համակարգի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը, ինչպիսիք են վիճակագրությունը, հաշվետվությունները, գծապատկերները և աղյուսակները, նույնպես դժվարամատչելի են: Վերջինիս մասին վկայում է նաև թափանցիկ պետական գնումների վարկանիշի ցուցիչը. 2016 թ.-ին ՀՀ համապատասխանությունը ցուցիչին կազմում էր 58,96%, իսկ վերջինիս առանձին ինդիկատորներից որոշներին ՀՀ համապատասխանությունն ուներ հետևյալ տեսքը. թափանցիկություն՝ 31,1%, արդյունավետություն՝ 43,3% և

¹⁰⁷ Նույն տեղում, հոդված 11:

¹⁰⁸ «Պայմանագիր կնքելու մասին որոշման մասին հայտարարության օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի N 265-Ս հրամանի N 5 հավելված, ընդունվել է 30.05.2017թ.-ին, հասանելի է՝ <https://www.procurement.am/website/images/original/22c799d7.docx>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁰⁹ «Բնչո՞ւ թափանցիկ չէ ԱՆ-ի 7.4 մրդ դրամի ծախսը կորոնավիրուսի ժամանակ. Հակակոռուպցիոն կենտրոնը ռիսկեր է տեսնում, նախարարությունից խոստանում են հրապարակել վարակից հետո», տես՝ <https://factor.am/267865.html> ((դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹¹⁰ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր, միջոցառում 23:

հաշվետվողականություն՝ 40,4%: Չնայած, 2019-ի ցուցիչի բարելավմանը (66.26%), թափանցիկության մակարդակը դեռ շարունակում է մնալ ցածր (38.1%):¹¹¹

բ) մասնակցության պայմանների նախօրոք սահմանումը, ներառյալ ընտրություն կատարելու և պայմանագրերի կնքման վերաբերյալ որոշումներ ընդունելու չափանիշները, ինչպես նաև սակարկության անցկացման կանոնները և դրանց հրապարակումը:

Այս մասի պատասխանը, կառավարության ստուգաթերթում, ընդհանուր առմամբ, ամբողջական է, չնայած այն հանգամանքին, որ ցրված (բաշխված) է ամբողջ տեքստում: Սակայն, վերջին զարգացումները ցույց են տալիս, որ հիմնական խնդիրն այն է, որ պետական գնումների ոլորտում մրցույթի ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերը և այլ չափանիշները համապատասխանեցված են որոշակի կազմակերպություններին՝ նրանց հաղթանակն ապահովելու համար: Արդյունքում, պայմանագրերը միշտ կնքվում են նույն ընկերությունների հետ:¹¹²

Այս կապակցությամբ մի քանի հաղորդում ստանալուց հետո, Բիզպաշտպանը խնդրի վերաբերյալ տեղեկացրել է պատկան մարմիններին, ինչը հանգեցրել է ՀՀ կառավարության N 1454-Ն¹¹³ և N 1422-Ն¹¹⁴ որոշումների ընդունմանը: Վերջինս տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության նոր, մասնակցային ընթացակարգ է ներդնում: Մասնավորապես, նախքան հրավերի փոփոխությունների վերջնաժամկետի լրանալը, ցանկացած ոք կարող է գնորդ կազմակերպությանը տրամադրել գնումների առարկայի պահանջների հիմնավորում, ինչպես սահմանված է հրավերի մեջ՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման համար:

Գնորդ կազմակերպությունը պարտավոր է հրապարակել ստացված հիմնավորումների քննարկումների ամփոփագիրը, կամ դրանց բացակայության մասին նշել գնման պաշտոնական տեղեկագրում որպես հայտի բացման նիստի արձանագրության պարտադիր կետ: Գործնականում, հայտի բացման նիստի արձանագրությունը, ինչպես նաև գնումներին վերաբերող այլ փաստաթղթեր հրապարակվում են տեղեկագրում՝ PDF ձևաչափով: Քանի որ փաստաթղթերը չեն համապատասխանում բաց (թափանցիկ) տվյալների ցուցիչներին, անհնար

¹¹¹ «Պետական գնումների թափանցիկ վարկանիշային ցուցիչ», Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտ (IDFI), տես <<https://www.tpp-rating.org/page/eng/rating/2016>>, <<https://www.tpp-rating.org/page/eng/rating/2019>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹¹² Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկլին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

¹¹³ ՀՀ կառավարության N 1454-Ն որոշում «Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման կարգը հաստատելու մասին», ընդունվել է 16.11.2017 թ., ուժի մեջ է մտել 01.01.2018 թ. և ուժը կորցրած է ճանաչվել 02.11.2019թ., հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117475>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.): Ըստ այդմ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը լիազորված էր մրցակցության պահպանման փորձաքննություն անցկացնել պատվիրատուների կողմից հաստատված գնման առարկաների բնութագրերի և մասնակիցների որակավորման պահանջների նկատմամբ: Սակայն, հետագա պրակտիկան ապացուցեց դրա անարդյունավետությունը՝ հանգեցնելով վերացման:

¹¹⁴ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1454-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 1422-Ն որոշում, ընդունվել է 10.10.2019 թ. և ուժի մեջ է մտել 2.11.2019թ., հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=135267>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

է որոնել այն փաստաթղթերը, որոնցում փաստացիորեն ստացվել են հիմնավորումներ: Այս առումով առկա չեն նաև վիճակագրություն կամ լրատվամիջոցների հաղորդումներ, ինչը նույնպես կարող է բացատրվել այդ կանոնակարգերի համեմատաբար նոր լինելու փաստով:

Ի հավելումն, գնումների պլանավորման համակարգի կատարելագործման վերաբերյալ «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագրում» նախատեսվել է գործողություն՝ ապահովելով, որ նույն գնումների հետ կապված մարմինների միանման կարիքները բավարարվեն միևնույն բնութագրեր ունեցող առարկաներով և նախահաշվային գներով:¹¹⁵

գ) Հրապարակային գնումների վերաբերյալ որոշումների ընդունման առնչությամբ նախապես սահմանված և օբյեկտիվ չափանիշների օգտագործումը՝ կանոնների կամ ընթացակարգերի կիրառման ճշտության հետագա ստուգմանն օժանդակելու նպատակով:

Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները սահմանված են «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքով,¹¹⁶ իսկ այդ չափանիշների գնահատման պայմանները սահմանվում են կառավարության N 526-Ն որոշմամբ,¹¹⁷ որը նկարագրված է կառավարությանստուգաթերթում: Այնուամենայնիվ, վերջին հետազոտության¹¹⁸ արդյունքները ցույց են տալիս, որ աճել է ոչ մրցակցային ընթացակարգերի կիրառման, մասնավորապես՝ մեկ անձից իրականացված գնման պրակտիկան, հատկապես՝ «հրատապության» հիմքով:¹¹⁹ Մինչդեռ, ըստ էության, չկան այնպիսի հրատապ համարվող կարիքներ, որոնք կարդարացնեն հրատապության հիմքի առկայությունը: Չարաշահման այսպիսի պրակտիկան առկա է մշակույթի ոլորտում, երբ նշվում է, որ միջոցառումը կազմակերպելու համար ժամանակը բավարար չէ, մինչդեռ գնման հայտարարությունն է մշակվում շատ ուշ:¹²⁰

դ) ներքին վերահսկողության արդյունավետ համակարգը, ներառյալ բողոքարկման արդյունավետ համակարգը՝ սույն կետի համաձայն սահմանված կանոնները կամ

¹¹⁵ Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարություն և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիր, ընդունվել է ՀՀ կառավարության N 1716-Լ որոշմամբ 28.10.2019 թ.-ին և ուժի մեջ է մտել 22.12.2019 թ.-ին, միջոցառում 16, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137596>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹¹⁶ «Պետական գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

¹¹⁷ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 1716-Լ որոշում, ընդունվել է 04.05.2017 թ.-ին և ուժի մեջ է մտել 01.06.2017 թ.-ին, բաժին 8, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=144977> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹¹⁸ «Մեկ անձից իրականացված գնումները շարունակում են գերակշռել պետական գնումների համակարգում», Բնֆորմացիայի ազատության կենտրոն, տես՝ <http://www.foi.am/hy/news/item/1862/> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹¹⁹ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 2.12.2020 թ. «Մեկ անձից գնումներ կատարելը կատարվում է օրենքով սահմանված հիմքերով և պահանջներով, և սույն հետազոտությունը չի պարունակում հակառակը հիմնավորող ապացույց»:

¹²⁰ «Ոչ մրցակցային գնման ձևը կիրառելու հիմնավորվածությունը շատ դեպքերում կասկածների տեղիք է տալիս», տես՝ <https://infocom.am/Article/31286>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

ընթացակարգերը չպահպանելու դեպքում վիճարկման իրավաբանական միջոցների և իրավական պաշտպանության միջոցների ապահովման համար:

«Պետական գնումների մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետական գնումների ոլորտում բողոքարկման կարգը,¹²¹ որը նկարագրված է կառավարության ստուգաթերթում: Ներկայումս պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքների քննումն իրականացնում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձը:¹²² Այս կարգը փոխարինել է բողոքների քննման նախորդ կարգին, որն իրականացնում էր կոլեգիալ խորհուրդը:

Բողոքները ստանում և քննում են երկու փորձագետ: 09.04.2019-30.12.2019 ժամանակահատվածում բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը ստացել է 120 բողոք, որից 104-ի վերաբերյալ հարուցել վարույթ, որոնցից 47-ը բավարարվել է, իսկ 52-ը՝ մերժվել:¹²³ Բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը ստացել է 130 բողոք, որից 106-ի վերաբերյալ հարուցել է վարույթ, որոնցից 29-ը բավարարվել են ամբողջությամբ, 16-ը՝ մասնակի, իսկ 45-ը՝ մերժվել:¹²⁴

Թերություններ

Այնուամենայնիվ, միջազգային դոնոր կազմակերպությունները և ՔՀԿ-ները պարբերաբար կասկածի տակ են դնում պետական գնումների նկատմամբ կիրառվող բողոքարկման համակարգի անկախությունն ու արդյունավետությունը:¹²⁵ Այդ պատճառով, ՀՀ կառավարությունը օրենսդրական փոփոխությունների նախագիծ է¹²⁶ ներկայացրել հանրային քննարկման՝ բողոքարկման արտադատական մոդելի համակարգից բացառապես բողոքարկման դատական մոդելին անցնելու վերաբերյալ, որն իրականացվում է հատուկ վարույթների միջոցով:¹²⁷ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված իրավական ակտի հիմնավորման մեջ նշվում է հետևյալը. «Կատարված ախտորոշումները ցույց են տալիս, որ բողոքարկման ներկայիս համակարգը արդյունավետ չէ այն իմաստով, որ կայացված որոշումները խնդրահարույց են ՀՀ գնումների օրենսդրության տեսանկյունից և հակասում են

¹²¹ «Պետական գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

¹²² Նույն տեղում, հոդված 47:

¹²³ «Գնումների հետ կապված բողոքները քննող անձի գործունեության տարեկան հաշվետվություն», Լևոն Օհանյան, 2019, հասանելի է՝

<<https://gnumner.am/website/images/original/Hashvetvutyun%202019%20Ohanyan.pdf>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹²⁴ «Գնումների հետ կապված բողոքները քննող անձի գործունեության տարեկան հաշվետվություն», Գրիգոր Ներսիսյան, 2019, հասանելի է՝

<<https://gnumner.am/website/images/original/e13b8815.pdf>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹²⁵ «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Մտամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլ», ՏՀԶԿ, էջ 105-106; «Գնումների ոլորտի բարեփոխումներին ուղղված առաջարկություններ», Հայաստանի ՔՀԿ-ների կառուցողական երկխոսության ցանց, փետրվար 2020, տես՝ <<https://ccd.armla.am/15988.html>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹²⁶ «ՀՀ պետական գնումների մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը հրապարակվել է 20.02.2020 թ. -ից մինչև 06.03.2020 թ., տես՝ <<https://www.e-draft.am/projects/2300>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹²⁷ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

միմյանց: Արդյունքում, այդ որոշումները կա՛մ բողոքարկվում են դատարաններում, կա՛մ գնման ընթացակարգերը հայտարարվում են չկայացած, ինչը դրանց կազմակերպման և իրականացման տեսանկյունից հանգեցնում է ծրագրերի ձախողման, դժգոհությունների և ֆինանսական կորուստների: Ըստ վիճակագրության՝ [վերհանված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից], տարեցտարի մեծանում է արտադատական կարգով քննված բողոքների վերաբերյալ կայացված որոշումները մասնակիցների կողմից դատական կարգով բողոքարկման դեպքերը և դա այն պարագայում, երբ գործող կարգավորումները չեն նախատեսում դատարանների կողմից դրանց հատուկ վարույթով քննելու ընթացակարգեր: Միննույն ժամանակ, խնդրահարույց է նաև բողոք ներկայացնելու հնարավորություն ունեցող անձանց լայն շրջանակը: Ցանկացած անձ, որը բովանդակային առումով չունի տվյալ գնման ընթացակարգին շրջանակում շահագրգռվածություն, ունի գնման ընթացակարգը բողոքարկելու և դրանով պայմանավորված գործընթացները ձգձգելու հնարավորություն, այդ թվում՝ նաև դիտավորյալ»:¹²⁸ Նման պրակտիկա գոյություն ունի տարբեր պետություններում, ներառյալ՝ վարչական դատարանների կողմից բողոքների քննությունը:

(ե) Համապատասխան դեպքերում՝ գնումների համար պատասխանատվություն կրող անձնակազմին վերաբերող հարցերի կարգավորումը, ինչպիսիք են որոշակի հրապարակային գնումներով շահագրգռված լինելու՝ հայտարարագրման, ստուգման ընթացակարգերի վերաբերյալ պահանջները և դասընթացների նկատմամբ պահանջները:

Այս մասի վերաբերյալ կառավարության ստուգաթերթում տրված տեղեկատվությունը չափազանց սահմանափակ է: «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքը պարունակում է շահերի հայտարարագրման որոշ դրույթներ, որոնց համաձայն. «Գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմասս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմասս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Այդ դեպքում, Եթե առկա է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում»:¹²⁹ Շահերի բախման մասին հայտարարությունները հրապարակվում են ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների համակարգի կայքում,¹³⁰ սակայն այն ձևաչափերով, որոնք չեն համապատասխանում բաց տվյալների չափանիշներին: Միննույն

¹²⁸ ՀՀ արդարադատության նախարարությունից, տրամադրված Պաշտոնական պատասխանը՝ 14.10.2020 թ.: Տե՛ս նաև «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, հիմնավորում:

¹²⁹ «Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 33(6):

¹³⁰ Տե՛ս՝ <https://gnumner.am/hy/page/ shaheri bakhman bacakayutyun/> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Ժամանակ, հարկ է նշել, որ գնումների վերաբերյալ օրենսդրությունը չի նախատեսում ստուգման հատուկ ընթացակարգ՝ պարզելու համար, արդյոք գնահատող հանձնաժողովի անդամները կամ քարտուղարները չեն թաքցնում հնարավոր շահերի բախումը:¹³¹ ԲիզՊաշտպանի փորձագիտական թիմը շահերի բախման հնարավոր իրավիճակների դեպքերի վերաբերյալ բազմիցս նամակներ է ներկայացրել պետական գնումների ոլորտում վերահսկողություն իրականացնելու պետական լիազորված մարմին՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը: Վերջինս կոռուպցիոն հնարավոր ռիսկերն ուսումնասիրելու և համապատասխան պետական պատվիրատուների պաշտոնատար անձանց ու հաղթող ընկերությունների միջև առկա հնարավոր կապերը հայտնաբերելու նպատակով անցկացրել է մշտադիտարկումներ: Այն դեպքերում, երբ այդպիսի կապեր հայտնաբերվել են, մշտադիտարկման արդյունքները ներկայացվել են համապատասխան պետական մարմիններին:¹³²

Հոդված 9, մաս 2

Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի պետական ֆինանսների կառավարման թափանցիկությանը և հաշվետվությանը նպաստելու ուղղությամբ: Այդպիսի միջոցները, ի թիվս այլոց, պետք է ներառեն.

ա) ազգային բյուջեի ընդունման ընթացակարգերը.

Ազգային բյուջեի ընդունման, հիմնականում՝ միջնաժամկետ ծախսերի ծրագրի (հանդիսանում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հիմքը) և բուն պետական բյուջեի նախագծի մշակման, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից դրա քննարկման և ընդունման կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով:¹³³ Վերջինս ավելի մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում:

Հաջողված փորձ

Ի հավելումն, ԻՀԱ ջանքերի շնորհիվ, ՀՀ վարչապետը որոշում է ստորագրել՝ համապատասխան պետական, տարածքային կառավարման և ՏԻՄ մարմինների համար սահմանելով պարտավորություն առ այն, որ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում բյուջետային հայտերի շուրջ քննարկումներ անցկացնեն իրենց իրավասության ներքո գտնվող ոլորտներում շահագրգիռ ՔՀԿ-ների հետ և հրապարակեն քննարկումների արդյունքների վերաբերյալ տեղեկություններ (ներառյալ՝ ներկայացված դիտողությունները և

¹³¹ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

¹³² Տես՝ «Հերթական հակակոռուպցիոն համակարգային բարեփոխումը պետական գնումների ոլորտում Բիզպաշտպանի միջոցով», տես՝ <https://bizprotect.am/en/success-stories/show/18>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.): Սակայն, առկա չէ հրապարակայնորեն հասանելի ապացույց առ այն, արդյո՞ք դա հանգեցրել է հետագա կարգապահական պատասխանատվության:

¹³³ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 24.06.1997թ.-ին և ուժի մեջ է մտել 21.08.1997թ.-ին, հոդվածներ 15¹, 16, 21 և 22, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140926> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

առաջարկություններն ընդունելու կամ մերժելու ամփոփաթեթը):¹³⁴ ՀՀ պետական բյուջեի պարտադիր հանրային քննարկումներ անցկացնելու վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշումը գործնականում պահպանվում է:¹³⁵

բ) մուտքերի և ծախսերի մասին ժամանակին զեկուցումը.

Հաջողված փորձ

Բյուջեն ինչպես նաև դրա ընդունման գործընթացները թափանցիկ (հրապարակային) են:¹³⁶ Հատկանշական է, որ քաղաքացու պարզեցված բյուջեն ներդրվել է 2018 թվականից՝ հանրությանը մատչելի կերպով ներկայացնելով պետական բյուջեում արտացոլված հիմնական տեղեկատվությունը:¹³⁷ Բացի այդ, ՀՀ քաղաքացիները հնարավորություն ունեն տեղեկատվություն ստանալ ՀՀ պետական բյուջեի կառուցվածքի վերաբերյալ՝ ըստ գործառական դասակարգման (նախապես պլանավորված և փաստացի կատարված ծախսեր)՝ ՀՀ կառավարության և ՀՀ ֆինանսների նախարարության կայքերում տեղադրված առցանց էլեկտրոնային ինտերակտիվ բյուջեի միջոցով: Էլեկտրոնային համակարգը ապահովում է ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը և ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը:¹³⁸ Վերջինս ավելի մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում:

գ) հաշվապահական հաշվառման ստանդարտների համակարգը և ստուգման ու դրա հետ կապված հսկողության համակարգը.

Հայաստանի Հանրապետությունում արտաքին աուդիտը կարգավորվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով:¹³⁹ Հաշվեքննիչ պալատը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն է տրամադրում խորհրդարանին և հասարակությանը պետական և համայնքային բյուջեների, ստացված վարկերի, պետական և համայնքային գույքի օգտագործման օրինականության վերաբերյալ, ինչը հիմք է հանդիսանում տարեկան բյուջեի կատարման հաշվետվության մշակման համար: Հաշվեքննիչ պալատը մշակում է նաև

¹³⁴ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» ՀՀ Վարչապետի 9.07.2020թ. -ի N 5-Ս որոշում, հասանելի է՝ <<http://www.irtek.am/views/act.aspx?aid=152335>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.): Տե՛ս նաև՝ «Վարչապետի որոշմամբ 2021թ. -ի պետական բյուջեն նախագծելիս քննարկում կանցկացվեն նաև շահագրգիռ քաղաքականության կազմակերպությունների հետ», <<https://armia.am/en/5462.html>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹³⁵ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ պարոն Կարեն Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ. -ի նոյեմբերի 4-ին:

¹³⁶ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 26:

¹³⁷ Քաղաքացու բյուջե, 2018 թ., հասանելի է՝ <http://www.minfin.am/hy/page/petakan_byui/>, Քաղաքացու բյուջե, 2019, հասանելի է՝ <http://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2019_t>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹³⁸ Ինտերակտիվ բյուջե, հասանելի է՝ <<https://www.e-gov.am/interactive-budget/>>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹³⁹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 16.01.2018թ. -ին և ուժի մեջ է մտել 09.04.2018թ. -ին, հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119273>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

տարեկան հաշվետվություններ: 2019թ.-ի հաշվետվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության համաձայն, Հաշվեքննիչ պալատը իրականացրել է 25 աուդիտ՝ նախապես պլանավորված 32-ի փոխարեն, և արդյունքները ներկայացրել է ՀՀ ազգային ժողով, կառավարություն և շահագրգիռ այլ կողմերի:¹⁴⁰ Հաշվետվությունները հրապարակվում են Պալատի պաշտոնական կայքում:¹⁴¹

Թերություններ

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի հիման վրա ՀՀ-ում ստեղծվել է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ՝ որպես խորհրդարանական վերահսկող մարմին:¹⁴² Գրասենյակի հիմնական գործառնություն է տրամադրել տեղեկանքներ պետական ֆինանսների, մասնավորապես՝ պետական բյուջեի վերաբերյալ: Նշված գրասենյակի արդյունավետությունը կասկածի տակ է դրվել, քանի որ այն չունի անհրաժեշտ աշխատակազմ, պետական բյուջեից անկախ ֆինանսավորում, իր գործառնությունները կարգավորող առանձին կանոնադրություն:¹⁴³ Ինչպես նաև կառավարության ֆիսկալ կանխատեսումների և հարկաբյուջետային քաղաքականության նպատակների համապատասխանության վերաբերյալ անկախ գնահատականներ կատարելու գործառնություն:¹⁴⁴

դ) Ռիսկերի և ներքին վերահսկողության կառավարման արդյունավետ և ներգործուն համակարգերը.

Ռիսկերի կառավարման և ներքին վերահսկողության ու աուդիտի համակարգերը կարգավորվում են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով,¹⁴⁵ և դրանից բխող իրավական ակտերով:¹⁴⁶ Ներքին աուդիտի ստորաբաժանումներ են ստեղծվել հանրային կառավարման և

¹⁴⁰ «ՀՀ հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդում 2019 թվականի գործունեության վերաբերյալ», ընդունվել է 26.04.2020թ.-ին, հասանելի է՝ < <http://armsai.am/files/annual2019.pdf>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁴¹ Ընթացիկ եզրակացություններ, ՀՀ հաշվեքննիչ պալատ, հասանելի են՝ <<http://armsai.am/hy/current-conclusions>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁴² «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք, ընդունվել է 16.12.2016թ., ուժի մեջ է 18.05.2017թ., հոդված 163, տես՝ <<https://www.arlis.am/documentview.aspx?docid=110824>>. Վերջինիս գործառնությունները կարգավորում է Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» 16.12.2016թ.-ի N 267-Ն որոշումը տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121700> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁴³ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

¹⁴⁴ «Ֆիսկալ թափանցիկության գնահատում Հայաստանի Հանրապետություն» Արժույթի միջազգային հիմնադրամ, 2019, էջ 9, տես՝ <<https://www.imf.org/external/pubs/ft/scr/2019/cr19134.pdf>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁴⁵ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 22.12.2010թ.-ին և ուժի մեջ է 05.02.2011թ.-ին, հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138980>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁴⁶ «ՀՀ կառավարության որոշումը ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1233-Ն որոշում, ընդունվել է 11.08.2011թ.-ին և ուժի մեջ է մտել 08.09.2011թ.-ին, հասանելի է <<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=111129>>; «Ներքին աուդիտի կանոնակարգի

տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններում, որոնք բացահայտված անհամապատասխանությունների մասին զեկույց են ներկայացնում նշյալ մարմինների ղեկավարներին և ներքին աուդիտի կոմիտեին, ինչպես նաև առաջարկություններ այդ անհամապատասխանությունները շտկելու համար: Սա ավելի մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթի «գ» պարբերությունում, որի համաձայն՝ 2016 և 2017 թվականներին համապատասխանաբար բացահայտվել են անհամապատասխանությունների վերաբերյալ 18,012 և 13,859 դեպքեր, ինչը հանգեցրել է 12,460 և 9,151 ուղղիչ գործողությունների:

ե) համապատասխան դեպքերում՝ սույն կետում սահմանված պահանջները չպահպանելու դեպքում շտկումներ կատարելը.

Կառավարության ստուգաթերթը չի ընդգրկում այս հարցերը: ՀՀ օրենսդրությունը սահմանում է, որ օրենքի պահանջների խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց լիազորություններ իրականացնող իրավաբանական և պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:¹⁴⁷

Ոչ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը, ոչ էլ՝ ՀՀ քրեական օրենսգիրքը այս առումով հատուկ պատասխանատվության միջոցներ չեն նախատեսում: Այնուամենայնիվ, դրանք ներառում են հոդվածներ, որոնք կարող են օգտագործվել, ընդհանուր առմամբ, պետական ֆինանսական հանցագործություններ կատարելու մեջ կասկածվող պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու համար: Մինչ օրս առկա չեն պետական բյուջեի ընդունման ընթացակարգերի հետ կապված իրավախախտումների վերաբերյալ հրապարակային տվյալներ:

Հոդված 9, մաս 3

Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի քաղաքացիաիրավական և վարչական միջոցներ, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետական ծախսերին և եկամուտներին վերաբերող հաշվապահական գրքերի, գրանցումների, ֆինանսական տեղեկագրերի կամ այլ փաստաթղթերի պահպանումը ապահովելու և այդպիսի փաստաթղթերի կեղծմանը հակազդելու համար:

Կառավարության ստուգաթերթում տրված պատասխանը համապարփակ է՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտների վերահսկման առումով: Մասնավորապես, Հայաստանում հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորվում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով,¹⁴⁸ ինչպես նաև Հանրային հատվածի հաշվապահական

օրինակելի ձևը և դրա կազմման կարգի առանձնահատկությունները հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի N 1096-Ն հրաման, ընդունվել է 12.12.2012թ.-ին և ուժի մեջ է մտել 25.02.2013թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97290> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁴⁷ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 42:

¹⁴⁸ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 21.06.2014թ.-ին և ուժի մեջ է մտել 01.01.2015թ.-ին, հոդվածներ 11, 12, հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=91454> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

հաշվառման ստանդարտով: Սա գնահատվել է որպես միջազգային չափանիշներին մասամբ համապատասխանող:¹⁴⁹ Ստանդարտը նաև հաստատված չէ օրենքով, այլ սահմանվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամանով:¹⁵⁰

Բացի այդ, ՀՀ օրենսդրությունը հստակ չի նախատեսում ՀՀ ֆինանսների նախարարության՝ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից իրականացվող հաշվապահական հաշվառման մշտադիտարկում իրականացնելու և անհրաժեշտության դեպքում մեթոդական ցուցումներ տրամադրելու պարտականությունը: Այդ պատճառով ՀՀ ֆինանսների նախարարությունը մշակել է նշված օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծ, որը դեռևս չի ընդունվել:¹⁵¹

Մինևույն ժամանակ, կառավարության ստուգաթերթի՝ հաշվապահական հաշվառման և ֆինանսական փաստաթղթերի անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված միջոցառումների քննարկման հատվածում նշված է միայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.11 հոդվածը (Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ տեղեկությունները չպահպանելը): Սակայն, այս կապակցությամբ կիրառելի են մի շարք այլ հոդվածներ, ներառյալ՝ 169.1 հոդվածը (Հաշվապահական հաշվառումը (գրանցումը) խախտումով վարելը, երբ դա կարող է առաջացնել (առաջացրել է) հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարի նվազեցում, կամ հայտարարագիրը, հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը), հոդված 169.10 (հաշվապահական հաշվառման քաղաքականություն չսահմանելը), հոդված 169.12 (ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չհրապարակելը) և 169.13 հոդված (հրապարակվող ֆինանսական հաշվետվություններն ստորագրելը հաշվապահի կողմից, որը որակավորված չէ հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով, կամ անստորագիր ներկայացնելը):¹⁵² Կառավարության ստուգաթերթում տրված պատասխանը կիրառելի վիճակագրության վերաբերյալ տեղեկատվություն չի ներառում:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 10. Հրապարակային հաշվետվությունը

Ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր պետական վարչակազմում թափանցիկության մեծացման համար, այդ թվում՝ դրա կազմակերպման, գործունեության և, համապատասխան

¹⁴⁹ «Հանրային կառավարման սկզբունքները» Հայաստան, SIGMA, 2019, էջ. 232, հասանելի է՝ <http://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Armenia-2019-ARM.pdf> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵⁰ «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի N 725-Ն հրաման, ընդունվել է 24.10.2014թ.-ին և ուժի մեջ է մտել 11.12.2014թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102700> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵¹ Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, հանրային քննարկումները տեղի են ունեցել 10.12.2019թ.-ից մինչև 25.12.2019թ.-ը, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/2171> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵² Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքը:

դեպքերում, որոշումների կայացման գործընթացների առնչությամբ: Այդպիսի միջոցները, inter alia, կարող են ներառել հետևյալը.

ա) ընթացակարգերի կամ կանոնակարգերի ընդունումը, որոնք բնակչությանը թույլ կտան, համապատասխան դեպքերում, տեղեկատվություն ստանալ իր պետական վարչակազմի կազմակերպման, գործունեության և որոշումների ընդունման գործընթացների վերաբերյալ և, պատշաճորեն հաշվի առնելով մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության նկատառումները, հանրության անդամների շահերը շոշափող որոշումների և իրավաբանական ակտերի վերաբերյալ:

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթում պատասխանը գրեթե ամբողջական է: Անհրաժեշտ է նշել ՀՀ կառավարության որոշումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին.

- 2020 թվականի ապրիլի 2-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց և Ազգային ժողով ներկայացրեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:¹⁵³ Նախագծով առաջարկվում էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որը վերաբերում է տեղեկատվության ազատության սահմանափակումներին, լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե այն կարող է բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի, այդ թվում՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի վրա»: Այս առումով, Հայաստանի ՔՀԿ-ները սիստեմատիկ կերպով դեմ են արտահայտվել կառավարության այս նախաձեռնությանը,¹⁵⁴ և արդյունքում կառավարությունը հետ է կանչել այդ նախաձեռնությունը:
- Հիմնվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի վրա,¹⁵⁵ որը սահմանում է սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքը, փոփոխություններ են կատարվել օրենքի՝ հանրամատչելի անձնական տվյալները սահմանող 11-րդ հոդվածում:¹⁵⁶ Դրանց համաձայն՝ հայրանունն ավելացվել է հանրամատչելի տվյալների ցանկում:

¹⁵³ Կառավարության որոշումը հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140983>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵⁴ Տե՛ս օրինակներից մեկը. Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հայտարարությունն այս հարցի վերաբերյալ, հասանելի է՝ <<https://armia.am/46772.html>> , (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵⁵ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 13.06.2015թ. և ուժի մեջ է 01.07.2015թ., հասանելի է <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132745>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵⁶ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումը ընդունվել է 09.07.2019թ. -ին և ուժի մեջ է մտել 04.08.2019թ.-ին, հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=132703>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն,¹⁵⁷ տեղեկատվություն կրողները տարեկան առնվազն մեկ անգամ հրապարակում են ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալներ, այդ թվում՝ տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերը (հոդված 7, կետ 11): Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից անցկացված ուսումնասիրությունները հանգել են այն եզրակացության, որ պետական մարմիններում տեղեկատվություն ստանալու հարցումների մասին տվյալների գրանցման, դասակարգման և պահպանման մեկ ընդհանուր ձևաչափ գոյություն չունի. գերատեսչություններից յուրաքանչյուրը գործում է ըստ իր հայեցողության կամ պատկերացման: Օրենքով պահանջված վիճակագրություն ներկայացնելու համար անհրաժեշտ գործիքակազմ գերատեսչությունները չեն մշակել:¹⁵⁸ 2019 թվականին «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն իրականացրել է մոնիթորինգ՝ նախարարությունների կողմից 2017թ.-ին ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու պատվիրակված ծառայությունների տրամադրման ընթացակարգերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բացահայտելու նպատակով: Մոնիթորինգի զեկույցի¹⁵⁹ համաձայն՝ նախարարությունները նշված ֆինանսական հատկացումները տրամադրել են մեծամասամբ առանց մրցութային կարգի: Այս արատավոր պրակտիկան շարունակվեց նաև «Թավշյա հեղափոխությունից» հետո:

բ) վարչական ընթացակարգերի հստակեցումը, համապատասխան դեպքերում, որոշումներ կայացնող իրավասու մարմինների նկատմամբ հանրության մուտքը դյուրացնելու համար, և
գ) այն տեղեկատվության հրապարակումը, որը կարող է ներառել պետական վարչակազմում կոռուպցիայի վտանգների մասին պարբերական հաշվետվությունները:

Կառավարության ստուգաթերթում նշված այս կետերի պատասխանները հիմնականում նպատակային և տեղին չեն:

(բ) կետի առնչությամբ պետք է նշել հետևյալը.

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում¹⁶⁰ և մի շարք այլ օրենքներում լրացումներ կատարելու արդյունքում ԶԼՄ-ներն ազատվեցին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեզիստրից տեղեկատվություն ստանալու համար պետական տուրքի վճարումից:

(գ) կետի առնչությամբ պետք է նշել հետևյալը.

¹⁵⁷ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1372> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵⁸ Տեղեկատվության ազատության վերլուծությունը հասանելի է՝ <http://www.foi.am/hy/research/item/1863/> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁵⁹ ԲՀԿ-ների պետական ֆինանսավորման աղբյուրների մշտադիտարկման զեկույցը հասանելի է՝ <https://ccd.armla.am/14347.html> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁶⁰ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունն ու լրացումը ընդունվել են 06.03.2020-ին և ուժի մեջ են մտել 11.04.2020թ.-ին, սահմանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140639> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

- Դատախազության գործունեության հրապարակայնությունը սահմանող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը¹⁶¹ սահմանում են, որ Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում հրապարակում է հանցագործությունների քննության վերաբերյալ տեղեկատվություն: Հրապարակումը պետք է պարունակի տեղեկություններ նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին: Նախատեսված հրապարակումը կազմելու համար նախաքննության մարմինները, ըստ քննչական ենթակայության, յուրաքանչյուր տարի՝ մինչև փետրվարի 1-ը, ՀՀ գլխավոր դատախազություն են ներկայացնում նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ: Գլխավոր դատախազը հաստատում է կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների ներկայացման մասին մեթոդական ուղեցույցը: Ըստ այդմ, Գլխավոր դատախազը 2018թ.-ին հաստատել է մեթոդական ուղեցույցը,¹⁶² որը, սակայն, չի վերանայվել՝ ՀՀ քրեական օրենսգրքում 2020 թվականի մարտի 25-ին կատարված փոփոխությունների և լրացումների լույսի ներքո: Փոփոխությունները և լրացումները, մասնավորապես, կապված են օրենսգրքի 6-րդ հավելվածի հետ, որով սահմանում են կոռուպցիոն հանցագործությունների ցանկը:¹⁶³ Այն ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 2-ից:
- Համաձայն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 133-րդ կետի,¹⁶⁴ ռազմավարության և միջոցառումների ծրագրի ընթացքի մշտադիտարկման և գնահատման գործառնություններն իրականացնում է ՀՀ ԱՆ-ը: Ռազմավարության և միջոցառումների ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ ԱՆ են ներկայացնում հաշվետվություն: Նախարարությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունների փաթեթը տեղադրում է ՀՀ ԱՆ և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքէջերում: ՀՀ ԱՆ-ը յուրաքանչյուր տարվա սկզբին, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա փետրվարի առաջին տասնօրյակը, նախորդ տարվա միջոցառումների մշտադիտարկման ու գնահատման արդյունքները ներկայացնում է ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի 808-Ն որոշմամբ ստեղծված Հակակոռուպցիոն

¹⁶¹ «Դատախազության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 17.11.2017թ.-ին և ուժի մեջ է մտել 09.04.2018թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142365> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁶² Մեթոդական ուղեցույցը հասանելի է՝ <http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/metodakan%20uxecuy%20verjnakan.pdf> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁶³ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը ընդունվել է 29.03.2020թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141491> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁶⁴ Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:

քաղաքականության խորհրդի քննարկմանը: Ծանոթանալով ԱՆ-ի կողմից հրապարակված 2019 թ.-ի զեկույցին և 2020 թ. առաջին կիսամյակի զեկույցին,¹⁶⁵ կարելի է եզրակացնել, որ ներառված տեղեկությունները ավելի շատ արտացոլում են հակակոռուպցիոն ռազմավարության և դրա 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի իրականացման քանակական տվյալները, քան որակական տվյալները:

- Ի հավելումն վերը նշվածի, պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերը բացահայտելու համար ներդրված չեն մոնիթորինգ և գնահատում իրականացնելու հանրայնորեն մատչելի իրավական չափանիշներ: Այնուամենայնիվ, ըստ ԱՆ-ի, ԿԿՀ-ն մշակել է բոլոր պետական մարմիններում կոռուպցիոն ռիսկերը բացահայտելու համար միասնական մեթոդաբանություն:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 11. Դատական և դատախազական մարմիններին վերաբերող միջոցներ

Հոդված 11, մաս 1

Իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, ձեռնարկել միջոցներ դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:

Այս մասը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխաններն ամբողջական են, սակայն անհրաժեշտ է ավելացնել վերջին օրենսդրական փոփոխությունները:

Մասնավորապես, 2020 թ.-ի մարտի 25-ին Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»¹⁶⁶ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և հարակից այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը:

Այս օրենքներն ուղղված են դատավորների բարեվարքության գնահատման իրավական հիմքի ապահովմանը հետևյալ ուղղություններով. գույքի ստուգում (գույքի ձեռքբերման օրինականության ստուգում և գնահատում), արհեստավարժություն և հարգանք մարդու իրավունքների նկատմամբ, անկողմնակալություն (որոշումների կայացում առանցփոխկապակցված սուբյեկտների կամ այլ ազդեցության), Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի և մյուս հանձնաժողովների ձևավորման կարգ, ԲԴԽ անդամի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցում: Ըստ այդմ, Դատավորների ընդհանուր ժողովը ձևավորելու է դատավորների Էթիկայի և

¹⁶⁵ Տե՛ս Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ընթացիկ արդյունքների մասին զեկույցները:

¹⁶⁶ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունվել է 25.03.2020թ.-ին և ուժի մեջ է մտել 02.05.2020թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141490> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

կարգապահական հարցերի, Գնահատման և Ուսումնական հարցերի հանձնաժողովները: Այս բարեփոխման կարևոր նորարարությունը հանձնաժողովների կազմն է, որը նախատեսում է ՔՀԿ ոլորտի երկու ոչ դատավոր անդամների ներգրավում հանձնաժողովներից յուրաքանչյուրում:

Հանձնաժողովների կազմը հետևյալն է.

1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից, որոնցից 6-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:
2. Դատավորների գործունեության գնահատման հարցերի հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, որոնցից 3-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:
3. Ուսումնական հարցերի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից, որոնցից 5-ը դատավորներ են, իսկ 2-ը՝ ՔՀԿ ոլորտի ոչ դատավոր անդամներ:

Չնայած այս բարեփոխմանը, որը, առերևույթ դիտարկվում է ֆունկցիոնալ, այդուհանդերձ գործնականում դրա իրականացման հետ կապված առկա են որոշ մտահոգություններ: Մասնավորապես, Էթիկայի և կարգապահական, ինչպես նաև Գնահատման հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների ներգրավվածությունը ցածր է, և դատավոր և ոչ դատավոր անդամների միջև հավասարակշռությունը չի ապահովվում: Այս անհամաչափ մոտեցումը և դատավոր անդամների բացարձակ մեծամասնության գործոնը կարող են նպաստել հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների անարդյունավետ աշխատանքին և նրանց մասնակցությունը դարձնել ձևական:

2020 թվականի հուլիսի 31-ին Դատավորների ընդհանուր ժողովը ընտրեց նշված երեք հանձնաժողովների անդամներին: Ցավոք, պետք է նշել, որ չնայած վերը ներկայացված կարգավորմանը, միայն Էթիկայի և կարգապահական հանձնաժողովը համալրվեց ՔՀԿ ոլորտի իրական ներկայացուցիչներով: Մյուս երկու հանձնաժողովներում ընտրված «ՔՀԿ ոլորտի» երեք ներկայացուցիչներն իրականում ուղղակիորեն կապված են դատական համակարգի հետ:¹⁶⁷

Ինչ վերաբերում է Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի (նախկին անվանումը՝ Կարգապահական հանձնաժողով) գործունեությանը, հատկանշական է, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում հանձնաժողովը ստացել է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու 441 հաղորդում, արդյունքում հարուցվել է 43 կարգապահական վարույթ 38 դատավորի նկատմամբ: 43 գործերի քննության արդյունքում Հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացրեց ԲԴԽ-ին ընդամենը 8 գործով: ԱՆ-ի կողմից ԲԴԽ է ներկայացվել է ևս 15 միջնորդություն (ԱՆ-ը նույնպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ ԲԴԽ-ին դիմելու լիազորություն ունի): 23 միջնորդության քննության արդյունքում 13 դատավորներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, որոնցից միայն մեկն է հեռացվել է պաշտոնից՝ կարգապահական կոպիտ խախտման հիմքով: Պատասխանատվության այլ տեսակներ էին նախագգուշացումները, նկատողությունները և խիստ նկատողությունները:¹⁶⁸

¹⁶⁷ Լրագրողական հետաքննության հոդվածները հասանելի են՝ <<https://iravaban.net/284355.html>>, <<https://iravaban.net/284048.html>>, <<https://iravaban.net/284317.html>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁶⁸ Դատական համակարգի գործունեության վիճակագրությունը հասանելի է՝ <<http://court.am/hy/statistic>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.): Բարձրագույն դատական խորհրդի կարգապահական վարույթի վերաբերյալ որոշումները հասանելի են՝ <<http://court.am/hy/disciplinary/1>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Դատավորների վարելարքության ստուգումներ անցկացնելու համար առանձին ընթացակարգ է սահմանվել ԿԿՀ մասին օրենքի 26.1 հոդվածով:¹⁶⁹ ԿԿՀ-ն պաշտոնատար անձանց բարելարքության ուսումնասիրություն իրականացնելու օրենքով սահմանված իրավասություն ունի: Այդ ուսումնասիրությունը ենթադրում է բարելարքության վերաբերյալ հարցաթերթում¹⁷⁰ ներկայացված տվյալների ստուգում, անձի վերաբերյալ ԶԼՄ-ներում տեղ գտած նյութերի, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկատվության վերլուծություն, անձի՝ քրեական ենթամշակույթին պատկանելու հիմքերի ստուգում, գույքի գնահատում և այլն:

Փոփոխությունների հետո, ԿԿՀ-ն արդեն իրականացրել է ԲԴԽ-ի և ՀՀ Սահմանադրական դատարանի անդամների թեկնածուների բարելարքության ստուգում: Լրատվամիջոցների հրապարակումների համաձայն,¹⁷¹ ԿԿՀ-ն բացասական խորհրդատվական կարծիք էր ներկայացրել թեկնածուներից մեկի վերաբերյալ (թեկնածուն այն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահն էր): Բացասական կարծիքը ներկայացվեց Ազգային ժողովի պատգամավորներին, ովքեր պետք է ընտրեին Սահմանադրական դատարանի անդամին: Չնայած սրան, Ազգային ժողովը հաշվի չառավ ԿԿՀ-ի բարելարքության ստուգման արդյունքները և պաշտոնատար անձին ընտրեց որպես Սահմանադրական դատարանի անդամ (դատավոր): Բարելարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, ուստի անհնար է գնահատել այս գործառնության արդյունավետությունը և վերլուծել, թե տրամադրված եզրակացություններից (լինի այն դրական, թե՝ բացասական) քանիսն են հաշվի առնվել որոշումների կայացման ժամանակ:

Վերջին ամիսներին դատական համակարգում ձեռքավորություններ են տեղի ունեցել: Մասնավորապես, ձեռքավորվել են սնանկության դատարանի երկու դատավորներ, ովքեր մեղադրվում են իրենց պաշտոնական լիազորությունները չարաշահելու մեջ: Այս գործերը քննության փուլում են, և մինչ այժմ եզրափակիչ դատական ակտեր չեն կայացվել:¹⁷²

Հաջողված փորձ

Դատավորների ընդհանուր ժողովի յուրաքանչյուր հանձնաժողովում ՔՀԿ ոլորտի երկու ոչ դատավոր անդամների ներգրավում:

Թերություններ

- Բարելարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունները հրապարակման ենթակա չեն:
- Դատավոր անդամների բացարձակ մեծամասնությունը ոչ դատավոր անդամների համեմատությամբ, կարող է նպաստել ոչ դատավոր անդամների անարդյունավետ աշխատանքին և հանձնաժողովներում նրանց մասնակցությունը դարձնել ձևական: Ոչ

¹⁶⁹ «ԿԿՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26.1 հոդվածի համապատասխան փոփոխությունները ընդունվել են 25.03.2020-ին և ուժի մեջ են մտել 02.05.2020-ին

¹⁷⁰ ԿԿՀ-ն բարելարքության վերաբերյալ մշակել է հարցաթերթիկ, հասանելի է՝ <http://cpcarmenia.am/hy/news/item/2020/05/26/154789/> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁷¹ Որոշ լրատվամիջոցների հրապարակումները տե՛ս <https://bit.ly/32TJF7r>, <https://bit.ly/2IMpp0q> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁷² Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <http://court.am/hy/news/316>, <https://iravaban.net/283649.html> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

դատավոր անդամների չափանիշներն ընդհանրական են, և դատական իշխանության հետ փոխկապակցված անձինք կարող են ընտրվել որպես Հանձնաժողովների ոչ դատավոր անդամ:

Հոդված 11, մաս 2

Համանման միջոցները, որոնք կիրառվում են սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, կարող են ներդրվել և կիրառվել Մասնակից պետությունների այն դատախազական մարմիններում, որոնցում դրանք չեն մտնում դատական իշխանության կազմի մեջ, բայց օգտվում են դատական մարմինների անկախությանը համանման անկախությունից:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխաններն ամբողջական են, բայց անհրաժեշտ է ավելացնել վերջին օրենսդրական փոփոխությունները: Նախ նշենք, որ սույն հոդվածի առաջին մասում ներկայացված փոփոխությունները, որոնք վերաբերում են պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրմանը, պաշտոնատար անձանց բարեվարքության ստուգման ուսումնասիրությանը և բարեվարքության հարցաթերթիկին, հավասարապես կիրառելի են դատախազության համակարգում:

Այնուհետև, 2020թ.-ի մայիսի 23-ին ուժի մեջ մտավ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը:¹⁷³ Նույն օրը ուժի մեջ մտավ նաև նշված օրենքի ընդունումից բխող «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:¹⁷⁴

Օրենքի կիրառումն ապահովելու նպատակով կազմակերպվեցին բաց մրցույթներ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնություններ իրականացնող դատախազների և գլխավոր դատախազի՝ այդ ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով: Մրցույթներն անցկացնում էր ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը, որում փորձագետներից երկուսը նշանակվեցին են ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ հասարակական հիմունքներով:¹⁷⁵ Փորձագետներից մեկը Հայաստանի ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի նախկին նախագահ պարոն Արկադի Սահակյանն էր:

Դատախազների կարգապահական տույժերի վերաբերյալ պետք է նշել, որ 2019-2020 թվականներին (2020 թվականի 1-ին կիսամյակ) ստացվել է դատախազների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին 77 հաղորդում: Հաղորդումների ուսումնասիրության արդյունքում հարուցվել է 12 կարգապահական վարույթ 14 դատախազների նկատմամբ: 7 դատախազ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որից մեկի լիազորությունները դադարեցվել են, իսկ մեկի դասային աստիճանը իջեցվել է մեկ աստիճանով: Կիրառված տույժերի մյուս տեսակները նկատողությունն ու խիստ նկատողություն են:¹⁷⁶

¹⁷³ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 16.04.2020թ.-ին և ուժի մեջ է մտել 23.05.2020թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142347> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁷⁴ «ՀՀ դատախազության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններն ու լրացումները ընդունվել են 16.04.2020 թ.-ին և ուժի մեջ են մտել 23.05.2020 թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142346> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁷⁵ Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են՝ <https://www.prosecutor.am/am/mn/7814/> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁷⁶ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից 2020 թ. հոկտեմբերի 1-ին:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 12. Մասնավոր հատված

Հոդված 12, մասեր 1 և 2

Իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, միջոցներն էր ձեռնարկել մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման, մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման ստանդարտների և աուդիտի ուժեղացման և, համապատասխան դեպքերում, այդպիսի միջոցների չպահպանման համար արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քաղաքացիաիրավական, վարչական կամ քրեական պատժամիջոցների սահմանման ուղղությամբ:

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթերում 12 (1) հոդվածի վերաբերյալ տեղեկատվությունը թերի է: Նախ նշենք, որ տեղի են ունեցել օրենսդրական փոփոխություններ, որոնց պատճառով կառավարության ստուգաթերթում նշված դրույթները, որոնք բխում են «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքից և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքից, անվավեր են ճանաչվել և ընդունվել են ոլորտը կարգավորող նոր օրենքներ:

2019 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունվեց «Աուդիտորական գործունեության մասին» նոր օրենք, որն ուժի մեջ է 2020 թվականի հունվարի 1-ից:¹⁷⁷ 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունվեցին «Հաշվապահական հաշվառման մասին»¹⁷⁸ և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքները, որոնք ուժի մեջ են 2020 թ. հունվարի 1-ից:¹⁷⁹

Գնահատելով թափանցիկությունն ու առկա մեխանիզմների իրականացումն ապահովելուն ուղղված մասնավոր հատվածի ջանքերը՝ անհրաժեշտ է քննարկել մի քանի գործիքներ, որոնց ներդրումը ներառված է Հայաստանի հակակոռուպցիոն օրակարգում:

Առաջինը բիզնես (մասնավոր) ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի պահանջների ընդունման խթանումն է: Վերջինս նախատեսված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում: Ի կատարումն այս միջոցառման, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների հետ համատեղ, մշակել և ՀՀ կառավարություն է ներկայացրել Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը,¹⁸⁰

¹⁷⁷ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 04.12.2019թ. և ուժի մեջ է մտել 01.01.2020թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137752> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁷⁸ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 04.12.2019թ. և ուժի մեջ է մտել 01.01.2020թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137754> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁷⁹ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 04.12.2019թ. և ուժի մեջ է մտել 01.01.2020, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137755> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁸⁰ Նախագիծը հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/2015/about>: Նախագիծը հրապարակվել է 2019-ի հոկտեմբերին, սակայն ընդունման գործընթացում դեռևս առաջընթաց չկա (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

որը, ի թիվս այլ սկզբունքների, ամրագրում է նաև այն սկզբունքները, որոնք խթանում են էթիկական վարքն և հակակոռուպցիոն համապատասխանությունը մասնավոր հատվածում: Կանոնագրքի նախագիծը սահմանում է, որ կազմակերպությունները պետք է ստեղծեն ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, որի կարևոր գործառնություններից մեկը համապատասխանության ստուգումը և ապահովումն է: Համաձայն Կանոնագրքի նախագծի՝ այս գործառնություն իրականացնող անձը պարտավոր է կազմակերպել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի իրականացումը և վերահսկել այն:

Երկրորդը՝ իրական սեփականատերերի թափանցիկության հայեցակարգն է, որը ՀՀ-ում ներառված է հետևյալ ոլորտներում.

ա) Բանկային օրենսդրություն

Բանկային օրենսդրությունը օգտագործում է «իրական շահառու» (real beneficiary) հասկացությունը: Այն ավելի լայն է և ներառում է «իրական սեփականատեր» (beneficial owner) եզրույթը: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որը մշակվել է Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (FATF) պահանջներին համապատասխան, նախատեսում է իրավաբանական անձի և *գործարքի կամ գործարար հարաբերությունների* իրական շահառուի բացահայտման պահանջ: Իրական շահառուներին բացահայտելու համար օրենքը նախատեսում է հետևյալ պահանջները.

- *Այն անձինք, ովքեր իրավաբանական անձի կապիտալում իրենց մասնակցության ուժով վերջնական վերահսկողություն են իրականացնում այդ իրավաբանական անձի նկատմամբ (եթե այդպիսիք կան), քանի որ ընդհանուր սեփականության բազմազանության պատճառով հնարավոր է, որ այդպիսի ֆիզիկական անձինք (անհատապես կամ համատեղ) ի վերջո գոյություն չունենան:*
- *Իրավաբանական անձի նկատմամբ այլ միջոցներով (առկայության դեպքում) վերահսկողություն իրականացնող ֆիզիկական անձինք, եթե կասկածներ կան, որ 1-ին կետում նշված իրավաբանական անձի կապիտալի վերահսկիչ փաթեթը տնօրինող ֆիզիկական անձը (անձինք) հանդիսանում է (են) իրական սեփականատեր(եր) կամ եթե ֆիզիկական անձը իր մասնաբաժնի ուժով չի իրականացնում վերահսկողություն իրավաբանական անձի նկատմամբ:*
- *Իրավաբանական անձի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող ֆիզիկական անձ, եթե 1-ին և 2-րդ կետերում նշված ֆիզիկական անձանցից որևէ մեկին հնարավոր չէ պարզել:*

Եթե այս հաջորդական գործողություններից վերջինը նույնպես չի բավարարվում, ապա ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունները պարտավոր են օրենքով սահմանված կարգով մերժել կամ դադարեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունները, ինչպես նաև այն որակել որպես կասկածելի:

բ) Գնումների օրենսդրություն

Իրական սեփականատերերի ինստիտուտն առաջին անգամ ներդրվեց «Գնումների մասին» ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 25-ից: Այն սահմանում է, որ հայտատուն ներկայացնում է տեղեկատվություն հայտի իրական սեփականատերերի վերաբերյալ, իսկ մրցույթում հաղթող ճանաչված հայտատուի սեփականատերերի վերաբերյալ

տեղեկությունները հրապարակվում են գնումների պաշտոնական կայքում:¹⁸¹ Վերոհիշյալ օրենքի համաձայն՝ իրական սեփականատերն այն ֆիզիկական անձն է (անձինք են), որը (որոնք).

- ուղղակի կամ անուղղակի ունի (ունեն) գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ
- այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ
- ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին,
- վերջիններիս բացակայության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Վերջին կետը գործնականում իրականացվում է:

գ) Մետաղական հանքարդյունաբերության օրենսդրություն

Հայաստանը «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (ԱՃԹՆ) շրջանակներում մետաղի արդյունահանման ոլորտում իրական սեփականատերերի ռեգիստր է ստեղծել: Այդ նպատակով, 2019 թվականի ապրիլի 23-ին փոփոխություններ կատարվեցին «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում և «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, դրանք նախատեսում են «*իրական սեփականատեր*» եզրույթի հետևյալ սահմանումը՝ «*ֆիզիկական անձ*», որը՝

- առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության, այդ թվում՝ փայերին, բաժնեմասերին, բաժնետոմսերին կամ քվեարկության իրավունքին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակցից կամ բաժնետեր իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարին,
- վերահսկում է իրավաբանական անձին կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով՝ արտոնյալ բաժնետոմսերի կամ մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայի, այսուհետ՝ բաժնետոմս) կամ այլ արժեթղթերի միջոցով,
- ստանում է իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսը,
- իրավասու է նշանակելու կամ ազատելու իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց,
- իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ հնարավորություն ունի ազդելու իրավաբանական անձի կառավարման վրա, վերահսկելու կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը կամ իրավասու է կանխորոշելու իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ

¹⁸¹ Տե՛ս ՀՀ գնումների պաշտոնական կայքէջը <<https://gnumner.am/hy/>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

գործունեության պայմանագրի, օպցիոն պայմանագրի, բաժնետոմսերի (բաժնեմասերի) փոխարկվող պարտքի տրամադրման պայմանագրի և այլ միջոցներով:

Սույն կետով սահմանված հիմքերով իրավաբանական անձին տիրապետելու, վերահսկելու կամ եկամուտ ստանալու դեպքերում քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական սեփականատեր՝ անկախ վերահսկողության, մասնակցության և եկամտի չափից: 2020 թվականին ՀՀ ԱՆ-ը մշակեց իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, և դրա լրացման ու ներկայացման կարգը: Իսկ ՀՀ կառավարությունը մշակեց հայտարարագրերի հրապարակման կարգը:¹⁸² Ներկայում, բոլոր օրենսդրական փոփոխությունները վերաբերում են միայն մետաղական հանքարդյունաբերության ոլորտում աշխատող ընկերություններին, այսինքն՝ միայն վերջիններս են պարտավոր տեղեկատվություն տրամադրել իրենց իրական սեփականատերերի մասին:

դ) Այլ հանձնառություններ

Իրական սեփականատերերի ինստիտուտի հետ կապված պարտավորությունները նախատեսված են ՀՀ 2019-2022թթ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ, ԲԿԳ ազգային գործողությունների 4-րդ ծրագրով և ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի մոնիթորինգի 4-րդ փուլի զեկույցով: Դրանք նախատեսում են, որ կստեղծվի իրավաբանական անձանց իրական սեփականատերերի գրանցամատյան և, ընկերությունները, քայլ առ քայլ, օրենքով սահմանված կարգով պարտավորված կլինեն բացահայտելու իրենց իրական սեփականատերերին:

Հայաստանում չկա իրական սեփականատերերի միասնական գրանցամատյան, որտեղ ընկերությունները և այլ տեսակի իրավաբանական անձինք (ինչպիսիք են՝ հիմնադրամները, ազգային և միջազգային հավատարմագրային ֆոնդերը) պարտավոր են բացահայտել իրենց իրական սեփականատերերին: Սակայն, հարկ է նշել, որ 2020թ.-ի 1-ին կիսամյակի հակակոռուպցիոն ռազմավարության ընթացիկ արդյունքների մասին զեկույցի 24-րդ կետի համաձայն, ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի շրջանակներում մշակվել է իրական սեփականության ռեգիստրի ծրագրային ապահովումը:

Ի լրումն պետք է նշել, որ իրական սեփականատերերի մասին տրամադրված տեղեկատվությունը ճշգրիտ լինելու վերաբերյալ իրավական մեխանիզմները Հայաստանի օրենսդրության շրջանակներում արդյունավետ չեն: Հետևաբար, մենք կարծում ենք, որ իրական սեփականատերերի ոլորտի կարգավորումը այնքան արդյունավետ չէ, որ ապահովվի մասնավոր հատվածում թափանցիկության անհրաժեշտ մակարդակ: Այս համատեքստում հարկ է նաև ընդգծել, որ ՀՀ ԱՆ-ն գործարկում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրը,¹⁸³ որը ներառում է տեղեկատվություն ՀՀ-ում գործող իրավաբանական անձանց վերաբերյալ (ինչպիսիք են հիմնադրամները, ասոցիացիաները, առևտրային կազմակերպությունները և այլն): Սակայն, այս տեղեկատվությունը չի ենթադրում տեղեկություններ ընկերությունների և այլ իրավաբանական անձանց իրական սեփականատերերի մասին: Դրանք կազմակերպության (բացառությամբ փակ բաժնետիրական ընկերությունների) կողմից տրամադրված այսպես կոչված «հանրային բնույթի

¹⁸² ՀՀ արդարադատության նախարարի կողմից 05.02.2020 թ. ընդունված N 36-Ն հրամանը «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» հասանելի է՝ <http://moj.am/legal/view/article/1283/> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁸³ ՀՀ ԱՆ-ն գործարկում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրը, հասանելի է՝ <https://www.e-register.am/am/> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

տեղեկություններն են»։ Ընդ որում, այս տեղեկությունները հասարակության համար ազատորեն հասանելի չեն (հասանելի միակ տեղեկատվությունը կազմակերպության անվանումն է, և թե արդյո՞ք կազմակերպությունը լուծարվել է, թե՛ ոչ)։ Շահագրգիռ կողմը անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար պարտավոր է պետական տուրք վճարել (օրինակ՝ այդ տեղեկությունները կարող են վերաբերվել կազմակերպության հիմնադրման ամսաթվին, գրանցման հասցեին, նախորդ սեփականատերերի և տնօրենների տվյալներին և այլն)։ Նախկինում՝ այս տեղեկությունների մեծ մասը հասանելի էր հանրությանը առանց հավելյալ վճարների։ Ներկայում, օրենսդրական վերջին փոփոխությունների լույսի ներքո, միայն լրագրողներն իրավունք ունեն անվճար ստանալ ընկերությունների վերաբերյալ վերոհիշյալ տեղեկությունները։¹⁸⁴

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ-ը մշակել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը հրապարակված է e-draft.am կայքում։ Նախագծում, «իրական սեփականատեր» հասկացությունը փոխարինվել է «իրական շահառու» հասկացությամբ, քանի որ «իրական շահառու» հասկացությունը միջազգային փորձի տեսանկյունից օգտագործվում է որպես ավելի լայն հասկացություն։ Բացի այդ, նախագիծը նախատեսում է, որ 2021 թվականից իրական շահառուներին բացահայտելու պահանջը կիրառվելու է հանրային ծառայությունների կարգավորման և աուդիտ-վիզուալ մեդիա ծառայություններ մատուցող ոլորտում գործող իրավաբանական անձանց նկատմամբ։ 2022 թվականի հունվարի 1-ից նշված պահանջները կկիրառվեն ՀՀ-ում գրանցված և գործող բոլոր տեսակի իրավաբանական անձանց նկատմամբ։ Ռեգիստրի որոշ հիմնական տեղեկություններ հասանելի կլինեն անվճար, մինչդեռ այլ մանրամասներ կարելի է ձեռք բերել միայն պետական տուրք վճարելուց հետո։¹⁸⁵

Հաջողված փորձ

Լրագրողները հասանելիություն ունեն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրում գրանցված իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվությանը։

Թերություններ

Հայաստանում չկա իրական սեփականատերերի միասնական գրանցամատյան, որտեղ բոլոր տեսակի իրավաբանական անձինք պարտավոր են բացահայտել իրենց իրական սեփականատերերին։ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրը, որը ներառում է տեղեկատվություն իրավաբանական անձանց վերաբերյալ, հասարակության համար ամբողջովին ազատ և անվճար հասանելի չէ։

Հոդված 12, մաս 3

¹⁸⁴ Տե՛ս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները։

¹⁸⁵ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը հասանելի է՝ <<https://www.e-draft.am/projects/2818/about>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.)։

Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարգել են այնպիսի արարքների կատարումը, ինչպիսիք իրականացվում են Կոնվենցիայով սահմանված իրավախախտումներից որևէ մեկը կատարելու համար:

Կառավարության ստուգաթերթում նշված պատասխանատվության միջոցներից բացի, այստեղ պետք է թվարկվեն վարչական և քրեական իրավահարաբերությունների այլ կարգավորումներ նույնպես: Մասնավորապես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում նախատեսված հետևյալ վարչական իրավախախտումները. հաշվապահական հաշվառում չվարելը (հոդված 169.9), հաշվապահական հաշվառման քաղաքականություն չսահմանելը (հոդված 169.10), հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ տեղեկությունները չպահպանելը (հոդված 169.11), պետական մարմիններ ֆինանսական հաշվետվությունները չներկայացնելը կամ դրանք չհրապարակելը (հոդված 169.12), հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները չորակավորված հաշվապահի կողմից ստորագրելը կամ անստորագիր ներկայացնելը (հոդված 169.13), հիմնադրամների կողմից հաշվետվությունը չհրապարակելը կամ դրա չներկայացնելը (հոդված 169.18), հասարակական կազմակերպության կողմից հաշվետվությունը չհրապարակելը կամ չներկայացնելը (հոդված 169.26), հարկերը, տուրքերը և օրենքով նախատեսված այլ պարտադիր վճարներ չվճարելը (հոդված 170.3), հարկային մարմիններում սահմանված ժամկետում հաշվառման չկանգնելը (հոդված 170.4):

Կառավարության ստուգաթերթում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեությանը վերաբերող հղումները քննարկված են սույն զեկույցի 12-րդ հոդվածի 1-ին կետում:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 13. Հասարակության մասնակցությունը

Հոդված 13, մաս 1

Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ, քաղաքացիական հասարակության, ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում ակտիվ մասնակցությանը նպաստելու համար և հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար:

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխանը գրեթե ամբողջական է: Անհրաժեշտ է ավելացնել հետևյալը.

- Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամակցության անհիմն և չփաստարկված դադարեցումը: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում ՀԿ-ներ ներգրավելու նպատակով մրցույթի կազմակերպումը զուգորդվել է մրցույթը կարգավորող իրավական ակտի պահանջների ընթացակարգային խախտումներով: Արդյունքում, Խորհրդի

կազմում իրավական ակտի պահանջների խախտմամբ ընդգրկվեցին երեք ՀԿ-ներ: Այս մասին տեղեկատվությունը տրամադրված է սույն այլընտրանքային գեկույցի 6-րդ հոդվածի ներքո:

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում¹⁸⁶ և մի շարք այլ հարակից օրենքներում կատարված փոփոխությունների արդյունքում լրատվամիջոցներն ու լրագրողները ազատվեցին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից տեղեկատվություն ստանալու համար պետական տուրքի վճարումից, որը հնարավորություն է տալիս լրատվամիջոցներին ավելի արդյունավետ գործել և հանրությանը լրացուցիչ տեղեկություններ հաղորդել: Սակայն, այս տեղեկատվությունը ազատորեն հասանելի չէ լայն հասարակության համար:
- Ծանոթանալով 2019 թվականի և 2020 թվականի առաջին կիսամյակի Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացիկ արդյունքների մասին հաշվետվություններին¹⁸⁷ կարելի է եզրակացնել, որ.
 - Միջոցառում 5. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների և ՀԿ-ների կարողությունների զարգացումը իրականացվել է մասնակի, քանի որ կարիքների նախնական գնահատումն իրականացվել է առանց հստակ մեթոդաբանության:
 - Միջոցառում 26. Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրումն իրականացվել է մասնակի, քանի որ ուսումնասիրվում են ստեղծվելիք հարթակի տեխնիկական հնարավորությունները: Ըստ ԱՆ-ի՝ ներկայում քննարկվում են միասնական հարթակի ստեղծման հայեցակարգային դրույթները:
 - Միջոցառում 28. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրումը՝ այդ թվում դիմումների լրացման օրինակելի ձևերի մշակումն իրականացվել է մասնակի, քանի որ դեռևս միայն մշակվել է էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և նախագծվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների օպտիմալացման մեթոդաբանություն:
 - Միջոցառում 30. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծումը իրականացվել է մասնակի, քանի որ քննարկվել է միայն ստեղծվելիք հարթակի հայեցակարգը:
 - Միջոցառում 42. Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակումը, հաստատումը և իրականացումը կատարվել է մասնակի, սակայն կարծում ենք, որ նախատեսված գործողությունների ցանկը գրեթե ամբողջապես անհամապատասխան է: Ավելին, մեր գնահատմամբ, այս առումով համակարգված աշխատանք չի կատարվել՝ արդյունքներ չեն գրանցվել:

¹⁸⁶ Տե՛ս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները:

¹⁸⁷ Տե՛ս Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացիկ արդյունքների մասին հաշվետվությունները:

- Միջոցառում 43. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառումը բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում իրականացվել է մասնակի, քանի որ ամբողջությամբ չի իրականացվել համալսարանների դեպքում, իսկ միջին մասնագիտական կրթական հաստատությունների դեպքում նախատեսվում է միայն, որ այն կիրականացվի 2020-2021 ուսումնական տարում:
- Միջոցառում 44. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության ապահովումն իրականացվել է մասնակի, քանի որ կատարվել են միայն դպրոցներում դասընթացների չափանիշների մշտադիտարկման աշխատանքներ:
- Միջոցառում 45. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, վերապատրաստումների անցկացումը՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով, կատարվել է մասնակի, իսկ կատարումը կասեցվել է: Մեր գնահատմամբ, այս գործողությունը չի իրականացվել կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ուսուցման առումով:
- Միջոցառում 48. Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերաբար հարցումների իրականացումը հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակումը իրականացվել է մասնակի, քանի որ 2019 թվականի սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին Միջազգային հանրապետական ինստիտուտն (IRI) անցկացրել է կոռուպցիայի ընկալման վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրություն:¹⁸⁸ Որևէ այլ նախաձեռնություն, ինչպես օրինակ՝ որակական և/կամ քանակական հետազոտության մշակում հակակոռուպցիոն բոլոր դերակատարների մասնակցությամբ, չի իրականացվել:
- Վերջին մի քանի տարիների ընթացքում որոշ մասնագիտացված ՔՀԿ-ներ իրականացրել են հակակոռուպցիոն ծրագրեր,¹⁸⁹ որոնք ուղղված են քաղաքացիների, այդ թվում՝ երիտասարդների կրթությանը:

Հասարակության մասնակցությունը քննարկելիս կարևոր է դիտարկել նախարարություններին և վարչապետին կից հասարակական խորհուրդների դերը: Այս խորհուրդները հանդիսանում են խորհրդատվական մարմիններ և նպատակ ունեն աջակցելու նախարարներին և վարչապետին՝ ընդհանուր քաղաքականության, բարեփոխումների, ինչպես նաև ՔՀԿ-ների և պետական մարմինների միջև բովանդակալից երկխոսություն հաստատելու ուղղությամբ: Սակայն, այս խորհուրդները գործում են ավելի ձևական, քան արդյունավետ. նիստերը պարբերաբար չեն անցկացվում, օրակարգերը ՔՀԿ-ների հետ նախապես չեն քննարկվում և ՔՀԿ-ներին տրամադրվում են նիստերից երկու-երեք օր առաջ: ՔՀԿ-ներն անգամ հնարավորություն չունեն մասնակցելու օրակարգի մշակմանը, կամ ներկայացնելու

¹⁸⁸ Հանրային կարծիքի ուսումնասիրությունը հասանելի է՝ <<https://www.iri.org/resource/new-poll-armenians-support-anti-corruption-measures-want-action-socioeconomic-concerns>>,

<https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁸⁹ ԻՀԱ-ի կողմից ստեղծած և գործարկվող առցանց հակակոռուպցիոն ուսուցման հարթակը հասանելի է՝ <<https://elearning.armla.am/>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

առաջարկություններ դրա վերաբերյալ: Նույնը վերաբերում է նաև վարչապետի նախագահությամբ գործող Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին, որտեղ ներկայացված չեն անկախ մասնագիտացված հակակոռուպցիոն ՔՀԿ-ներ:¹⁹⁰

Սույն հոդվածի համար արդիական մեկ այլ խնդիր է կառավարության և պետական այլ մարմիններում որոշումների կայացման գործընթացների թափանցիկությունը: Ինչպես նշվեց այս այլընտրանքային զեկույցում, ԱՆ-ն գործարկում է www.e-draft.am կայքը: Պետական մարմինները պարտավոր են այստեղ հրապարակել և կազմակերպել օրենքների հանրային քննարկումներ: Ենթաօրենսդրական ակտերի հանրային քննարկումը պարտադիր չէ, և պետական մարմինները իրենց հայեցողությամբ են որոշում, թե որ ենթաօրենսդրական ակտն է նպատակահարմար ներկայացնել հանրային քննարկման: Այսպիսով, հանրությանը չի տեղեկացվում մի շարք որոշումների մասին մինչև դրանց ընդունումը: Այդպիսի որոշումներից մեկը Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) ղեկավարի հրամանն էր, որը ՔՀԿ-ների համար տարեկան հաշվետվություններին վերաբերող իրավակարգավորումներում նախատեսում էր լրացուցիչ բեռ: Սակայն, ՔՀԿ-ների ջանքերի շնորհիվ ՊԵԿ-ի և ՔՀԿ-ների միջև ձևավորվեց կառուցողական երկխոսություն, և այդ իրավական ակտի՝ լրացուցիչ բեռ նախատեսող դրույթներն անվավեր ճանաչվեցին:¹⁹¹

Մեկ այլ էական թերություն է պետական մարմինների կողմից կիրառվող հասարակական մոնիթորինգի մեխանիզմների բացակայությունը: Այստեղ մտահոգիչ գործոնն այն է, որ իրավասու մարմինները հասարակության հետ հետադարձ կապ չեն պահում: Օրինակ, հրապարակում են օրենքի նախագիծ և այն ներկայացնում որպես որոշակի հանձնառության կատարման ցուցանիշ: Սակայն, պետական մարմինները ջանք չեն գործադրում պարզելու արդյոք հասարակության վերջին շահառուն ծանոթ է օրենսդրական ակտի նախագծին, թե ոչ:¹⁹²

Թերություններ

- ՀՀ վարչապետին և նախարարություններին կից հասարակական խորհուրդները գործում են ավելի ձևական, քան արդյունավետ. նիստերը պարբերաբար չեն անցկացվում, օրակարգերը ՔՀԿ-ների հետ նախապես չեն քննարկվում և ՔՀԿ-ներին տրամադրվում են նիստերից երկու-երեք օր առաջ: ՔՀԿ-ներն անգամ հնարավորություն չունեն մասնակցելու օրակարգի մշակմանը կամ ներկայացնելու առաջարկություններ:
- Վերջին երկու տարիներին Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունն անարդյունավետ և քաղաքականացված է: Անկախ մասնագիտացված հակակոռուպցիոն ՔՀԿ-ներ ներկայացված չեն:

¹⁹⁰ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ պարոն Կարեն Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

¹⁹¹ Արդյունքների մասին մանրամասն տես՝ <https://armla.am/45494.html>: Համաձայն «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենքի (Հոդված 24)՝ ՀԿ-ները պետք է մանրամասն հաշվետվություններ ներկայացնեն օգտագործված պետական միջոցների վերաբերյալ: Սակայն, ՊԵԿ ղեկավարի հրամանը լրացուցիչ բեռ էր նախատեսում ՀԿ-ների համար և անհիմն պարտավորեցնում ՀԿ-ներին ներկայացնել նաև ոչ հանրային ֆինանսավորումների վերաբերյալ հաշվետվությունը: Այս կարգը հակասում էր օրենքին (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁹² Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ, «Աուդիտ-վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ նախագահ պարոն Արզուման Հարությունյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի հոկտեմբերի 28-ին:

- Պետական մարմինները պարտավոր են հրապարակել և կազմակերպել օրենքների հանրային քննարկումներ: Ենթաօրենսդրական ակտերի հանրային քննարկման անցկացումը պարտադիր չէ, և պետական մարմինները կարող են իրենց հայեցողությամբ որոշել, թե որ ենթաօրենսդրական ակտն է նպատակահարմար ներկայացնել հանրային քննարկման: Այսպիսով, քաղհասարակությունը չի տեղեկացվում մի շարք որոշումների մասին մինչև դրանց ընդունումը:
- Պետական մարմինների կողմից կիրառվող հասարակական մոնիթորինգի մեխանիզմները բացակայում են: Իրավասու մարմինները հասարակության հետ հետադարձ կապ չեն պահում, ինչպես նաև ջանք չեն գործադրում պարզելու արդյոք հասարակության վերիջն շահառուն ծանոթ է օրենսդրական ակտի նախագծին, թե ոչ:

Հոդված 13, մաս 2

Ձեռարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ Կոնվենցիայում հիշատակված հակակոռուպցիոն մարմինները հայտնի լինեն հանրությանը, և ապահովել մուտքը դեպի այդ մարմինները, այդ թվում՝ անանուն ձևով՝ ամեն մի դեպքի մասին նրանց հաղորդումներ տրամադրելով, որը կարող են դիտարկվել որպես իրավախախտում՝ Կոնվենցիային համապատասխան:

Կառավարության ստուգաթերթում այս մասի պատասխանը գրեթե ամբողջական է: Անհրաժեշտ է ավելացնել հետևյալը.

- Կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդում ներկայացնելու համար ՀՀ-ում գործում է ազդարարման պետական, միասնական էլեկտրոնային հարթակը (<https://www.azdararir.am/am/>), որի միջոցով, ըստ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի, ազդարարը կարող է անանուն կերպով տեղեկություններ տրամադրել ենթադրյալ կոռուպցիոն դեպքի վերաբերյալ: Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ-ը՝ ի դեմս ՀՀ կառավարության լիազոր մարմնի, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Քրեական գործ հարուցելու հիմքերի առկայության դեպքում ՀՀ գլխավոր դատախազությունը հաղորդումը ուղարկում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին: Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել: Օրինակ, 2020 թվականին հարթակի միջոցով ներկայացվել է 136 հաղորդում, որից 37.65% -ը ստուգվել է օպերատիվ-հետախուզական գործողություններով, իսկ 29.69%-ի դեպքում քրեական գործեր են հարուցվել:
- ՀՀ-ում գործում է նաև բիզնես ոլորտում խախտումների վերաբերյալ հաղորդումների էլեկտրոնային հարթակ, որի միջոցով անձիք կարող են անանուն կերպով հաղորդումներ ներկայացնել բիզնեսի ոլորտում ենթադրյալ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ: Այս էլեկտրոնային ազդարարման հարթակը երաշխավորում է ազդարարողի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Այս

Էլեկտրոնային հարթակը շահագործվում է ԻՀԱ-ի կողմից և գործարկվել է ավելի վաղ, քան ազդարարման պետական միասնական էլեկտրոնային հարթակը:¹⁹³

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 14. Փողերի լվացման կանխարգելման միջոցներ

Այս մասը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Հոդված 14, Ենթակետ 1 (ա)

Մահմանել կարգավորման և հսկողության համապարփակ ներքին ռեժիմ՝ բանկերի և ոչ բանկային ֆինանսական հիմնարկների, այդ թվում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք պաշտոնական կամ ոչ պաշտոնական ծառայություններ են տրամադրում դրամական միջոցների կամ արժեքների փոխանցումների հետ կապված, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, իր իրավասության սահմաններում՝ այլ մարմինների նկատմամբ, որոնք փողերի լվացման տեսակետից հատկապես խոցելի են, փողերի լվացում թույլ չտալու և դրա բոլոր ձևերը բացահայտելու նպատակներով. ընդ որում՝ նման ռեժիմն առաջին հերթին հիմնվում է հաճախորդի և, համապատասխան դեպքերում, իրական սեփականատիրոջ նույնականացման պահանջների, հաշվետվություն վարելու և կասկածելի գործարքների մասին հաղորդումներ ներկայացնելու վրա:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխանն ամբողջական է: Սակայն, պետք է ավելացնել, որ 2020թ. մարտի 25-ին փոփոխություն կատարվեց «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում, որի արդյունքում արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք հանվեցին հաշվետվություն տրամադրող անձանց շրջանակից: Մա ամրագրվեց Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետով:¹⁹⁴

Կարևոր է նշել նաև փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության բացերը: Մասնավորապես, ՓԼ/ԱՖ առաջարկությունները լիարժեք իրականացնելու համար քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը նույնպես սահմանափակ է:

Մեկ այլ խնդիր, որը դեռ կարգավորված չէ, այն է, որ Հայաստանի օրենսդրությամբ իրավաբանական կազմավորումը առանձին նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ: Օտարերկրյա իրավական կազմավորումները ներկայացված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի 3-րդ հոդվածի 16-րդ մասում ամրագրված իրավաբանական անձի սահմանման շրջանակներում՝ որպես «Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ հիմնարկ, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորում»: Հետևաբար, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով

¹⁹³ Ազդարարման հարթակի մասին մանրամասն տե՛ս սույն զեկույցի 8-րդ հոդված 4-րդ մասի շրջանակներում:

¹⁹⁴ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 25.03.2020 թ.-ին և ուժի մեջ է մտել 15.04.2020թ.-ին, հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141093>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

սահմանված նույնականացման և ստուգման պահանջները, որոնք տարածվում են իրավաբանական անձի (տեղական կամ օտարերկրյա) վրա, տարածվում են նաև օտարերկրյա իրավաբանական կազմավորման վրա: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքում գոյություն չունի իրավաբանական կազմավորման իրական սեփականատիրոջ առանձին սահմանում: Հայաստանի օրենսդրության մեջ չեն կիրառվում իրավաբանական կազմավորման իրական սեփականատիրոջը (հիմնադիր, հոգաբարձու կամ պաշտպան) սահմանելու համար օգտագործվող հասկացությունները, քանի որ ինչպես արդեն նշվեց՝ իրավաբանական կազմավորումները Հայաստանի օրենսդրությամբ ամրագրված չեն:¹⁹⁵

Վերջին հարցը, որը հարկ է նշել, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունն է կոռուպցիոն հանցագործությունների կատարման համար: Հայաստանում առաջին անգամ կառավարությունը պատրաստ էր դիտարկելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը և հակակոռուպցիոն ռազմավարության մեջ ներառվեց համապատասխան դրույթը: 2020թ.-ի 1-ին կիսամյակի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ընթացիկ արդյունքների մասին զեկույցի 40-րդ կետի և ԱՆ տրամադրած լրացուցիչ տեղեկատվության համաձայն՝ այս ինստիտուտի ներդրման նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը և մշակվել է Քրեական օրենսգրքի նախագիծը, որը հավանության է արժանացել կառավարության կողմից և ներկայացվել Ազգային ժողով:

Հարկ է նշել, որ 2020 թվականի հոկտեմբերի 13-ին հրապարակվեց «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը,¹⁹⁶ որով նախատեսվում է կարգավորել վերոնշյալ խնդիրները: Սակայն, օրենքի նախագիծը դեռ լրամշակման փուլում է, և 2020 թվականի նոյեմբերի դրությամբ, օրենքի նախագծի քննարկումը չի ընդգրկվել Ազգային ժողովի առաջիկա նստաշրջանում:

Թերություններ

Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չափազանց սահմանափակ է:

Հոդված 14, Ենթակետ 1 (բ)

Ապահովել, որ վարչական, կարգավորող, իրավապահ և մյուս մարմինները, որոնք նշանակված են փողերի լվացման դեմ պայքարելու համար (ներառյալ, ազգային օրենսդրությամբ նախատեսված համապատասխան դեպքերում, դատական մարմինները), ընդունակ լինեն իր ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններով ազգային և միջազգային մակարդակներում համագործակցություն իրականացնել և տեղեկատվություն փոխանակել, և այդ նպատակով քննարկել ֆինանսական օպերատիվ տեղեկատվության գծով ստորաբաժանում հիմնելու հարցը,

¹⁹⁵ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումներ - Հայաստան.

Հինգերորդ փուլի փոխադարձ գնահատման զեկույց, 2015 թվականի դեկտեմբեր, հասանելի է՝ [http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/reports/mer-fsr/MONEYVAL\(2015\)34_5thR_MER_Armenia.pdf](http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/reports/mer-fsr/MONEYVAL(2015)34_5thR_MER_Armenia.pdf), 121-րդ չափանիշ 10.11, էջ 130 (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁹⁶ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/2798/about> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

որը պետք է գործի որպես փողերի լվացման հնարավոր դեպքերին առնչվող տեղեկությունների հավաքման, վերլուծության և տարածման ազգային կենտրոն:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխանն ամբողջական է, բայց պետք է ավելացնել, որ 2019 թ.-ի հոկտեմբերի 29-ին հրապարակվեց Մասնակից պետությունների խորհրդաժողովի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագանձման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին 14-րդ հոդվածի («Կասկածելի ներքին գործարքների հետաձգում») վերաբերյալ» (CETS թիվ 198) զեկույցը:¹⁹⁷ Թեմատիկ մոնիթորինգի զեկույցի համաձայն՝ Հայաստանի իշխանությունները իրավասու են կասեցնելու կասկածելի գործարքների կնքումը մինչև հինգ օր (ՖԴԿ/Կենտրոնական բանկի համար) կամ երեք օրով (ՖԴԿ-ի համար) ժամկետով: Ընդ որում, պարտադիր չէ, որ կասեցումը հիմնված լինի կասկածելի գործարքների վերաբերյալ զեկույցների վրա: Գործնականում նման նախադեպեր տեղի են ունեցել: Այնուամենայնիվ, ՖԴԿ-ի կողմից ներկայացված կասկածելի գործարքների վերաբերյալ զեկույցների քանակի վերաբերյալ հրապարակային տվյալներ չկան:

Փողերի լվացման վերջին դեպքերից մեկը վերաբերվում է նախկին բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին և նրա կնոջը: Քրեական գործը հարուցվել էր ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի (3-րդ մասի 1-ին կետ) հատկանիշներով՝ առանձնապես խոշոր չափերով ապօրինի ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) համար:¹⁹⁸ Փողերի լվացման մեղադրանքով 2018թ.-ին հարուցվել է 7 քրեական գործ, 2017թ.-ին քրեական գործ չի հարուցվել: 2019 թ.-ին ապօրինի հարստացումը քրեականացնելուց հետո այդ հոդվածով 5 անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ:¹⁹⁹

Իրավապահ մարմինները պարբերաբար չեն իրականացնում պրոակտիվ զուգահեռ ֆինանսական հետաքննություններ: Ամեն դեպքում, խոշոր եկամտաբեր հանցագործությունների հետ կապված փողերի լվացման դեպքերը բացահայտելու ներուժը սահմանափակ է:²⁰⁰ Մինչև 2015-2017 թվականների հետ համեմատ 2018-2019 թվականների ընթացքում կտրուկ աճել է իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ին՝ ՀՀ Կենտրոնական բանկի ենթակայության տակ գործող ֆինանսական հետախուզության ստորաբաժանմանն ուղղված դիմումների քանակը: 2018-ին և 2019-ին կատարվել է համապատասխանաբար 84 և 202 հարցում՝ 2015-2017 ժամանակահատվածում գրանցված 36 և 58 հարցումների համեմատ:²⁰¹

¹⁹⁷ 14-րդ հոդվածի վերաբերյալ CETS 198-ի Մասնակից պետությունների խորհրդաժողովի մոնիթորինգի թեմատիկ զեկույցը («Ներքին կասկածելի գործարքների հետաձգում») հասանելի է՝ <https://rm.coe.int/conference-of-the-parties-council-of-europe-convention-on-laundering-s/168098e89f> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁹⁸ Տե՛ս <https://www.ccc.am/hy/1428493746/3/5962> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

¹⁹⁹ 2019 թվականի ապրիլին Երևանում կայացած ԻՀԱ-ի կողմից կազմակերպված Հակակոռուպցիոն փորձագիտական միջազգային համաժողովի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից տրամադրված պաշտոնական տվյալները տե՛ս <https://www.prosecutor.am/am/mo/7423/> https://www.youtube.com/watch?v=o_F5iDkykQQ (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁰⁰ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումներ - Հայաստան. Հինգերորդ փուլի փոխադարձ գնահատման զեկույց, 2015 թվականի դեկտեմբեր, էջ 7, մաս 14

²⁰¹ 2019 թվականի գործունեության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի տարեկան հաշվետվություն: Ֆինանսական դիտարկումների կենտրոն, ՀՀ կենտրոնական

Հոդված 14, մաս 2

Քննարկել կանխիկ դրամական միջոցների և համապատասխան շրջանառու գործիքների՝ իրենց սահմաններով տեղափոխումները բացահայտելու և այդպիսի տեղափոխումները վերահսկելու ուղղությամբ պրակտիկ հնարավոր միջոցներ ձեռնարկելու մասին հարցը՝ տեղեկատվության պատշաճ օգտագործման ապահովմանն ուղղված երաշխիքների պահպանման պայմանով և օրինական կապիտալի տեղափոխման համար որևէ արգելք չստեղծելով:

Կառավարության ստուգաթերթում ներկայացված պատասխանը գրեթե ամբողջական է: Ավելացնենք, որ կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգությունը Հայաստանում հանցագործություն է (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 215.1):

5. ԳԼՈՒԽ V. ԱԿՏԻՎՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 51. Ընդհանուր դրույթներ

Այս հոդվածը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

Սույն գլխի համաձայն՝ ակտիվները վերադարձնելն իրենից ներկայացնում է սույն Կոնվենցիայի հիմնարար սկզբունքը, և Մասնակից պետություններն ամենալայն ձևով պետք է համագործակցեն միմյանց հետ և այդ կապակցությամբ աջակցեն միմյանց:

Չնայած այս կապակցությամբ վերջերս զգալի քայլեր են իրականացվել, սակայն ՀՀ օրենսդրությունը չի կարող դիտարկվել որպես ակտիվների վերադարձման ոլորտում ամենալայն ձևով համագործակցող և աջակցող այլ Մասնակից պետությունների հետ:

Թերություններ

Առաջին մարտահրավերը քաղաքականության մակարդակում ակտիվների վերադարձման վերաբերյալ միասնական պետական հայեցակարգի բացակայությունն է, որը կընդգրկեր ակտիվների վերադարձման բոլոր փուլերն ու տեսակները, ներառյալ՝ քրեական կարգով բռնագանձումը, քաղաքացիական կարգով բռնագանձումը և ակտիվների անմիջական վերադարձը: Արդյունքում, ակտիվների վերադարձի իրավական դաշտը, չնայած վերջին օրենսդրական բարեփոխումներին, շարունակում է մնալ խրթին և թերի:²⁰² Ինչպես կքննարկվի այս գլխում, ակտիվների վերադարձի համար անհրաժեշտ են մի շարք ընթացակարգային գործողություններ, ինչպիսիք են ակտիվների վերադարձը և վերաբաշխումը, որոնք չեն կարգավորվում ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով: Մասնավորապես, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ նոր օրենքը վերաբերում է ակտիվների վերադարձման միայն մեկ ասպեկտին՝ քաղաքացիական կարգով բռնագանձմանը: Միննույն ժամանակ, «Քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը մշակվել է դեռ 2019 թ.-ին և վերաբերում է պետությունների միջև քրեական գործերով միջազգային համագործակցության համապարփակ կարգավորմանը, ներառյալ՝ ակտիվների վերադարձին ծագման երկիր, խորհրդարանի կողմից չի ընդունվել:

Երկրորդ խնդիրը վերաբերում է ակտիվների վերադարձման իրավասու մարմինին: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը նախատեսում է Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում:²⁰³ Այս միջոցառումն իրականացնելու համար ընդունվել է արդեն իսկ հիշատակված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը: Այն նախատեսում է, որ ՀՀ-ում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման միջազգային գործերի համակարգող լիազորված պետական մարմինը Գլխավոր դատախազությունն է:²⁰⁴ Այդ նպատակով ՀՀ

²⁰² Հարցազրույց հակակոռուպցիոն անկախ փորձագետ պարոն Նարեկ Ենոքյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

²⁰³ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը», միջոցառում 39:

²⁰⁴ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ նոր օրենք, հոդված 3(1)(15):

գլխավոր դատախազի 2020թ.-ի հունիսի 3-ի N 50 հրամանի²⁰⁵ համաձայն՝ ստեղծվել է Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը ՀՀ գլխավոր դատախազության կազմում, որը գործում է 2020թ.-ի սեպտեմբերից:²⁰⁶ Սակայն, հիմնավորված չէ, թե ինչու է ապօրինի գույքի բռնագանձման գործերով իրավասու մարմինը ՀՀ գլխավոր դատախազությունը: Որպես վերջինիս հիմնավորում բերվում է ՀՀ սահմանադրության այն դրույթը, համաձայն որի՝ Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:²⁰⁷ Հայց հարուցելու բացառիկ հիմքերը ուղղակի կերպով և սպառնիչ թվարկված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքում,²⁰⁸ որի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք իրապես բացառիկ են: Մինչդեռ, ապօրինի ծագման գույքի բռնագանձման հայցի հարուցումն իր բնույթով բացառիկ չէ, և օբյեկտիվորեն նման հայց կարող է հարուցվել ՀՀ-ում գործող մի շարք պետական մարմինների կողմից:²⁰⁹

Մեկ այլ մտահոգություն վերաբերում է ՀՀ գլխավոր դատախազության ներքո համապատասխան վարչության ձևավորման գործընթացներին: Չնայած ապօրինի ծագման գույքի բռնագանձման վարչությունում նշանակվելիք դատախազների թեկնածուների ցուցակների համալրումն իրականացվել է ՀՀ գլխավոր դատախազին առնթրեր որակավորման հանձնաժողովի կողմից անցկացված բաց մրցույթների միջոցով, որոշ փորձագետներ բարձրացնում են թափանցիկության հարցը, հիմնականում՝ բարելավքության ստուգման փաստաթղթերի չիրապարակումը, ինչպես նաև այն փաստը, որ դատախազներն ընտրվել են դատախազությունից, ինչը կարող է բացասաբար ազդել նրանց անաչառության վրա, եթե խնդրո առարկա գույքը պատկանի գործող իշխանության ներկայացուցիչներին:²¹⁰ Մյուս կողմից, նշված հանձնաժողովի ՔՀԿ անդամները վստահեցնում են, որ հանձնաժողովի կատարած քրտնաջան աշխատանքը հանգեցրել է բարձր բարոյական և մասնագիտական որակներով օժտված, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության, միջազգային իրավունքի և օտար լեզուների տարբեր ոլորտների

²⁰⁵ «ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի N 50 հրաման, ընդունվել է՝ 03.06.2020թ.-ին, հասանելի է՝ <https://www.prosecutor.am/myfiles/files/%D5%80%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%2020/50%20-%2003.06.20.PDF> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁰⁶ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 14.10.2020:

²⁰⁷ ՀՀ սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ.-ին և ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.-ին, հոդված 176 (3), հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁰⁸ «Դատախազության մասին» ՀՀ օրենք », հոդված 29 (2): Հայց հարուցելու հիմքերն ի սկզբանե հետևյալն էին. «պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել», կամ «պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի»: Սակայն, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո հիմքերը լրացվել են օրենքի հիման վրա դատական հայց հարուցելու մասին հիմքերով:

²⁰⁹ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ պարոն Կարեն Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

²¹⁰ Հարցազրույցներ անկախ հակակոռուպցիոն փորձագետ պարոն Նարեկ Ենոքյանի և փաստաբան պարոն Արտաշես Խալաթյանի հետ, տեղի են ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

իմացությամբ թեկնածուների ընտրությանը:²¹¹ Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ ՀՀ միջազգային պայմանագրերով քրեական գործերով իրավական փոխօգնության հարցերով հաղորդակցությունը (որը ներառում է նաև ակտիվների վերադարձման ասպեկտներ) իրականացվում է. 1) մինչդատական վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ ՀՀ գլխավոր դատախազության միջոցով, 2) դատարանի վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ, այդ թվում՝ դատավճիռներ կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության միջոցով:²¹² Հետևաբար, չկա մեկ մարմին, որը լիազորված է համակարգելու երկրում ակտիվների վերադարձման բոլոր ջանքերը: Սա բացասաբար է անդրադառնում ակտիվների վերադարձման ոլորտում «ամենալայն ձևով համագործակցության և աջակցության» մակարդակի վրա: Այդ իսկ պատճառով, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ջատագովում է ստեղծել նոր մարմին՝ «Ակտիվների վերադարձման գրասենյակ», որը հազեցած կլինի համապատասխան աշխատակազմով և այլ ռեսուրսներով՝ իր մանդատն արդյունավետ իրականացնելու համար:

Երրորդ խնդիրը վերաբերում է ակտիվների վերադարձման օրենսդրության դրույթների կիրառման թափանցիկության ցածր մակարդակին: Թե՛ ՀՀ գլխավոր դատախազության, և թե՛ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված վիճակագրությունը խիստ սահմանափակ է, քանի որ օրենսդրությունը չի սահմանում պարտավորություններ՝ տրամադրելու տեղեկատվություն ինչպես իրավական փոխօգնության հարցումների հիման վրա բռնագրավված, առգրավված և վերադարձված ակտիվների, այնպես էլ՝ անմիջականորեն վերադարձված ակտիվների վերաբերյալ: Չնայած «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» նախատեսում է միջոցառում՝ նվիրված կոռուպցիայի հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության կատարելագործմանը,²¹³ և ի կատարումն նշյալ միջոցառման՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը լրացվել է ՀՀ գլխավոր դատախազի վերջին հրամանով կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով,²¹⁴ սակայն վերջինս դեռևս անբավարար է ՄԱԿ-ի ԿԴԿ ստանդարտներին համապատասխանելու համար:²¹⁵

²¹¹ Հարցազրույց ՀՀ ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ, կոալիցիայի կառավարման խորհրդի նախկին նախագահ, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ, իրավաբան պարոն Արկադի Սահակյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 6-ին:

²¹² ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 1.07.1998 թ.-ին և ուժի մեջ է մտել 12.01.1999թ.-ին, հոդված 475, հասանելի է՝ <<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148700>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²¹³ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը», միջոցառում 35:

²¹⁴ «ՀՀ գլխավոր դատախազի 2019 թ. դեկտեմբերի 27-ի N 77 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի N 60 հրաման, ընդունվել է 02.07.2020թ.-ին, հասանելի է՝ <<https://www.prosecutor.am/myfiles/files/hraman/2060.PDF>> (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²¹⁵ Այս առումով արդարացիորեն պետք է նշել, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ակտիվների վերադարձման հարցը վերջերս է մտել քաղաքական օրակարգ, ինչպես նաև օրենսդրության թերությունները, հատկապես՝ ակտիվների վերադարձի փուլի առնչությամբ, Հայաստանն ակտիվների վերադարձման փորձ գրեթե չունի:

Չորրորդ խնդիրը ակտիվների վերադարձման հետ կապված բարեփոխումների դանդաղ գործընթացն է: Ակտիվների վերադարձման հարցը քաղաքական օրակարգում է հայտնվել Հայաստանում թավշյա հեղափոխությունից հետո դեռևս 2018 թվականին: Այնուամենայնիվ, իրավասու մարմինը միայն վերջերս է ստեղծվել և սկսել գործել: Վերջինս կարող էր թույլ տալ Հայաստանից ակտիվների արտահոսքին հավելյալ երկու տարվա ընթացքում:²¹⁶

Հինգերորդ խնդիրն այն է, որ ՀՀ օրենսդրությունը ՔՀԿ-ներին կամ քաղաքացիական հասարակությանը, ընդհանուր առմամբ, իրավունք չի տալիս դիմել դատարան ակտիվների վերադարձի առնչությամբ գործերով, ի տարբերություն, օրինակ, Ֆրանսիայի: ՔՀԿ-ներին դատարան դիմելու իրավունքի (*locus standi*) տրամադրումը չափազանց կարևոր է, հատկապես՝ այն դեպքերում, երբ պետության կառավարությունը, որտեղից գողացվել են ակտիվները, չի ցանկանում փոխօգնություն խնդրել, քանի որ վերջինս ինքն է ներքաշված այդպիսի ապօրինի գործունեության մեջ: Այս դեպքում տուժած պետության բնակիչները կարող են ակտիվների վերադարձը նախաձեռնելու խնդրանքով դիմել այն պետության ՔՀԿ-ներին, որին փոխանցվել են ակտիվները:²¹⁷ Վերջինս ևս մեկ քայլ է՝ ուղղված ամենալայն ձևով համագործակցության և աջակցության ձևավորմանը:

Վերոնշյալ հոդվածների շրջանակներում քննարկվում են նաև մի շարք այլ խնդիրներ:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 52. Հանցագործություններից ստացված եկամուտների փոխանցումների կանխարգելումը և բացահայտումը

Այս հոդվածը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Հոդված 52, մաս 1

Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, կարող են պահանջվել այն բանի համար, որ ֆինանսական հիմնարկներից, որոնց վրա տարածվում է նրա իրավագործությունը, պահանջի ստուգել հաճախորդների ինքնությունը, խելամիտ միջոցներ ձեռնարկել այն միջոցների սեփականատեր բենեֆիցիարների ինքնությունը պարզելու համար, որոնք դեպոնացված են մեծ ծավալի միջոցներով հաշիվներում, և իրականացնել վերահսկողության առավել խիստ միջոցներ այն հաշիվների նկատմամբ, որոնք փորձում են բացել, կամ որոնք վարվում են նշանակալից պետական լիազորություններով օժտված կամ նախկինում օժտված անձանց, նրանց ընտանիքների անդամների և նրանց հետ սերտորեն կապված գործընկերների կողմից կամ վերոթվարկյալ անձանցից որևէ մեկի անունից: Վերահսկողության այդպիսի առավել խիստ միջոցները խելամիտ չափով պետք է կոչված լինեն բացահայտելու կասկածելի գործառնությունները՝ դրանց վերաբերյալ իրավասու մարմիններին տեղեկատվություն տրամադրելու նպատակների համար, և որևէ օրինական հաճախորդի հետ գործեր վարելու

²¹⁶ Հարցազրույց փաստաբան պարոն Արտաշես Խալաթյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

²¹⁷ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

առումով դրանք չպետք է մեկնաբանվեն իբրև ֆինանսական հիմնարկներին խոչընդոտող կամ արգելող:

Հաճախորդների պատշաճ ուսումնասիրության, իրական սեփականատերերի բացահայտման և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով,²¹⁸ որոնք մանրամասն նկարագրված են կառավարության ստուգաթերթում:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը նախատեսում է բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրի ստեղծում,²¹⁹ որը կապահովի քրեական հետապնդման մարմինների՝ բանկային տեղեկատվության նկատմամբ հասանելիությունը՝ երաշխավորելով տվյալների պաշտպանությունը: 2019թ.-ի համար ակնկալվող արդյունքն է. «Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ», իսկ 2020թ.-ի համար ակնկալվող արդյունքն է. «Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է»: Ցավոք, նույնիսկ 2019թ.-ի արդյունքը դեռ չի իրականացվել:²²⁰

ՀՀ ազգային ժողովը ընդունել է «ՀՀ քրեական դատավարության» օրենսգրքում և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը,²²¹ որոնք նախատեսում են բանկային տեղեկատվության բացահայտում: Մասնավորապես, եթե նախկինում բանկային գաղտնիքը կարող էր բացահայտվել միայն կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակի առկայության դեպքում, ապա նոր փոփոխություններով հետապնդում իրականացնող մարմիններին թույլատրվում է ձեռք բերել ոչ միայն գործով անմիջական մասնակցություն ունեցող անձի, այլ նաև նրանց ընտանիքի անդամների և փոխկապակցված անձանց բանկային տվյալները: Մինչդեռ ժամանակ, փոփոխությունները երաշխիքների և սահմանափակումների հատուկ մեխանիզմներ են նախատեսում: Սակայն, Հանրապետության Նախագահը չի ստորագրել այս օրենքները և համապատասխան իրավական և փաստական հիմքերով դիմել է Սահմանադրական դատարան՝ որոշելու դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը: Դատարանի որոշմամբ՝ փոփոխությունները հակասում են Սահմանադրությանը:²²²

²¹⁸ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 3, 9, 16:

²¹⁹ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր, միջոցառում 37:

²²⁰ «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի 2020 թվականի առաջին կիսամյակում իրականացվելիք գործողությունների կատարման ընթացքի մասին», միջոցառում 37: ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 2.12.2020 թ. «Ուսումնասիրվել է պրակտիկան և մշակվել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ ու քննարկվել շահագրգիռ կողմերի հետ»:

²²¹ «ՀՀ քրեական դատավարության» օրենսգրքում և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 2020 թ. հունվարի 22-ին, տես՝ http://www.parliament.am/draft_history.php?id=10975 (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²²² Սահմանադրական դատարանի N ՄԴՎ-1546 որոշումը, ընդունվել է 2020 թվականի հունիսի 18-ին, տես՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1546.pdf>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

Հոդված 52, Ենթակետ 2 (ա)

Հրապարակել խորհրդատվական ցուցումներ այն կատեգորիայի ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց հաշիվների առնչությամբ ֆինանսական հիմնարկներից, որոնց վրա տարածվում է իր իրավագործությունը, սպասվելու է վերահսկողության առավել խիստ միջոցների կիրառում այն հաշիվների և գործառնությունների տեսակների նկատմամբ, որոնց անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, և հաշիվներ բացելու և վարելու պատշաճ միջոցների, ինչպես նաև այն հաշիվներով հաշվետվություն վարելու նկատմամբ, որոնք անհրաժեշտ է ընդունել նման հաշիվների վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկը (մասնավորապես, ՖԴԿ-ն՝ ֆինանսական վերահսկողության վարչության հետ միասին) կանոնավոր կերպով ուղղորդում և ուսուցում է մասնավոր հատվածին և այլ մարմիններին,²²³ այդ թվում՝ էլեկտրոնային ուսուցման հարթակի միջոցով,²²⁴ ինչը մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում:

Հոդված 52, Ենթակետ 2 (բ)

Համապատասխան դեպքերում, մյուս Մասնակից պետության խնդրանքով կամ իր սեփական նախաձեռնությամբ, ֆինանսական հիմնարկներին, որոնց վրա տարածվում է իր իրավագործությունը, պետք է ծանուցի որոշակի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ինքնության մասին, որոնց վերաբերյալ հաշիվների առնչությամբ այդպիսի հիմնարկներից սպասվելու է վերահսկողության առավել խիստ միջոցների կիրառում՝ ի լրումն այն անձանց, որոնց ինքնությունը ֆինանսական հիմնարկները կարող են պարզել այլ կարգով:

ՖԴԿ-ն իրավասու է տալ համապատասխան հանձնարարականներ, որոնք բխում են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքից,²²⁵ ինչը մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում:

Հոդված 52, մաս 3

Սույն հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի համատեքստում յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի ապահովի ֆինանսական հիմնարկների կողմից պատշաճ ժամկետի ընթացքում պատշաճ հաշվետվություն այն հաշիվների և գործառնությունների մասին, որոնց առնչվում են սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված անձինք, որում նվազագույնը պետք է ընդգրկվի այն տեղեկատվությունը, որը վերաբերում է հաճախորդի անձին, ինչպես նաև, որքանով դա հնարավոր է, իրական սեփականատիրոջը:

Տեղեկությունների պահպանման պահանջները սահմանված են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով,²²⁶ որը մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում:

²²³ «Ֆինանսական դիտարկումների կենտրոնի 2019 թվականի գործունեության մասին» տարեկան զեկույց, Ֆինանսական դիտարկումների կենտրոն, ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2020, հավելված 2, էջ 16:

²²⁴ Տե՛ս էլեկտրոնային ուսուցման հարթակը. www.lms.fmc.am, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²²⁵ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, հոդված 10.

Հոդված 52, մաս 4

Յուրաքանչյուր Մասնակից պետություն կանխարգելման համար պետք է պատշաճ և գործուն միջոցներ իրականացնի իր կարգավորող և հսկող մարմինների, բանկային հիմնարկների օգնությամբ, որոնք ֆիզիկական ներկայություն չունեն, և որոնք կապակցված չեն որևէ կարգավորվող ֆինանսական խմբի հետ: Ավելին. Մասնակից պետությունները կարող են քննարկել իրենց ֆինանսական հիմնարկների նկատմամբ պահանջներ սահմանելու հնարավորությունը՝ հրաժարվելու այդպիսի հիմնարկների հետ թղթակցային բանկային հարաբերությունների մեջ մտնելուց կամ շարունակելու այդպիսի հարաբերությունները, ինչպես նաև զգուշանալու օտարերկրյա ֆինանսական հիմնարկների հետ հարաբերություններ հաստատելուց, որոնք թույլատրում են հաշիվների օգտագործումը այն բանկերի կողմից, որոնք ֆիզիկական ներկայություն չունեն կամ որոնք կապակցված չեն որևէ կարգավորվող ֆինանսական խմբի հետ:

ՀՀ-ում կեղծ («շել») բանկի ստեղծումը կամ գործունեությունը, և վերջիններիս հետ հարաբերությունների հաստատումն արգելված են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով,²²⁷ որը մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 53. Գույքի անմիջական վերադարձմանն ուղղված միջոցները

Այս հոդվածը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

Հոդված 53, Ենթակետ (ա)

Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ մյուս Մասնակից պետությանը թույլատրի իր դատարաններ քաղաքացիական հայցեր ներկայացնել այն գույքի նկատմամբ իրավական տիտղոսը կամ սեփականության իրավունքը պարզելու մասին, որը ձեռք է բերվել իրավախախտումներից որևէ մեկի կատարման հետևանքով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

Օտարերկրյա պետությունների կողմից ՀՀ-ում դատարան դիմելու իրավունքը («*locus standi*») նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝²²⁸ առանց ճանաչման լրացուցիչ պահանջների նախատեսման, ինչը մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում: Այնուամենայնիվ, մենք ծանոթ չենք որևէ տեղեկատվության քաղաքացիական

²²⁶ Տե՛ս նույն տեղում, հոդված 22:

²²⁷ Տե՛ս նույն տեղում, հոդվածներ 15, 19:

²²⁸ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018թ.-ին և ուժի մեջ է մտել 09.04.2018թ.-ին, հասանելի է՝ < <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146495>>, հոդված 432: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենք» ընդունվել է 05.05.1998թ.-ին և ուժի մեջ է մտել 01.01.1999թ.-ին, հասանելի է՝ < <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146447>>, հոդվածներ 4 և 7, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

դատավարության կարգով պետությունների միջև ակտիվների անմիջական վերականգնման դեպքերի վերաբերյալ, քանի որ պատկան մարմինների կողմից նման վիճակագրություն կամ այլ տեղեկատվություն չի հրապարակվում:

Հոդված 53, Ենթակետ (բ)

Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ թույլատրի իր դատարաններին իրավախախտումներ կատարած անձանց, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, պարտավորեցնել փոխհատուցում վճարել կամ վնասները հատուցել մյուս Մասնակից պետությանը, որին վնաս է պատճառվել այդպիսի իրավախախտումներ կատարելու հետևանքով:

ՀՀ օրենսդրությունը թույլատրում է քրեական գործի շրջանակներում քաղաքացիական հայց ներկայացնելը: Այսպիսով, քաղաքացիական հայցվորը քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս: Մինևս ժամանակ, քրեական դատավարությամբ սահմանված կարգով քաղաքացիական հայց չներկայացնելու դեպքում անձն իրավունք ունի քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության ընթացակարգով: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով: Դատավճիռ կայացնելիս դատարանը լուծում է հետևյալ հարցերը՝ արդյո՞ք պատճառված գույքային վնասը ենթակա է հատուցման, արդյո՞ք քաղաքացիական հայցը ենթակա է բավարարման, ու՞մ օգտին և ի՞նչ չափով:²²⁹ Փոխհատուցման վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ նկարագրված են Կառավարության ստուգաթերթում:

Հոդված 53, Ենթակետ (գ)

Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ թույլատրի իր դատարաններին կամ իրավասու մարմիններին բռնագրավման մասին որոշումներ կայացնելիս ճանաչել մյուս Մասնակից պետության պահանջները՝ որպես գույքի օրինական սեփականատիրոջ, որը ձեռք է բերվել իրավախախտումներից որևէ մեկը կատարելու հետևանքով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

ՀՀ օրենսդրությունը (մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը) չի նախատեսում որևէ սահմանափակում իրավախախտումների գոհ դարձած օտարերկրյա պետությունների վերաբերյալ:²³⁰ Հետևաբար, եթե օտարերկրյա պետությունը քրեական գործի շրջանակներում ճանաչվում է որպես տուժող, ապա նա այլ տուժողների հետ օգտվում է հավասար իրավունքներից՝ ներառյալ բռնագանձված ակտիվներից փոխհատուցում ստանալու իրավունքը: Վերջինս ավելի մանրամասն նկարագրված է Կառավարության ստուգաթերթում: Սակայն, չկան հանրորեն հասանելի փաստեր քրեական դատավարության շրջանակներում

²²⁹ Հարցազրույց փաստաբան տիկին Արփինե Եղիկյանի հետ, տեղի է ունեցել 2020թ. -ի նոյեմբերի 4-ին..

²³⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 58:

ակտիվների անմիջական վերականգնման դեպքերի վերաբերյալ, քանի որ պատկան մարմինների կողմից նման վիճակագրություն կամ այլ տեղեկատվություն չի հրապարակվում:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 54. Բռնագանձման գործում միջազգային համագործակցության միջոցով գույքի առգրավման մեխանիզմները

Այս հոդվածը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

Հոդված 54, Ենթակետ 1 (ա)

Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են պահանջվել այն բանի համար, որ իր իրավասու մարմիններին թույլատրի ի կատար ածել բռնագանձման մասին մյուս Մասնակից պետության դատարանների կողմից կայացված որոշումները:

Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրումը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Ինչպես տեսնում ենք, Հայաստանն ընդունել է ուղղակի հարկադիր կատարման մոդելը, ինչը նշանակում է, որ ՀՀ իրավասու մարմինները ճանաչում և կատարում են օտարերկրյա ակտերը բռնագանձման վերաբերյալ:²³¹ Վերջինս մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում՝ սույն և 55-րդ հոդվածի 1-ին մասին վերաբերող պատասխանների շրջանակներում: Միջազգային պրակտիկայում կիրառվում է նաև անուղղակի կատարման մոդել: Օրինակ, որոշ իրավիճակներում կարող է նոր վարույթի հարուցման անհրաժեշտություն առաջանալ փոխօգնության հարցումը հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով: Նման իրավիճակ է ստեղծվում, երբ մասնակից պետությունը խնդրում է կատարել իր բռնագանձման դատական ակտը իրավաբանական անձի նկատմամբ այն մասնակից պետությունում, որտեղ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունն նախատեսված չէ: Նման դեպքերում կպահանջվի նոր վարույթի հարուցում՝ պարզելու, թե փոխօգնության հարցումն ում նկատմամբ է կիրառելի:²³² ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն: Այսպիսով, պարզ չէ, թե ինչպես է իրականացվելու բռնագանձման հարկադիր կատարումը նշված դեպքերում: Ինչ վերաբերվում է սույն նորմի իրավակիրառ պրակտիկային, Կառավարության ստուգաթերթում նշվում է, որ թեև ապօրինի գույքը վերադարձնելու համար իրավական փոխօգնության հարցումների քանակը բավականին փոքր է, սակայն ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված ընթացակարգերը արդյունավետորեն կիրառվում են ՀՀ գլխավոր դատախազության կողմից: Սակայն, փոխադարձ իրավական օգնության հարցումների հիման վրա գույքի բռնագանձման վերաբերյալ հատուկ վիճակագրություն չի տրամադրվում: Միակ մատչելի վիճակագրությունը սահմանափակված է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությամբ, որը հետևյալն է. 2019 թվականին ՀՀ դատախազությունը ստացել է

²³¹ Տե՛ս նույն տեղում, հոդվածներ 499.8 և 499.9:

²³² ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի տեխնիկական ուղեցույց, UNODC, ՄԱԿ, Նյու Յորք, 2009, էջ 207, հասանելի է <https://www.unodc.org/documents/corruption/Technical_Guide_UNCAC.pdf>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

ընդամենը 8 և ուղարկել է միայն 35 դիմում՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրներից կոռուպցիոն հանցագործություններով փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու վերաբերյալ:²³³ 2018 թվականին դրանք, համապատասխանաբար, 55 և 6-ն են, որոնք, բացի ԱՊՀ-ից, ներառում են նաև այլ երկրներ:²³⁴

ՄԱԿ-ի ԿԴԿ-ի քննարկվող հոդվածի «գ» ենթակետով սահմանված քաղաքացիական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրումն իրականացվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Օրենքը նախատեսում է փոխադարձ իրավական օգնության տրամադրում ուղղակի հարկադիր կատարման միջոցով: Օրենքը սահմանում է, որ ՀՀ տարածքում օտարերկրյա դատարանի վճռի կամ գույքի բռնագանձման մասին որոշման կատարմանը վերաբերող խնդրանքների պարագայում դրանց կցվում է այն ներկայացնող պետության դատական ակտի հաստատված պատճենը, իսկ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ նյութեր: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օտարերկրյա դատարանի ակտերը ճանաչվում են փոխադարձության հիման վրա, որը համարվում է գոյություն ունեցող, քանի դեռ չի ապացուցվել հակառակը: ՀՀ գլխավոր դատախազությունը, օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստանալով գույքի բռնագանձման կիրառման խնդրանքը և այդպիսի օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը, հայցվող դատական ակտը ճանաչելու և դրա կատարումը թույլատրելու մասին դիմում է ներկայացնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխով սահմանված կարգով: Կայացված որոշման վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունն անհապաղ հայտնում է օտարերկրյա պետության համապատասխան մարմնին:²³⁵

Հոդված 54, Ենթակետ 1 (բ)

Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ թույլատրի իր իրավասու մարմիններին իրենց իրավագործության սահմաններում այդպիսի օտարերկրյա ծագման գույքի բռնագրավման մասին որոշում կայացնել փողերի լվացման իրավախախտումների կամ այնպիսի այլ իրավախախտումների կապակցությամբ դատական որոշումներ կայացնելիս կամ այլ ընթացակարգեր օգտագործելիս, որոնք թույլատրված են նրա ներքին օրենսդրությամբ:

Հիմնական հանցագործությունների, ներառյալ՝ փողերի լվացման արդյունքում ձեռք բերված օտարերկրյա ծագման գույքի բռնագանձման հնարավորությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսդրությամբ,²³⁶ քանի որ օրենքով որևէ բացառություններ նախատեսված չեն փողերի լվացման հանցագործության արդյունքում ձեռք բերված ակտիվների բռնագանձման համար: Այն մանրամասն ներկայացված է կառավարության ստուգաթերթում: Մինևույն ժամանակ, սույն

²³³ «Հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության 2019 թվականի գործունեության մասին», Երևան, 2020, էջ. 176, մասեր 3-4, հասանելի է՝

<http://www.prosecutor.am/myfiles/files/reports/haxordum-AJ-2019.pdf>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²³⁴ «Հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության 2018 թվականի գործունեության մասին», Երևան, 2019, էջ 105, մասեր 4-5, հասանելի է՝ <http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/report-2018.pdf>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²³⁵ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 28-29:

²³⁶ ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003թ.-ին և ուժի մեջ է մտել 01.08.2003թ.-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147120>, հոդվածներ 103.1 և 190, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

հողվածով նախատեսված՝ փողերի լվացման և նմանատիպ այլ իրավախախտումներով հարուցված գործերի սակավաթիվ լինելը շարունակում է մտահոգիչ մնալ: Օրինակ՝ միակ հասանելի վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2019 թվականին հարուցվել է փողերի լվացման 6, իսկ ապօրինի հարստացման գործերով՝ 0 գործ:²³⁷

Հոդված 54, Ենթակետ 1 (գ)

Քննարկել այնպիսի միջոցներ ձեռնարկելու մասին հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ այդպիսի գույքի բռնագրավման համար հնարավորություն ստեղծվի՝ առանց այնպիսի գործերով քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու, երբ հանցագործը չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ այլ համապատասխան դեպքերում:

Ինչպես նշվեց վերևում, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը երկրորդ ընթերցմամբ ընդունվեց ՀՀ ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին և ուժի մեջ մտավ 2020թ. մայիսի 11-ին, որի համաձայն Գլխավոր դատախազության՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը դարձավ նշված գործերով պետական իրավասու մարմին:

Սա ակտիվների վերադարձման ազգային շրջանակի ամրապնդմանն ուղղված քայլ է, քանի որ, ի թիվս այլ հարցերի, այն թույլ է տալիս իրականացնել գույքի բռնագանձում՝ առանց քրեական հետապնդման: Այս օրենքը կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունները, սահմանում է ուսումնասիրություն սկսելու հիմքերը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ հարուցելու և ուսումնասիրություն իրականացնելու իրավասու մարմինների շրջանակը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ միջազգային համագործակցության կանոնները, ինչպես նաև կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված այլ հարաբերություններ:²³⁸ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի նախաձեռնած ընթացակարգ է, որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:²³⁹

Քանի որ օրենքն ընդունվել և ուժի մեջ է մտել 2020 թվականին, իսկ համապատասխան մարմինը ձևավորվել է միայն 2020 թվականի ավարտին, վերջինս դեռ գտնվում է իր վարույթում առկա քրեական գործերի ուսումնասիրության, ապացուցողական բազայի համալրման ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացման փուլում:²⁴⁰ Այսպիսով, նոր

²³⁷ «Հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության 2019 թվականի գործունեության մասին», Երևան, 2020, էջ. 72, 78:

²³⁸ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 1:

²³⁹ Նույն տեղում, հոդված 3(12):

²⁴⁰ «Քննարկվել է ապօրինի ձեռք բերված գույքի բռնագանձման ինստիտուտի գործարկման աշխատանքների ընթացքը», ՀՀ Կառավարության մամլո հաղորդագրություն, հասանելի է՝

ընդունված օրենքի իրավակիրառման վերաբերյալ միակ հասանելի տեղեկատվությունն այն է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի շրջանակում ուսումնասիրություն է սկսվել 206 անձի պատկանող գույքի վերաբերյալ:²⁴¹

Հաջողված փորձ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքն ընդունել է չբացատրվող (անհիմն) հարստացման վարույթի մոդելը: Այս մոդելը տարբեր ձևերով կիրառում են մի շարք երկրներ, ներառյալ՝ Իտալիան, Իռլանդիան, Ավստրալիան, Բուլղարիան, Սլովենիան և Միացյալ Թագավորությունը: Անհիմն հարստացման վերաբերյալ վարույթում կանխավարկածն այն է, որ ակտիվները ձեռք են բերվել ապօրինի ձևով, քանի դեռ այն անձը, որին պատկանում են ապօրինի ակտիվները, չի ապացուցում դրանց ստացման օրինական աղբյուրը:²⁴² Քննություն սկսելու համար անհրաժեշտ իրավական հիմքերը հետևյալն են՝

- առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով.
- հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք.
- առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է. (ընդունվել է համաներման մասին օրենք, անցել են վաղեմության ժամկետները, անձը մահացել է, անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու՝ օրենքով նախատեսված տարիքին).
- առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկով.
 - օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի

<<https://www.primeminister.am/en/press-release/item/2020/11/14/Nikol-Pashinyan-meeting/>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁴¹ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի շրջանակում ուսումնասիրություն է սկսվել 206 անձի պատկանող գույքի վերաբերյալ», ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայք, տես <<https://www.prosecutor.am/en/mn/8028/>>, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁴² «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենսդրական ակտերի հիմնավորում, հասանելի է՝ <http://www.parliament.am/draft_docs7/K-438-438-14_Himnavorum.pdf>, պարբերություններ 56, 60, (ղիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

ծագում ունեցող գույք:²⁴³ Ընտրված հոդվածների ցանկը ներառում է այն հանցագործությունները, որոնց հիմնական շարժառիթը հանցավոր աղբյուրներով գույքի ստացումն է կամ որոնց կատարման համար էական է ֆինանսավորումը կամ որոշակի գույքի օգտագործումը: Ցանկում ընդգրկված են հիմնականում կոռուպցիոն հանցագործությունները, ինչպես նաև թրաֆիքինգի, ահաբեկչության և թմրանյութերի հետ կապված հանցագործությունները:²⁴⁴

Ուսումնասիրության նախնական արդյունքներով Գլխավոր դատախազության իրավասու վարչությունը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ամփոփագիր, որով որոշում է՝ դադարեցնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կամ ձեռնարկել միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ:²⁴⁵

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը հետադարձ ուժ ունի: Այսպիսով, դա վերաբերում է քրեական ճանապարհով ձեռք բերված եկամուտներին, որոնք ձեռք են բերվել նաև մինչև օրենքի ուժի մեջ մտնելը, բայց, ոչ շուտ քան 1991 թվականի սեպտեմբերի 21-ը (ՀՀ Անկախության օր):²⁴⁶ Վերջինս բնութագրվել է որպես ակտիվների վերադարձման առաջադեմ և արդյունավետ նորմ:²⁴⁷ Գույքի բռնագանձման քաղաքացիական վարույթը կարող է իրականացվել քրեական դատավարությանը զուգահեռ: Հիմնական պայմանն այն է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում արված հայտարարությունները և դատավարության ընթացքում տրված ցուցմունքները, քրեական դատավարության կանոններին համապատասխան, չեն կարող օգտագործվել դրանք տված անձի կամ վերջինիս մերձավոր ազգականների դեմ քրեական գործի շրջանակներում:²⁴⁸ ՀՀ գլխավոր դատախազության լիազորությունների շրջանակը նպատակ ունի բացահայտելու բռնագանձման պահանջով հայց հարուցելու և ապացույցներ հավաքելու հիմքերի առկայությունը: Օրենքը նախատեսում է ապացույցների, այդ թվում՝ ֆինանսական գաղտնիք կազմող տվյալների ձեռք բերման (*ex parte*) լիազորություն՝ առանց այդ մասին գույքի սեփականատիրոջը ծանուցելու:²⁴⁹

Հոդված 54, Ենթակետ 2 (ա)

Ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ իր իրավասու մարմիններին թույլատրի ստեղծել կամ առգրավել գույքը՝ ստեղծելու կամ արգելանք դնելու մասին որոշման համաձայն, որը կայացվել է հայցող Մասնակից պետության դատարանի կամ իրավասու մարմնի կողմից, և որում շարադրվում են այնպիսի խելամիտ հիմքեր, որոնք հայցվող Մասնակից պետությանը հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այդպիսի միջոցներ ձեռնարկելու համար կան բավարար պատճառներ, և որ այդ գույքի նկատմամբ վերջնական

²⁴³ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

²⁴⁴ Նույն տեղում, հոդված 3(4):

²⁴⁵ Նույն տեղում, հոդված 13:

²⁴⁶ Նույն տեղում, հոդված 7:

²⁴⁷ Հարցազրույց ՀՀ ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ, կոալիցիայի կառավարման խորհրդի նախկին նախագահ, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ, փաստաբան պարոն Արկադի Մահալյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 6-ին:

²⁴⁸ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 10:

²⁴⁹ Նույն տեղում, հոդված 9:

արդյունքում կայացվելու է բռնագրավման մասին որոշում սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի նպատակների համար:

Այս ենթակետը վերաբերում է մասնակից այլ պետության կողմից ներկայացված՝ գույքի վրա կալանք դնելու /գույքի նկատմամբ ապահովման միջոցներ կիրառելու խնդրանքի ներպետական կատարմանը: Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրման հարցերով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է տարբեր կարգավորումներ՝ կախված միջազգային պայմանագրերի առկայությունից կամ բացակայությունից: Այսպիսով, միջազգային պայմանագրերի առկայության դեպքում փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու, ներառյալ՝ գույքի վրա կալանք դնելու ընթացակարգային գործողություններն իրականացվում են այդ պայմանագրերին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:²⁵⁰ Սա մանրամասն նկարագրված է կառավարության ստուգաթերթում: Քրեական գործերով փոխօգնության միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում, վերջինս կարող է ցույց տրվել բացառիկ դեպքերում՝ փոխօգնություն ցույց տալու շուրջ դիվանագիտական ուղիներով ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որը պետք է նախապես համաձայնեցվի ՀՀ գլխավոր դատախազության հետ՝ մինչդատական վարությամբ գտնվող գործերի դեպքում և ՀՀ արդարադատության նախարարության հետ՝ դատական վարությամբ, ներառյալ՝ դատավճիռն ի կատար ածելու փուլում գտնվող գործերի դեպքում:²⁵¹ ՄԱԿ ԿԴԿ-ն, այլ երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերի բացակայության պարագայում, դիտարկվում է որպես անհրաժեշտ և բավարար պայմանագրային հիմք՝ փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու համար,²⁵² ինչը ենթադրում է, որ գրեթե բոլոր դեպքերում կգործեն պայմանագրերի առկայության դեպքում կիրառվելիք իրավակարգավորումները: Գույքի վրա կալանք դնելը նախատեսվում է ՀՀ քրեական օրենսդրությամբ և կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար:²⁵³ Հաշվետվողականության պահանջ նախատեսող ՀՀ կարգավորումները չեն նախատեսում որևէ պահանջ՝ իրավական փոխօգնության հարցումների հիման վրա սառեցված և կալանքի տակ վերցված ակտիվների վերաբերյալ:²⁵⁴ Կառավարության ստուգաթերթում նշված է. «*Այս իրավական կարգավորումները կիրառվել են իրավական փոխօգնության մեկ խնդրանքի շրջանակներում: Մասնավորապես, հայցող «Ա» պետության իրավասու մարմնի որոշման համաձայն ստացվել է գույքի վրա կալանք դնելու մասին միայն 1 հարցում*»: Այս կամ այլ դեպքերի վերաբերյալ հանրության համար հասանելի այլ տեղեկություններ առկա չեն:

Ինչ վերաբերում է քաղաքացիական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրմանը, ապա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ գույքի նկատմամբ ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման ՀՀ տարածքում կատարման խնդրանքին պետք է կցվի նաև դատական ակտի վավերացված պատճենը, իսկ

²⁵⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, գլուխ 54:

²⁵¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, գլուխ 54¹:

²⁵² ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, հոդված 55(6):

²⁵³ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 232:

²⁵⁴ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

օրենքով նախատեսված դեպքերում նաև միջազգային պայմանագրեր և այլ նյութեր: Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ կիրառված ապահովման միջոցների մասին օտարերկրյա դատարանի ակտերը ճանաչվում են փոխադարձության հիման վրա, որը համարվում է գոյություն ունեցող, քանի դեռ չի ապացուցվել հակառակը: ՀՀ գլխավոր դատախազությունը, օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստանալով գույքի նկատմամբ ապահովման միջոցների կիրառման խնդրանքը և այդպիսի օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը, հայցվող դատական ակտը ճանաչելու և դրա կատարումը թույլատրելու մասին դիմում է ներկայացնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխով սահմանված կարգով: Կայացված որոշման վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունն անհապաղ հայտնում է օտարերկրյա պետության համապատասխան մարմնին:²⁵⁵ Նոր ընդունված օրենքի կիրառման վերաբերյալ միակ հասանելի տեղեկատվությունն այն է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի շրջանակում ուսումնասիրությունն է սկսվել 206 անձի պատկանող գույքի վերաբերյալ:²⁵⁶

Հոդված 54, Ենթակետ 2 (բ)

ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ իր իրավասու մարմիններին թույլատրի սառեցնել կամ գույքի վրա արգելանք դնել այն խնդրանքով, որում շարադրվում են այնպիսի խելամիտ հիմքեր, որոնք հայցվող Մասնակից պետությանը հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այդպիսի միջոցներ ձեռնարկելու համար կան բավարար պատճառներ, և որ այդ գույքի նկատմամբ վերջնական արդյունքում կայացվելու է բռնագրավման մասին որոշում սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի նպատակների համար: Այս ենթակետը վերաբերում է այլ պետության իրավասու մարմնի խնդրանքով գույքի սառեցման կամ դրա նկատմամբ ապահովման միջոցների կիրառման իրավագործությանը, երբ առկա է ողջամիտ հիմնավորում առ այն, որ այդպիսի գործողություններ կատարելու համար առկա են բավարար հիմքեր, և գույքն, ի վերջո, ենթակա է լինելու բռնագանձման: Այս կետի տարբերությունը նախորդից այն է, որ տվյալ դեպքում բացակայում է մասնակից պետության որոշումը՝ գույքի նկատմամբ ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ:

ՀՀ կառավարության ստուգաթերթում նշվում է, որ ՀՀ-ն միայն մասնակի է համապատասխանում այս դրույթին: ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրությունը, ներառյալ նաև՝ փոխօգնության պայմանագրերը, հատուկ չեն նախատեսում գողացված ակտիվների նկատմամբ ապահովման միջոցի կիրառումն՝ առանց այլ պետության որոշման առկայության: Չնայած առանց հատուկ որոշման առկայության՝ օտարերկրյա գույքի նկատմամբ ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ առկա չէ հատուկ օրենսդրական արգելք, կարելի է ենթադրել, որ վերջինս գործնականում չի կիրառվում, քանի որ այդ մասին հասանելի տեղեկատվությունն առկա չէ ոչ ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հրապարակված հաղորդումներում, ոչ էլ՝ ՀՀ կառավարության ստուգաթերթում:²⁵⁷

²⁵⁵ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 29:

²⁵⁶ Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայքը:

²⁵⁷ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

Հոդված 54, Ենթակետ 2 (գ)

Քննարկել լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու մասին հարցը, որպեսզի իր իրավասու մարմիններին թույլատրի պահպանել գույքը բռնագրավման նպատակների համար, օրինակ՝ նման գույք ձեռք բերելու կապակցությամբ արգելանք դնելու կամ քրեական մեղադրանք առաջադրելու մասին օտարերկրյա որոշման հիման վրա:

Այս ենթակետը վերաբերում է այնպիսի ապահովման միջոցներին, ինչպիսիք են արգելանքները, ձեռնարկությունների կամ հաշիվների մշտադիտարկումը, պահատվությունը (սեկվեստր), սահմանափակումներ կիրառելու որոշումները, որոնք առկա են վաղ փուլում, օրինակ՝ այդ ակտիվների հետ կապված արգելանքների կամ փոփոխությունների մասին տեղեկատվություն ստանալուն պես: Չնայած նման միջոցների կիրառումը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի համաձայն պոզիտիվ պարտավորություն չէ, այնուամենայնիվ, մասնակից պետությունները պետք է քննարկեն լրացուցիչ ժամանակավոր միջոցառումների ընդունումը՝ ուղղված ակտիվների պահպանմանը:

ՀՀ քրեական օրենսդրությունը գույքի վրա կալանք դնելուց բացի որևէ այլ ժամանակավոր միջոց չի նախատեսում:²⁵⁸ Ինչ վերաբերում է քաղաքացիական օրենսդրությանը, ապա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ նոր օրենքում նշվում է, որ դատարանը կողմի միջնորդությամբ և ղեկավարվելով օրենքով նախատեսված առանձնահատկություններով, կիրառում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի ապահովման միջոցներից մեկը:²⁵⁹ Դրանք, բացի արգելանքից բացի, ներառում են նաև որոշակի գործողություններ կատարելն արգելելը և որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելը:²⁶⁰ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետության կողմից գույքի կառավարման առանձնահատկությունները՝ հաշվի առնելով, որ բացառիկ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել, որպես անվտանգության միջոց, գույքը հանձնել պետության տիրապետությանը: Բացառիկ դեպքերում, գործի քննության առանձնահատկություններից ելնելով՝ դատարանը, կիրառելով հայցի ապահովում, որոշում է կայացնում գույքը հանձնել պետության տիրապետությանը: Այդ դեպքերում, տվյալ գույքի կառավարումը և պահպանումն իրականացնում է պետությունը: Գույքը՝ որպես հայցի ապահովում, կարող է հանձնվել պետությանը, եթե՝

- 1) առկա է հավանականություն, որ հակառակ դեպքում գույքի արժեքը կարող է էականորեն նվազել.
- 2) առկա է հավանականություն, որ գույքը կարող է օգտագործվել հանցագործության կատարման համար.

²⁵⁸ Բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածից, որն օգտագործում է «գույքի կալանք» ձևակերպումը, սույն օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված է նաև «առգրավման» եզրույթը, որը գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ և փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտության դեպքում կիրառվող քննչական գործողություն է և կիրառվում է, եթե ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում:

²⁵⁹ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 25:

²⁶⁰ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 129:

3) գույքի կամ դրա օգտագործման առանձնահատկությամբ պայմանավորված՝ առկա է հավանականություն, որ այն պատասխանողի մոտ թողնելը կարող է անհնարին դարձնել կամ էականորեն դժվարացնել գույքի հետագա բռնագանձումը:

Գույքն իրավասու մարմնի կողմից կարող է հանձնվել գույքի պահպանության համար անհրաժեշտ սարքավորումներ, տարածքներ և հատուկ որակավորում ունեցող աշխատակազմով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական (պետական մասնակցությամբ) կազմակերպություններին: Եթե գույքի արժեքի պահպանման համար անհրաժեշտ է ապահովել դրա մասնագիտացված ընթացիկ կառավարումը, ապա պետությունը կարող է տվյալ գույքը հանձնել հավատարմագրային կառավարման: Գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է ՀՀ կառավարությունը: Գույքի պահպանման և կառավարման հետ կապված անհրաժեշտ ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից:²⁶¹ Ակտիվները հավատարմագրային կառավարման հանձնելու հնարավորության ամրագրումը շատ արդյունավետ մեխանիզմ է, հատկապես՝ խոշոր չափի ակտիվների կառավարման դեպքում, ինչպիսիք են գործարանները:²⁶²

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 55. Բռնագանձման նպատակով միջազգային համագործակցությունը

Այս հոդվածը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

Հոդված 55, մաս 2

Մյուս Մասնակից պետության կողմից ուղարկված խնդրանքն ստանալուց հետո, որի իրավագործության տակ է գտնվում որևէ իրավախախտում, որն այդպիսին է ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, հայցվող Մասնակից պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի սույն Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանցագործություններից ստացված եկամուտները, գույքը, սարքավորումները կամ հանցագործությունների կատարման մյուս միջոցները բացահայտելու, հետամուտ լինելու, սառեցնելու կամ արգելանքի տակ դնելու համար՝ հետագա բռնագանձման նպատակով, որի վերաբերյալ որոշումը կայացվում է կամ հայցող Մասնակից պետության կողմից, կամ, սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, հայցվող Մասնակից պետության կողմից:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ քրեական օրենսդրությունը նախատեսում է դատավարական գործողությունների վերաբերյալ իրավական փոխօգնության տրամադրում, այդ թվում՝ ակտիվների նույնականացման, հայտնաբերման, սառեցման ու այլ ապահովման միջոցների կիրառման և բռնագանձման հարցերով: Գույքի վրա կալանք դնելու կարգավորումների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք անդրադառնալ վերը նշված՝ 54-րդ հոդվածի 2-րդ մասի պատասխանին:

²⁶¹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 25:

²⁶² Հարցազրույց փաստաբան պարոն Կարեն Քոչարյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

Ինչ վերաբերում է քաղաքացիական օրենսդրությանը, ապա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ նոր օրենքը սահմանում է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը, օտարերկրյա պետության համապատասխան մարմնից ստանալով գույքի հայտնաբերման և տեղեկատվության տրամադրման խնդրանք, կարող է ձեռնարկել օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներով նախատեսված միջոցները հայցվող տեղեկատվությունը ստանալու և տրամադրելու նպատակով:²⁶³

Հոդված 55, մաս 3

Ի լրումն 46-րդ հոդվածի 15-րդ կետում նշված տեղեկատվության՝ սույն հոդվածի հիման վրա ուղարկված խնդրանքները պետք է պարունակեն.

ա) սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նախատեսված խնդրանքի առումով՝ բռնագրավման ենթակա գույքի նկարագրությունը, այդ թվում, որքանով հնարավոր է, գտնվելու վայրի մասին տվյալները և, եթե դա տեղին է, գույքի գնահատման արժեքը՝ հայտարարություն այն փաստերի շարադրումով, որոնց վրա հղում է կատարում հայցող Մասնակից պետությունը, և որոնք բավարար են նրա համար, որ հայցվող Մասնակից պետությունը կարողանա միջոցներ ձեռնարկել իր ներքին օրենսդրության համաձայն որոշում կայացնելու համար.

բ) սույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նախատեսված խնդրանքի առումով՝ հայցող Մասնակից պետության կողմից տրված բռնագրավման մասին որոշման՝ իրավաբանորեն թույլատրելի պատճենը, որի վրա հիմնվում է խնդրանքը, հայտարարություն՝ փաստերի շարադրումով, և տեղեկատվություն հայցվող որոշման կատարման ծավալի վերաբերյալ, որում նշվում են այն միջոցները, որոնք հայցող Մասնակից պետության կողմից ձեռնարկվել են բարեխիղճ երրորդ կողմերին պատշաճ ծանուցագրեր ուղարկելու և պատշաճ իրավական ընթացակարգեր ապահովելու համար, և հայտարարություն այն մասին, որ բռնագրավման մասին որոշումը վերջնական է համարվում.

գ) սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված խնդրանքի առումով՝ հայտարարություն՝ այն փաստերի շարադրումով, որոնց վրա հղում է կատարում հայցող Մասնակից պետությունը, և հայցվող միջոցների նկարագրությունը, ինչպես նաև, եթե դա կիրառելի է, այն որոշման իրավաբանորեն թույլատրելի պատճենը, որի վրա հիմնվում է խնդրանքը:

Խնդրանքին ներկայացված պահանջները կարգավորվում են պայմանագրերով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ: Քրեական գործերով դատավարական ընթացակարգերը կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով,²⁶⁴ որոնք մանրամասն նկարագրված են Կառավարության ստուգաթերթում:

Ինչ վերաբերում է ակտիվների՝ քաղաքացիական կարգով բռնագանձմանը, ապա այն կարգավորվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ նոր ընդունված օրենքով: Փաստաթղթում ամրագրված է, որ եթե այլ բան նախատեսված չէ հայցող պետության և ՀՀ միջև գործող միջազգային պայմանագրով, ապա խնդրանքը պետք է պարունակի՝

- 1) դիմող մարմնի անվանումը.
- 2) խնդրանքի վերնագիրը.
- 3) խնդրանքի առարկայի հետ առնչվող անձանց և գույքի վերաբերյալ բավարար

²⁶³ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 29:

²⁶⁴ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, գլուխներ 54 և 54¹:

տեղեկություններ.

- 4) խնդրանքի էությունը և այն իրավական հիմքերը, որոնք հիմնավորում են դիմող մարմնի իրավասությունը՝ ուղարկելու տվյալ խնդրանքը:

Եթե խնդրանքը վերաբերում է ՀՀ տարածքում օտարերկրյա դատարանի վճռի, հրամանի կամ ապահովման միջոցի մասին որոշման կատարմանը, ապա խնդրանքին կցվում է այն ներկայացնող պետության դատական ակտի հաստատված պատճենը, իսկ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ նյութեր:²⁶⁵

Հոդված 55, մաս 5

Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին տրամադրի սույն հոդվածի դրույթների իրականացումն ապահովող իր օրենքների և կանոնների տեքստերը, ինչպես նաև այդ օրենքների և կանոնների կամ դրանց նկարագրության հետագա բոլոր փոփոխությունների տեքստերը:

Կառավարության ստուգաթերթում նշված է, որ ՀՀ-ն մասամբ է համապատասխանում այս կետին: Սակայն, այն փաստաթղթերի փոխանցման ամսաթվին հղում չի կատարում: Ավելին, վերջինս խոստանում է օրենքներ ուղարկել քարտուղարություն՝ ի պատասխան խնդրանքին՝ դեռևս չփոխանցված ցանկացած փաստաթղթի նկարագրության տրամադրման վերաբերյալ: Հետևաբար, սույն կետին ՀՀ՝ անգամ մասամբ համապատասխանությունը պարզ չէ:

Հոդված 55, մաս 6

Եթե Մասնակից պետությունը ցանկանա սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում հիշատակված միջոցների ձեռնարկումը պայմանավորել համապատասխան պայմանագրի առկայությամբ, ապա այդ Մասնակից պետությունը պետք է դիտարկի սույն Կոնվենցիան որպես անհրաժեշտ և բավարար պայմանագրային հիմք:

Կառավարության ստուգաթերթում նշված է, որ ՀՀ-ն մասամբ է համապատասխանում այս կետին: Մյուս կողմից, նշվում է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը կարող է ղեկավարվել Կոնվենցիայով՝ իրավական փոխօգնության հարցումները բավարարելու իրավական հիմք ունենալու նպատակով: Այդ պատճառով, անհասկանալի է, թե ինչո՞ւ է համապատասխանությունը համարվում միայն «մասամբ»:

Հոդված 55, մաս 7

Սույն հոդվածի համաձայն՝ համագործակցությունը կարող է նաև մերժվել կամ ապահովող միջոցները կարող են հանվել, եթե հայցվող Մասնակից պետությունը ժամանակին բավարար ապացույցներ չստանա, կամ եթե գույքը նվազագույն արժեք ունենա:

Սույն հոդվածի Մեկնաբանող ծանոթագրությամբ (Interpretative Note) նախատեսվում է, որ հայցվող Մասնակից պետությունը խորհրդակցում է հայցող Մասնակից պետության հետ՝ պարզելու, արդյոք գույքն ունի դրա հետապնդման համար անհրաժեշտ նվազագույն (*de minimis*)

²⁶⁵ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 28:

արժեք, ինչպես նաև լրացուցիչ ապացույցների տրամադրման համար անհրաժեշտ ժամկետների պահպանման եղանակների և միջոցների վերաբերյալ:²⁶⁶

ՀՀ քրեական օրենսդրությունը նախատեսում է միջազգային պայմանագրերից բխող հարցումների կատարումը մերժելու ընդհանուր հիմքեր, որոնք նկարագրված են կառավարության ստուգաթերթում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հղում է կատարում այն մերժման հիմքերին, որոնք ամրագրված են առանձին պայմանագրերում:²⁶⁷ Հետևաբար, մերժման նշված հիմքերը կարող են անուղղակիորեն կիրառվել:

Ինչ վերաբերում է քաղաքացիական օրենսդրությանը, ապա «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ նոր օրենքը նախատեսում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը (մոտավորապես 100,000 ԱՄՆ դոլար):²⁶⁸ Փորձագետների գնահատմամբ, այս գումարը կարող է հանգեցնել այս շեմին չհասած, բայց այնուամենայնիվ բարձր արժեք ունեցող գույքի բռնագանձման անհնարինության:²⁶⁹ Բացի այդ, օրենքի համաձայն, եթե ՀՀ միջազգային պայմանագրերին կամ սույն օրենքին համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված խնդրանքի կատարումը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին կամ այլ պատճառներով անհնար է, ապա օտարերկրյա պետության համապատասխան մարմինը ծանուցվում է խնդրանքի կատարման անհնարինության և դրա պատճառների մասին:²⁷⁰

Հոդված 55, մաս 8

Նախքան սույն հոդվածին համապատասխան ձեռնարկված որևէ ապահովող միջոցը հանելը հայցվող Մասնակից պետությունը, երբ դա հնարավոր է, հայցող Մասնակից պետությանը հնարավորություն է ընձեռում շարադրելու իր պատճառաբանությունները հոգուտ այդպիսի միջոցի իրականացման շարունակման:

Կառավարության ստուգաթերթում նշված է, որ ՀՀ-ն մասամբ է համապատասխանում այս կետին: Այս կապակցությամբ նշվում է, որ Հայաստանը նախատեսում է կատարելագործել համապատասխան օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան: Այնուամենայնիվ, մենք բարեփոխումների վերաբերյալ տեղեկություններ չունենք: Ավելին, նույնիսկ նոր ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը նշված հարաբերությունների վերաբերյալ դրույթներ չի նախատեսում:

²⁶⁶ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջինից յոթերորդ նստաշրջանների աշխատանքների վերաբերյալ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մշակման ժամանակավոր հանձնաժողովի զեկույց, A/58/422/Add.1, պարբերություն 65, հասանելի է <https://www.unodc.org/pdf/crime/convention_corruption/session_7/422add1.pdf>, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁶⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 477:

²⁶⁸ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 24(1):

²⁶⁹ Հարցազրույց անկախ հակակոռուպցիոն փորձագետ պարոն Նարեկ Ենոքյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

²⁷⁰ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 29(5):

Հոդված 55, մաս 9

Սույն հոդվածի դրույթները չեն մեկնաբանվում այնպես, որ վնաս պատճառվի բարեխիղճ երրորդ կողմերի իրավունքներին:

ՀՀ քրեական օրենսգիրք²⁷¹ անդրադառնում է բարեխիղճ (*bona fide*) երրորդ անձանց իրավունքներին, որոնք նկարագրված են կառավարության ստուգաթերթում: Բարեխիղճ երրորդ անձանց հայեցակարգին է անդրադառնում նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը: Ըստ այդմ՝ անձին պատկանող գույքը, որը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույք, և որը ձեռք է բերվել այլ անձի կողմից, ենթակա չէ բռնագանձման բարեխիղճ ձեռք բերողից: Անձը չի հանդիսանում բարեխիղճ ձեռք բերող, եթե իրավասու մարմինն ապացուցում է, որ այդ անձը գույքը ձեռք բերելու պահին գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Անկախ նշված կարգավորումներից՝ անձը հանդիսանում է բարեխիղճ ձեռք բերող այն դեպքում, երբ ապացուցում է, որ գույքն իրեն փոխանցվել է որպես կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում կամ ալիմենտ: Անձին պատկանող գույքի նկատմամբ նրա հետ չփոխկապակցված անձի սեփականության իրավունքից տարբերվող գույքային իրավունքները պահպանվում են, եթե իրավասու մարմինը չի ապացուցում, որ այդ իրավունքները ծագելու պահին անձը գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Եթե գույքը ծանրաբեռնված է անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձի կամ նրա մերձավոր ազգականի գույքային իրավունքներով, կամ եթե տվյալ գույքային իրավունքների իրական շահառու է հանդիսանում այն անձը, որին պատկանում է գույքը, ապա այդ իրավունքները դադարում են գույքի բռնագանձման վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:²⁷²

Թերություններ

Հարկ է նշել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը կարգավորող օրենքի առաջին նախագիծը նախատեսում էր ապացուցման բեռի բաշխման ավելի թեթև մոդել՝ «*հավանականությունների հավասարակշռություն*» երրորդ անձանց դեպքում, բացառությամբ՝ փոխկապակցված անձանց, ինչպիսիք են ընտանիքի անդամները, ովքեր ձեռք են բերել ակտիվներ: Այս հարցի շուրջ ընդդիմության կողմից ճնշման ենթարկվելու արդյունքում վերջինս փոխվել է «*ողջամիտ կասկածից վեր*» չափանիշով, որը կիրառվում է անմեղության կանխավարկածի ժամանակ: Դա կարող է հանգեցնել ակտիվների վերականգնման դժվարությունների, քանի որ ապօրինի գույքի սեփականատերերը կարող են կեղծ գործարքներ կնքել՝ գույքի սեփականությունը փոխանցելով օրենքի իմաստով փոխկապակցված անձ չհանդիսացող իրենց ընկերներին կամ այլ անձանց, որոնք կարող են *դե յուրե* «բարեխիղճ» կարգավիճակ ունենալ և օգտվել համապատասխան երաշխիքների առավելություններից, մինչդեռ իրականում բարեխիղճ ձեռք բերողներ չլինեն: Ավելին, նշված իրավիճակներում անհամաչափ բեռ կարող է դրվել պետության վրա, քանի որ փոխկապակցված անձանց

²⁷¹ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 103.1:

²⁷² «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 23:

ակտիվների բռնագանձման պարագայում բարեխիղճ ձեռք բերողներին պետք է վճարվի փոխհատուցում:²⁷³

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 56. Հատուկ համագործակցություն

Չխախտելով իր ներքին օրենսդրությունը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք նրան հնարավորություն կտան, առանց վնասելու իր սեփական քննությունը, քրեական հետապնդումը և դատաքննությունը, առանց նախնական խնդրանքի՝ մյուս Մասնակից պետությանը տեղեկատվություն ուղարկել այն իրավախախտումներից ստացված եկամուտների մասին, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, երբ նա գտնում է, որ այդպիսի տեղեկատվության բացահայտումը կարող է այն ստացող Մասնակից պետությանն օժանդակել քննություն, քրեական հետապնդում կամ դատաքննություն հարուցելու կամ վարելու գործում կամ կարող է հանգեցնել, սույն Կոնվենցիային համապատասխան, այդ Մասնակից պետության կողմից խնդրանքի ուղարկմանը:

Այս հոդվածը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

Մասնավորապես, համագործակցությունը կարող է ներառել տեղեկություններ կասկածելի գործարքների, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց գործունեության կամ այն դեպքերի վերաբերյալ, երբ պաշտոնատար անձն իրավասու է ներկայացնել պետության ֆինանսական շահերը մեկ այլ Մասնակից պետությունում՝ լիազորագրի, լիազորված անձի ստորագրության կամ որևէ այլ լիազորության հիման վրա, ինչպես նաև իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքների/վճարումների վերաբերյալ: Այն կարող է ներառել նաև այն Մասնակից պետության անդամակցումը տեղեկատվության փոխանակման միջազգային ֆորումին (ինչպիսիք են «Էզմոնտ» խումբը և այլն): Կառավարության ստուգաթերթում նշվում է նաև, որ ՀՀ-ն մասամբ է համապատասխանում այս կետին: Ներկայացված միակ տեղեկատվությունն այն է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը պետության իրավասու մարմիններին է տրամադրում «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի 21-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվություն: ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնը «Էզմոնտ» խմբի անդամ է: Ստուգաթերթում նաև նշվում է, որ Հայաստանը նախատեսում է կատարելագործել համապատասխան օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան: Սակայն, որևէ բարեփոխման վերաբերյալ հրապարակայնորեն հասանելի տեղեկատվություն չի գտնվել:

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 57. Ակտիվները վերադարձնելը և դրանք տնօրինելը

Սույն Կոնվենցիայի 31-րդ կամ 55-րդ հոդվածի հիման վրա Մասնակից պետության կողմից բռնագրավված գույքը պետք է տնօրինվի, ներառյալ այդպիսի գույքը, սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, նախկին օրինական սեփականատիրոջը վերադարձնելու առումով, այդ Մասնակից պետության կողմից՝ սույն Կոնվենցիայի դրույթներին և իր ներքին օրենսդրությանը

²⁷³ Հարցազրույց փաստաբան պարոն Արտաշես Խալաթյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

համապատասխան: Եվ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ թույլատրի իր իրավասու մարմիններին վերադարձնել բռնազրավիված գույքը, երբ նրանք գործում են մյուս Մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիային համապատասխան ուղարկված խնդրանքով՝ հաշվի առնելով բարեխիղճ երրորդ Կողմերի իրավունքները:

Այս հոդվածը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ ցածր:

Կառավարության ստուգաթերթում նշվում է, որ ՀՀ-ն մասամբ է համապատասխանում այս կետին և հղում է կատարվում Քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածին, որն ավելի մանրամասն քննարկվում է կոնվենցիայի 55-րդ հոդվածի 9-րդ կետի պատասխաններում: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված փոխադարձ իրավական օգնության մասին միջազգային պայմանագրերը չեն կարգավորում ակտիվների վերադարձի և տնօրինման/բաշխման փուլը: «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը միայն սահմանում է, որ բռնագանձված գույքը հայցող պետությանը վերադարձնելու և գույքի բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ շահագրգիռ պետությունների հետ կնքված առանձին համաձայնագրերով կամ իրավասու մարմնի կողմից դիվանագիտական ճանապարհով ձեռք բերված փոխադարձ պայմանավորվածությամբ:²⁷⁴

Թերություններ

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում դրույթներ՝ Հայաստանում վերադարձված ակտիվների՝ հօգուտ հասարակության օգտագործման և վերաբաշխման վերաբերյալ:²⁷⁵ Չնայած կառավարության ստուգաթերթում նշված է, որ Հայաստանը նախատեսում է կատարելագործել համապատասխան օրենսդրությունն ու իրավակիրառ պրակտիկան, սակայն տեսանկյունի ջանքեր չեն գործադրվում: «Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակներում միջազգային համագործակցության ամրապնդումը» նախատեսված է ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում: 2020թ.-ի ակնկալվող արդյունքն է. «Իրականացվել է կոռուպցիայի գործերով միջազգային համագործակցության մեխանիզմների և դրանցում առկա խոչընդոտների վերաբերյալ ուսումնասիրություն»: 2022թ.-ի ակնկալվող արդյունքն է. «ՀՀ վարչապետի աշխատակազմին ներկայացվել են կոռուպցիայի գործերով միջազգային համագործակցության խոչընդոտները հաղթահարելու վերաբերյալ առաջարկներ»:²⁷⁶ Ի կատարումն նշված ակտի՝ ՀՀ արդարադատության նախարարությունը մշակել և շրջանառել է «Քրեական գործերով

²⁷⁴ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, հոդված 30:

²⁷⁵ Հարցազրույց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ տիկին Մարիամ Զադոյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 2-ին:

²⁷⁶ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր», միջոցառում 38:

իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է համապարփակ կարգավորման ենթարկել պետությունների միջև քրեական գործերով միջազգային համագործակցությունը: Այս համագործակցության շրջանակներում սահմանվել է նորմ, որի համաձայն՝ ՀՀ-ի կողմից վավերացրած միջազգային պայմանագրով սահմանված կարգով իրավական օգնություն ցույց տալու հարցում ստացած ՀՀ կենտրոնական մարմինը հարցումն ուղարկած օտարերկրյա իրավասու մարմնի միջնորդությամբ, առանց խոչընդոտելու կամ վնասելու ՀՀ իրավասու մարմնի վարչություն գտնվող քրեական գործի քննությանը, նրան է հանձնում այն առարկաները, որոնք օգտագործվել են հանցանքը կատարելիս, այդ թվում՝ հանցագործության գործիքները, առարկաները, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով, կամ ենթադրյալ հանցանք կատարած անձը ստացել է որպես փոխհատուցում հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների փոխարեն:²⁷⁷ Սակայն նախագիծը չի ընդունվել:²⁷⁸

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 58. Օպերատիվ ֆինանսական տեղեկատվություն հավաքող ստորաբաժանումները

Մասնակից պետությունները պետք է միմյանց հետ համագործակցեն այն իրավախախտումներից ստացված եկամուտների փոխանցումները կանխարգելելու և դրանց դեմ պայքարի նպատակներով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, ինչպես նաև այդպիսի եկամուտների առգրավման ուղիների և եղանակների օգտագործմանն օժանդակելու, և այդ նպատակներով պետք է քննարկեն օպերատիվ ֆինանսական տեղեկատվություն հավաքելու համար ստորաբաժանում ստեղծելու մասին հարցը, որը պետք է պատասխանատվություն կրի կասկածելի ֆինանսական գործառնությունների մասին հաղորդումներ ստանալու, վերլուծելու և իրավասու մարմիններին ուղարկելու համար:

Այս հոդվածը դիտարկվում է հիմնականում իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Ինչպես վերը քննարկվեց, Հայաստանում ֆինանսական հետախուզության իրավասու պետական մարմինը Կենտրոնական Բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնն է: Տարբեր փոխըմբռնման հուշագրեր են ստորագրվել ՖԴԿ-ի և ներպետական իրավասու մարմինների միջև, այդ թվում՝ ՀՀ դատախազության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ոստիկանության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ քննչական

²⁷⁷ «Քրեական գործերով իրավաբանական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, մշակվել է՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից, հանրային քննարկման է դրվել՝ 12.12.2019-27.12.2019թթ. ընթացքում, հոդված 15(1), հասանելի է՝ <<https://www.e-draft.am/projects/2182>> (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):

²⁷⁸ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 02.12.2020 թ. «Նախագիծը ներկայացվել է ԵՄ՝ իրավաբանական փորձաքննության, և վերջնական եզրակացությունը դեռ չի ներկայացվել»:

կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ինչպես նաև ՖԴԿ-ի և օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների միջև:²⁷⁹

Ինչ վերաբերվում է անօրինական ֆինանսական հոսքերի (այդ թվում՝ ՀՀ սահմաններից դուրս) հայտնաբերման և վերահսկման ոլորտում իրավասու մարմին ՖԴԿ-ի պրակտիկ գործունեությանը, որոշ փորձագետներ մտահոգություններ են հայտնում դրա արդյունավետության վերաբերյալ՝ հաշվի առնելով Հայաստանից ակտիվների հոսքերը, որը կազմում է մոտավորապես 6,2 միլիարդ ԱՄՆ դոլար:²⁸⁰

ՄԱԿ-ի ԿԴԿ Հոդված 59. Երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր և պայմանավորվածություններ

Մասնակից պետությունները պետք է քննարկեն երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ կնքելու հնարավորությունը Կոնվենցիայի սույն գլխի համաձայն իրականացվող միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման համար:

Այս հոդվածը դիտարկվում է մասամբ իրականացված, իսկ գործնականում կատարման մակարդակը՝ չափավոր:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային համագործակցության վերաբերյալ տարբեր երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի անդամ է: Տարածաշրջանային բազմակողմ պայմանագրերը ներառում են հետևյալը (ժամանակագրական հերթականությամբ)։

- Եվրոպայի խորհրդի «Եվրոպական կոնվենցիա քրեական գործերով փոխադարձ օգնության մասին», 1959թ.
- ԱՊՀ «Կոնվենցիա քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» (Մինսկի կոնվենցիա), 1992թ.
- Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության «Համաձայնագիր Սնծովյան տնտեսական համագործակցության (ՄՕՏՀ) մասնակից պետությունների կառավարությունների միջև բնական և տեխնածին աղետների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման բնագավառում համագործակցության մասին», 1998թ.
- Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիա, 2005թ.
- Եվրասիական տնտեսական միության (նախկին Մաքսային միություն) «Համաձայնագիր Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև քրեական

²⁷⁹ Ստորագրված փոխըմբռնման հուշագրերի ցանկը կարելի է գտնել «Ֆինանսական դիտարկումների կենտրոնի 2019 թվականի գործունեության մասին» տարեկան զեկույցում, Ֆինանսական դիտարկումների կենտրոն, ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2020, հավելված 3:

²⁸⁰ Հարցազրույց «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ պարոն Մովսես Արիստակեսյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի հոկտեմբերի 28-ին: *Ակնարկ «Ձարգացող երկրներից անօրինական ֆինանսական հոսքերը». 2002-2011», Global Financial Integrity, Դեվ Կար և Բրայան ԼեԲլանկ, դեկտեմբեր 2013, էջ. 24, հասանելի է՝ https://www.gfintegrity.org/wp-content/Illicit_Financial_Flows_from_Developing_Countries.pdf, (դիտվել է 25 դեկտեմբեր, 2020թ.):*

գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավական օգնության և փոխգործակցության մասին», 2010թ.:

Միջազգային համագործակցության վերաբերյալ երկկողմ համաձայնագրերը ներառում են հետևյալը (ժամանակագրական հերթականությամբ).

- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին, 1995թ.
- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև քրեական գործերով իրավական օգնության մասին, 1995թ.
- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին, 1996թ.
- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին, 1996;
- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև քրեական գործերով իրավական օգնության մասին, 1997թ.
- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության մասին, 2002թ.
- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Լիտվայի հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին, 2005թ.
- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության եվ Արաբական Միացյալ Էմիրությունների միջեվ քաղաքացիական եվ տնտեսական գործերով դատական փաստաթղթերի եվ դրանց առնչվող արտադատական փաստաթղթերի հանձնման, ապացույցների ձեռք բերման, դատական որոշումների ճանաչման եվ կատարման մասին, 2005թ.
- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջեվ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին, 2007թ.
- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցության մասին, 2009թ.
- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև քաղաքացիական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին, 2010թ.
- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին, 2010թ.
- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին, 2010թ.

- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին, 2015թ.
- Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին, 2016.:²⁸¹

Սակայն, նշված փաստաթղթերը չեն կարգավորում միջազգային ակտիվների վերականգնման բոլոր փուլերը, մասնավորապես՝ այլ երկրներ ակտիվների վերադարձման և բաշխման փուլերը: Չնայած այն հանգամանքին, որ, կառավարության ստուգաթերթում նշված է, որ Հայաստանը նախատեսում է կատարելագործել համապատասխան օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև նման քննարկումները քաղաքական օրակարգում են եղել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի մշակման ընթացքում, այդ ուղղությամբ իրականացված ակնհայտ ջանքեր չեն նկատվում:²⁸²

²⁸¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱԺ գրադարան, տե՛ս՝ <<http://www.parliament.am/library.php?page=documents&lang=arm>>:

²⁸² Հարցազրույց փաստաբան պարոն Արտաշես Խալաթյանի հետ, տեղի է ունեցել 2020թ.-ի նոյեմբերի 4-ին:

6. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զեկույցի հիման վրա ներկայացվում են հետևյալ հիմնական առաջարկությունները.

1. Ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և հարակից այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը և նախատեսել ԿԿՀ-ին որպես կենտրոնական մարմին, որը կհամակարգի և կվերահսկի Բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությունը, ներառյալ՝ նրանց համար դասընթացների կազմակերպումը:
2. Վերանայել Բարեվարքության հարցերով կազմակերպիչների ընտրության չափորոշիչները՝ դրանցում նախատեսելով հակակոռուպցիոն փորձի վերաբերյալ պահանջ:
3. Ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը՝ հանրությանը հասանելի դարձնելով ԿԿՀ-ի կողմից իրականացված հանրային ծառայողների բարեվարքության ստուգման արդյունքները՝ պահպանելով անձնական տվյալները՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
4. Ընդունել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում քաղաքական քարոզարշավների ֆինանսավորմանն առնչվող փոփոխությունների նախագիծը և նախատեսել համաչափ պատասխանատվության միջոցներ օրենսգրքի 189.13-189.16 հոդվածներով նախատեսված հաշվետվությունների ներկայացման պահանջների, նվիրատվության իրավակարգավորումների և այլ իրավախախտումների համար:
5. Ընդունել «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը և վերանայել դատավոր և ոչ դատավոր անդամների թիվը (քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, այդ թվում՝ իրավաբան գիտնականներ) Էթիկայի և կարգապահական ու կրթական հարցերի հանձնաժողովներում՝ ապահովելով կողմերի միջև հավասարակշռված և ողջամիտ ներկայացվածություն: Մասնավորապես, Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի անդամների թիվը, համաձայն «Դատական օրենսգիրք» նոր օրենքի նախագծի, պետք է լինի տասը: Ուստի խորհուրդ է տրվում հինգ տեղ հատկացնել դատավոր, իսկ մյուս հինգը՝ ոչ դատավոր անդամներին: Ինչ վերաբերում է կրթական հարցերով հանձնաժողովին, ապա առաջարկում ենք ընտրել յոթ անդամ և չորս տեղ հատկացնել դատավոր, իսկ երեքը՝ ոչ դատավոր անդամներին:
6. Ընդունել «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը և կրթական հարցերի ու գնահատման հանձնաժողովներում ոչ դատավոր անդամ առաջադրելու իրավունքը վերապահել միայն հասարակական կազմակերպություններին:
7. Ընդունել «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը և սահմանափակումներ նախատեսել ՔՀԿ ներկայացուցիչների, այդ թվում՝ իրավաբան գիտնականների համար, որպեսզի վերջիններս չկարողանան առաջադրվել որպես Էթիկայի և կարգապահության, կրթության հարցերի և գնահատման հանձնաժողովների ոչ դատավոր անդամների թեկնածու, եթե նրանք զբաղեցնում են պաշտոն, որն ուղղակիորեն փոխկապակցված է դատական համակարգի հետ:

8. Ընդունել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններ և քաղաքացիական ծառայողների, խորհրդարանի անդամների և քննիչների վարքագծի կանոններ:
9. Ազդարարներին խրախուսելու նպատակով նախատեսել «*Qui tam*» պարգևատրման հայեցակարգ:
10. Ընդլայնել ազդարարման համակարգի մասին օրենսդրությունը՝ ներառելով մասնավոր հատվածում կատարված խախտումները:
11. Իրավական կարգավիճակ շնորհել քաղաքացիական հասարակության կողմից շահագործվող այլընտրանքային ազդարարման «ԲիզՊաշտպան» կայքին:
12. Ընդունել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենսդրական փաթեթի նախագիծը, որը ներառում է ծախսերի հայտարարագրումը, հայտարարատուին փաստացի պատկանող գույքի հայտարարագրումը (անկախ սեփականության իրավունքի պետական գրանցումից), պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական պարտականությունները դադարեցնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում ներկայացվող իրավիճակային (*ad-hoc*) հայտարարագրումը՝ վերջիններիս գույքի էական փոփոխության կասկածի դեպքում (գույքի ավելացում, կամ պատասխանատվությունների և ծախսերի նվազում), ինչպես նաև թանկարժեք գույքի դրամական շեմի նվազեցումը:
13. Շարունակել հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի շարունակական ընդլայնման ուղղված աշխատանքները:
14. Ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց «ընտանիք» եզրույթի շրջանակը՝ նախատեսելով պաշտոնատար անձի հետ սերտ առնչություն ունեցող այնպիսի անձանց, ինչպիսիք են ամուսնու/կնոջ ծնողը, երեխան, եղբայրը կամ քույրը, ինչպես նաև կնքահայր-սանիկ հարաբերություններում գտնվող անձինք:
15. ԿԿՀ-ին տրամադրել հայտարարատու պաշտոնատար անձանց կենսակերպի ստուգումներ իրականացնելու լիազորություն հայտարարագրում ներառված տվյալների արժանահավատության վերլուծության նպատակով:
16. Իրականացնել վերահսկողություն առողջապահական ծախսերի, մասնավորապես՝ հրատապության կարգով բժշկական պարագաների ձեռքբերման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կանոնների գործնականում պահպանման նկատմամբ:
17. Ներդնել պետական գնումների էլեկտրոնային նոր համակարգ՝ հիմնված բաց կառավարման սկզբունքների և պայմանագրային տվյալների բաց ստանդարտի վրա, որը պարտադիր կլինի բոլոր պետական պատվիրատուների համար:
18. Մշակել պետական գնումների էլեկտրոնային համակարգի տվյալների վերլուծության հանրորեն հասանելի և մատչելի գործիքներ:
19. Ստեղծել քաղաքացիներից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, բիզնեսից և պետական պատվիրատուներից հետադարձ կապ ստանալու մեխանիզմներ գնումների ոլորտի բարեվարքությունը և արդյունավետությունը բարելավելու նպատակով:
20. Վերապատրաստել հիմնական շահագրգիռ կողմերի (քաղաքականություն մշակողներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, գիտական հաստատություններ, լրատվամիջոցներ, պետական պատվիրատուներ, բիզնեսներ) ներկայացուցիչներին պետական գնումների նորաստեղծ էլեկտրոնային համակարգը և վերջինիս մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու նպատակով:

21. Ընդունել մեկ անձից իրականացվող գնումների կիրառման նկատմամբ առավել խիստ կանոններ, հատկապես՝ հրատապության հիմքով գնումների դեպքում:
22. Բարելավել պետական գնումների բողոքարկման համակարգը՝ կա՛մ կոլեգիալ արտադատական մոդելին անցնելու և վերջինիս անհրաժեշտ աշխատակազմ տրամադրելու, կա՛մ դատական մոդելին անցնելու միջոցով:
23. Նախատեսել վերանայման հատուկ ընթացակարգ պետական գնումներում շահերի բախման և իրական սեփականատերերի մասին հայտարարագրերում ներառված տվյալների արժանահավատությունը ստուգելու համար:
24. Սահմանել նվազագույն չափանիշներ (ուղեցույցներ) գնման առարկաների որոշակի խմբի տեխնիկական բնութագրերի և դրանց ուղենիշային արժեքների համար:
25. Զարգացնել Խորհրդարանի բյուջետային գրասենյակի տեխնիկական կարողությունները՝ տրամադրելով անհրաժեշտ աշխատակազմ և պետական բյուջեից անկախ ֆինանսավորում, սահմանելով գրասենյակի գործառույթները առանձին կանոնադրությամբ և ընդլայնելով վերջինիս լիազորությունները՝ գնահատելու հարկաբյուջետային կանխատեսումները, ինչպես նաև հարկաբյուջետային կանոնների *ex-ante* (նախնական) համապատասխանությունը:
26. Ընդունել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագիծը և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը համապատասխանեցնել միջազգային լավագույն ստանդարտներին:
27. Ընդունել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծը՝ ապահովելով յուրաքանչյուր անձի անվճար հասանելիությունը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրամադրվող՝ իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվությանը:
28. Ընդունել «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը և ստեղծել իրավաբանական անձանց իրական սեփականատերերի գրանցամատյան, որը կլինի անվճար և հասանելի բոլորի համար:
29. Վերանայել նախարարություններին կից հասարակական խորհուրդների աշխատանքային պլաններն ու իրավական կարգավորումները և դրանք դարձնել առավել թափանցիկ և ներառական՝ օրակարգերի մշակման և որոշումների կայացման տեսանկյունից:
30. Ընդունել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ընդլայնել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների շրջանակը:
31. Ընդունել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և փոփոխել «իրական շահառու» եզրույթի սահմանումը՝ նախատեսելով, որ իրական շահառու է հանդիսանում այն ֆիզիկական անձը, որի անունից կամ ում համար իրականում գործում է հաճախորդը, և (կամ) ով իրականում (*de facto*) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ որի համար գործարք է իրականացվել, կամ գործարար հարաբերություններ են հաստատվել:

32. Նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:
33. Ընդլայնել իրավապահ մարմինների նախաձեռնած զուգահեռ ֆինանսական հետաքննությունների պրակտիկան:
34. Ստեղծել բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր:
35. Վերանայել ակտիվների վերադարձման վերաբերյալ ներպետական օրենսդրական դաշտը, վերացնել հակասությունները և լրացնել բացթողումները՝ ՄԱԿ-ի ԿԴԿ դրույթներին ամբողջությամբ համապատասխանեցնելու նպատակով:
36. ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության բազային հենքի վրա ստեղծել ակտիվների վերադարձման բոլոր փուլերի համար իրավասու մարմին՝ Ակտիվների վերադարձման գրասենյակ, որն իր մանդատն արդյունավետ իրականացնելու համար հաճեցած կլինի համապատասխան աշխատակազմով և այլ ռեսուրսներով:
37. Գործնականում արագացնել ակտիվների վերադարձման ջանքերի գործընթացը:
38. Բարձրացնել ակտիվների վերադարձման դրույթների կիրառման թափանցիկության մակարդակը: Կատարելագործել վիճակագրության հրապարակման նոր ներդրված մեխանիզմները՝ ներառելով փոխադարձ իրավական օգնության հայցերի հիման վրա բռնագանձված, առգրավված և վերադարձված ակտիվների, ինչպես նաև՝ ուղղակիորեն վերականգնված ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը:
39. Ստեղծել Ակտիվների շտեմարան, որը կվարվի Ապօրինի ծագման գույքի բռնագանձման վարչության կողմից՝ միտված վերադարձված ակտիվների մասին տեղեկատվություն տրամադրելուն:
40. Վերանայել փոխադարձ իրավական օգնության վերաբերյալ առկա պայմանագրերը և կնքել նոր պայմանագրեր, հատկապես՝ ակտիվների վերադարձի և բաշխման փուլերը կարգավորելու համար:
41. Իրավունք տրամադրել ՔՀԿ-ներին կամ առհասարակ քաղաքացիական հասարակությանը՝ ակտիվների վերականգնման գործերով հարուցելու դատական հայցեր:
42. Նվազեցնել քաղաքացիական կարգով բռնագրանձման ենթակա ակտիվների արժեքի շեմը:
43. Ընդունել վերադարձված ակտիվները հասարակությանը (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) վերաբաշխելու իրավական կարգավորումներ:
44. Ընդունել «Քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքը՝ այլ պետություններին ակտիվները վերադարձնելու ներպետական օրենսդրական հիմքեր ունենալու համար:

7. ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿ

Ժամանակագրական հերթականությամբ.

1. Պրն. Մովսես Արիստակեսյան, «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ:
2. Պրն. Մարատ Ատովմյան, հակակոռուպցիոն անկախ փորձագետ:
3. Տիկին Մարիամ Գալստյան, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ:
4. Տիկին Արփինե Հակոբյան, «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ:
5. Պրն. Արզուման Հարությունյան, «Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ:
6. Պրն. Արտաշես Խալաթյան, փաստաբան:
7. Պրն. Կարեն Քոչարյան, փաստաբան:
8. Պրն. Արկադի Սահակյան, իրավաբան, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ, կոալիցիայի կառավարման խորհրդի նախկին նախագահ, ՀՀ գլխավոր դատախազին առնչվող որակավորման հանձնաժողովի անդամ:
9. Պրն. Էդգար Շաթիրյան, հակակոռուպցիոն անկախ փորձագետ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին անդամ:
10. Տիկին Արփինե Եղիկյան, փաստաբան:
11. Պրն. Նարեկ Ենոքյան, հակակոռուպցիոն անկախ փորձագետ:
12. Պրն. Կարեն Զադոյան, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող:
13. Տիկին Մարիամ Զադոյան, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ:

8. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Միջազգային և ներպետական իրավական ակտեր

1. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31-ին:
2. Հայաստանի համար 2019-2022 թվականների գործողությունների երրորդ ծրագիր, ընդունված՝ ԵԽ կողմից 2019 թվականի հունվարի 9-ին:
3. ՀՀ սահմանադրություն, ընդունված՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին:
4. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված՝ 2003 թվականի ապրիլի 18-ին:
5. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 1998 թվականի հուլիսի 1-ին:
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված՝ 2018 թվականի փետրվարի 9-ին:
7. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, ընդունված՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ին:
8. «Քաղաքական կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:
9. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահաման հաշվառման մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2014 թվականի հուլիսի 21-ին:
10. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 1997 թվականի հունիսի 24-ին:
11. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2008 թվականի մայիսի 26-ին:
12. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 1998 թվականի մայիսի 5-ին:
13. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի մարտի 25-ին:
14. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի հունվարի 22-ին:
15. «Հայաստանի հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի մարտի 25-ին:
16. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի մարտի 25-ին:
17. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի մարտի 25-ին:
18. «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի ապրիլի 16-ին:
19. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի մարտի 25-ին:

20. «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ին:
21. «Ազգային ժողովի կանոնակարգի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:
22. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին:
23. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2003 թվականի սեպտեմբերի 23-ին:
24. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2012 թվականի դեկտեմբերի 22-ին:
25. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2015 թվականի հունիսի 13-ին:
26. «Գնումների մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:
27. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին:
28. «Դատախազության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի նոյեմբերի 17-ին:
29. «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2018 թվականի հունվարի 16-ին:
30. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2018 թվականի մարտի 23-ին:
31. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2018 թվականի օգոստոսի 23-ին:
32. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ին:
33. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ին:
34. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի մարտի 6-ին:
35. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2020 թվականի ապրիլի 16-ին:
36. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:
37. ՀՀ ազգային ժողովի N 267-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատանքային կարգը հաստատելու մասին», ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված:
38. ՀՀ վարչապետի N 5-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին», ընդունված՝ 2020 թվականի հունվարի 9-ին:
39. ՀՀ վարչապետի N 973-Լ որոշումը՝ «Քաղաքացիական ծառայության գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին», ընդունված՝ 2018 թվականի հուլիսի 17-ին:
40. ՀՀ առաջին փոխվարչապետի N 2 որոշումը՝ «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին», ընդունված՝ 2019 թվականի հունվարի 9-ին:

41. ՀՀ կառավարության N 878-Ն որոշումը՝ «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին», ընդունված՝ 2018 թվականի օգոստոսի 2-ին:
42. ՀՀ կառավարության N 1233-Ն որոշումը՝ «Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին», ընդունված՝ 2011 թվականի օգոստոսի 11-ին:
43. ՀՀ կառավարության N 1332-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ընդունված՝ 2019 թվականի հոկտեմբերի 3-ին:
44. ՀՀ կառավարության N 1141-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ընդունված՝ 2015 թվականի սեպտեմբերի 25-ին:
45. ՀՀ կառավարության N 1272-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ընդունված՝ 2009 թվականի հոկտեմբերի 8-ին:
46. ՀՀ կառավարության N 1522-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ընդունված՝ 2003 թվականի նոյեմբերի 6-ին:
47. ՀՀ կառավարության N 792-Ն որոշումը՝ «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին», ընդունված՝ 2018 թվականի հուլիսի 10-ին:
48. ՀՀ կառավարության N 526-Ն որոշումը՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ընդունված՝ 2017 թվականի մայիսի 4-ին:
49. ՀՀ կառավարության N 1716-Լ որոշումը՝ «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», ընդունված՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ին:
50. ՀՀ կառավարության N 526-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ընդունված՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ին:
51. ՀՀ կառավարության N 1454-Ն որոշումը՝ «Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման կարգը հաստատելու մասին», ընդունված՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ին:

52. ՀՀ կառավարության N 14 արձանագրային որոշումը՝ «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգին հավանություն տալու մասին», ընդունված՝ 2014 թվականի ապրիլի 10-ին:
53. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի N 35-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների կանոնակարգերն ընդունելու մասին», ընդունված՝ 2016 թվականի հունիսի 17-ին:
54. ՀՀ արդարադատության նախարարի N 36-Ն հրամանը՝ «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին», ընդունված՝ 2020 թվականի փետրվարի 5-ին:
55. ՀՀ ֆինանսների նախարարի N 725-Ն հրամանը՝ «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը հաստատելու մասին», ընդունված՝ 2014 թվականի հոկտեմբերի 24-ին:
56. ՀՀ ֆինանսների նախարարի N 1096-Ն հրամանը՝ «Ներքին աուդիտի կանոնակարգի օրինակելի ձևը և դրա կազմման կարգի առանձնահատկությունները հաստատելու մասին», ընդունված՝ 2012 թվականի դեկտեմբերի 12-ին:
57. ՀՀ ֆինանսների նախարարի N 265-Ա հրամանը՝ «Պայմանագիր կնքելու մասին որոշման մասին հայտարարության օրինակելի ձևը հաստատելու մասին», ընդունված՝ 2017 թվականի մայիսի 30-ին:
58. ՀՀ գլխավոր դատախազի N 60 հրամանը՝ «ՀՀ գլխավոր դատախազի 2019 թ. Դեկտեմբերի 27-ի N 77 հրամանում փոփոխություններ կատարելու մասին», ընդունված՝ 2020 թվականի հուլիսի 2-ին:
59. ՀՀ գլխավոր դատախազի N 50 հրամանը՝ «ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանում լրացումներ կատարելու մասին», ընդունված՝ 2020 թվականի հունիսի 3-ին:
60. Սահմանադրական դատարանի N ՄԴՎ-1546 որոշումը՝ «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով», ընդունված՝ 2020 թվականի հունիսի 18-ին:

Իրավական ակտերի նախագծեր

1. «Քրեական գործերով իրավական փոխօգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
2. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ:
3. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ:

4. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ:
5. «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ:
6. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ:
7. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագիծ:
8. «Քաղաքացիական ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագիծ:
9. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, Հավելված 1, «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրք»:
10. «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ:

Զեկույցներ, ուսումնասիրություններ, հետազոտություններ և այլն

1. «ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի իրականացման դիտարկման երկրորդ փուլի գործընթացի մոնիթորինգի մեխանիզմի ինքնագնահատման ստուգաթերթ, 2-րդ փուլ Հայաստան», ՀՀ ԱՆ, 2018:
2. «Հաշվետվություն Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների ընթացքի մասին», ՀՀ ԱՆ, 2020:
3. «Հաշվետվություն Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2019 թվականին կատարման ենթակա միջոցառումների ընթացքի մասին», ՀՀ ԱՆ, 2020:
4. «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018թթ. գործողությունների ծրագրով նախատեսված 2018 թվականի միջոցառումների կատարման ընթացքի տարեկան ամփոփ հաշվետվություն», ՀՀ ԱՆ, 2018:
5. «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2018թ.-ի գործունեության հաշվետվություն», ՀՀ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, 2019:
6. «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2016թ.-ի գործունեության հաշվետվություն», ՀՀ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, 2017:

7. «2019 թվականի գործունեության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի տարեկան հաշվետվություն», Ֆինանսական դիտարկումների կենտրոն, ՀՀ կենտրոնական բանկ, 2020:
8. «ՀՀ դատախազության 2019 թվականի գործունեության տարեկան զեկույց», ՀՀ գլխավոր դատախազություն, 2020:
9. ՀՀ դատախազության 2018 թվականի գործունեության տարեկան զեկույց, ՀՀ գլխավոր դատախազություն, 2019:
10. «ՀՀ հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդում 2019 թվականի գործունեության վերաբերյալ», ՀՀ հաշվեքննիչ պալատ, 2020:
11. «Գնումների հետ կապված բողոքները քննող անձի գործունեության տարեկան հաշվետվություն», Լևոն Օհանյան», 2019:
12. «Գնումների հետ կապված բողոքները քննող անձի գործունեության տարեկան հաշվետվություն», Գրիգոր Ներսիսյան, 2019:
13. «Մեթոդական ուղեցույց կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների ներկայացման մասին», ՀՀ գլխավոր դատախազություն, 2018:
14. Բարեվարքության հարցաթերթիկ, ՀՀ ԿԿՀ, 2020:
15. «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլ», ՏՀԶԿ, 2018:
16. «Գնահատման չորրորդ փուլ, Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում», ԳՐԵԿՈ-ի Հայաստանի վերաբերյալ համապատասխանության երկրորդ զեկույց, ԵՖ, 2019:
17. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի մասնակից պետությունների կոնֆերանսի թեմատիկ մշտադիտարկման զեկույց, 14-րդ հոդված («Կասկածելի ներքին գործարքների հետաձգում»), CETS թիվ 198, ԵՖ, 2019:
18. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումներ - Հայաստան. Հինգերորդ փուլի փոխադարձ գնահատման զեկույց», FATF (Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ), 2015:
19. «Ֆիսկալ թափանցիկության գնահատում Հայաստանի Հանրապետություն», Արժույթի միջազգային հիմնադրամ, 2019
20. «Հանրային կառավարման սկզբունքները» Հայաստան, SIGMA, 2019
21. «2019թ.-ի չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ քանակական մոնիթորինգ», ԻՀՍ և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա, 2020:
22. «Ներքին օրենսդրության և հակակոռուպցիոն անկախ մարմինների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն անկախ սահմանադրական մարմին ստեղծելու վերաբերյալ առաջարկություններ», ԻՀՍ, 2020:
23. Սահմանադրական հակակոռուպցիոն մարմնի/մարմինների հայեցակարգ, ԻՀՍ, 2020:
24. Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն հայտարարությունը ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 2-ի նիստում հաստատված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ

- օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծի վերաբերյալ, 2020թ.-ի ապրիլի 6:
25. «Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հայտարարությունը «ԿԿՀ մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2019թ.-ի հունիսի 25:
 26. «Տեղեկատվության ազատության վերլուծություն 2019», Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2020:
 27. «ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման աղբյուրների մշտադիտարկում», «ՀԿ Կենտրոն» ՔՀԶ ՀԿ, 2019:
 28. «Զարգացող երկրներից անօրինական ֆինանսական հոսքերը». 2002-2011», Global Financial Integrity, 2013:
 29. «Հասարակական կարծիքի ուսումնասիրություն», Միջազգային հանրապետական ինստիտուտ (IRI), 2019:
 30. «Պետական գնումների թափանցիկ վարկանիշային ցուցիչ», Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտ (IDFI), 2016, 2019
 31. Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարություն, ՄԱԹՀՊԳ, 2012:
 32. «Քաղաքացիական հասարակության այլընտրանքային զեկույցների մշակում ՄԱԿ ԿԴԿ-ի մշտադիտարկման համար. ընդհանուր տեղեկություններ, ուղեցույցներ և զեկույցի ձևանմուշ, 2-րդ փուլ, Գլուխ V (ակտիվների վերադարձ)», UNCAC կոալիցիա, Transparency International, 2020թ.:
 33. ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի տեխնիկական ուղեցույց, ՄԱԹՀՊԳ, 2009:
 34. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջինից յոթերորդ նստաշրջանների աշխատանքների վերաբերյալ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մշակման ժամանակավոր հանձնաժողովի զեկույց, 2003:

Լրագրողական հետաքննություն

1. «Դատավորների գնահատման հանձնաժողովում ոչ դատավոր անդամի թեկնածու է առաջադրվել դատական համակարգի բարձրաստիճան պաշտոնյան», հրապարակված՝ Իրավաբան.net լրատվական կայքում, 23.07.2020թ., հասանելի է. <https://iravaban.net/284048.html>
2. «Հրայր Թովմասյանի «թաքցրած» ունեցվածքը», հրապարակված՝ «1in.am» լրատվամիջոցում, 13.10.2020թ., հասանելի է. <https://www.1in.am/2640629.html>
3. «Իրավապահ համակարգի նախկին ներկայացուցչի օժանդակությամբ արդյոք պետք է ինքնամաքրվի դատական համակարգը», հրապարակված՝ Իրավաբան.net լրատվական կայքում, 27.07.2020թ., հասանելի է. <https://iravaban.net/284317.html>
4. «Մեկ անձից իրականացված գնումները շարունակում են գերակշռել պետական գնումների համակարգում», հրապարակված՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի պաշտոնական կայքում, 07.02.2020թ., հասանելի է <http://www.foi.am/hy/news/item/1862/>
5. «Արդարադատության ակադեմիայի պրոռեկտորը ունի հնարավոր շահերի բախում և բարեխիղճ չէ նրա ներգրավումը դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կազմում», հրապարակված՝ Իրավաբան.net լրատվական կայքում, 27.07.2020թ., հասանելի է. <https://iravaban.net/en/284391.html>

6. «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ՀԿ-ների ներգրավման համար հայտարարված մրցույթը անցկացվել է խախտումներով. արդյունքները չորս ՀԿ-ների մասով ոչ օրինական են», հրապարակված՝ Իրավաբան.net լրատվական կայքում, 03.08.2019թ., հասանելի է. <https://iravaban.net/en/232524.html>
7. «Ինչ ունեցվածքի են տիրապետում Սեյրան Օհանյանն ու նրա կինը», հրապարակված՝ «1in.am» լրատվամիջոցում, 16.12.2020թ., հասանելի է. <https://www.1in.am/2673657.html>
8. «Ինչո՞ւ թափանցիկ չէ ԱՆ-ի 7.4 մլրդ դրամի ծախսը կորոնավիրուսի ժամանակ. Հակակոռուպցիոն կենտրոնը ռիսկեր է տեսնում, նախարարությունից խոստանում են հրապարակել վարակից հետո», հրապարակված՝ «Ֆակտոր» տեղեկատվական կենտրոն լրատվական կայքում, 11.07.2020թ., հասանելի է. <https://factor.am/267865.html>.

Պաշտոնական պատասխաններ

1. ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 14.10.2020թ.-ին:
2. ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 02.12.2020թ.-ին:
3. ՀՀ վարչապետի քաղաքականության ծառայության գրասենյակի պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 29.09.2020թ.-ին:
4. ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական պատասխանը, տրամադրված՝ 01.10.2020թ.-ին:

Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ կառավարություն, <http://www.e-gov.am>
2. ՀՀ վարչապետի աշխատակազմ, <https://www.primenister.am/en/>
3. ՀՀ արդարադատության նախարարություն, <https://www.minfin.am/>
4. ՀՀ ֆինանսների նախարարություն, <https://www.moj.am/en/>
5. ՀՀ ազգային ժողով, <https://www.parliament.am/>
6. ՀՀ դատական համակարգ, <https://www.e-draft.am/>
7. ՀՀ գլխավոր դատախազություն, <https://www.prosecutor.am/>
8. ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, <http://cpcarmenia.am/hy>
9. ՀՀ հատուկ քննչական ծառայություն, <http://www.ccc.am/en>
10. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, <https://www.e-register.am/en/>
11. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, <https://www.elections.am>
12. ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ, <https://www.gnumner.am/en/>
13. ՀՀ վերստուգիչ պալատ, <https://armsai.am/en>
14. ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ, <https://www.unodc.org/>
15. Գնումների էլեկտրոնային համակարգ, <https://armeps.am/epps/home.do>
16. Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ, <https://azdararir.am/am/>
17. «ԲիզՊաշտպան» ազդարարման հարթակ, <https://bizprotect.am/>

18. Իրավաբանների հայկական ասոցիացիա, <https://armla.am/>
19. Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա, <http://aac.am/en>
20. Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմ, <https://anti-corruption.gov.am/>
21. Իրավաբանների հայկական ասոցիացիայի առցանց ուսուցման հարթակ, <https://elearning.armla.am/>
22. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի առցանց ուսուցման համակարգ, <https://lms.fmc.am/lms/>
23. «Իրավաբան.net» լրատվական կայք, <https://iravaban.net/>
24. «Panorama» լրատվական կայք, <https://www.panorama.am/am/>
25. «Փաստինֆո» լրատվական կայք, <https://www.pastinfo.am/hy/>
26. «Ֆակտոր» տեղեկատվական կենտրոն, <https://factor.am/>
27. «Առավոտ» լրատվական կայք, <https://www.aravot.am>
28. «Ինֆոքոմ» տեղեկատվական կայք, <https://infocom.am/>
29. «Առաջին» լրատվական կայք, www.lin.am